

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Գ Ա Վ Ա Ռ Ի Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿՈՒՄ /ԸՍՏ ՈԼՈՐՏԻ/»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀԵՌԱԿԱ ԲԱԺՆԻ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(մասնագիր և առարկայական նկարագրեր)

ԳԱՎԱՌ-2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը	5
Ծրագրի նկարագիրը	6
ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	22
ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ	54
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ	54
Պարտադիր դասընթացներ	54
Կամընտրական դասընթացներ	67
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ	73
Պարտադիր դասընթացներ	73
Կամընտրական դասընթացներ	77
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	83
Պարտադիր դասընթացներ	83
Կամընտրական դասընթացներ	162
Այլ կրթական մոդուլներ	170
Դասընթացների քարտեզագրում	183

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սիրելի՛ ուսանողներ,

բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը ձեր կարևոր սահմանադրական իրավունքն է, որի արդյունավետ իրականացումը վճռորոշ նշանակություն ունի յուրաքանչյուրիդ համար:

Ձեր կյանքում անգնահատելի դերակատարություն ունի համալսարանը, որտեղ դուք ձեռք եք բերում անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, բացահայտում ձեր ներուժը, զինվում արժեքային ճիշտ կողմնորոշումներով, կայանում որպես մասնագետ: Ուստի, դուք պետք է գիտակցաբար ստանձնեք ձեր ուսման պատասխանատվությունը և անվարան քայլեր տեսական ու գործնական խորը գիտելիքներ, օգտակար սոցիալական փորձ, հմտություններ կուտակելու ճանապարհով:

Գավառի պետական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատում ուսումնական գործընթացը կազմակերպվում է առկա և հեռակա բաժիններում, կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգեր:

2007 թվականից ԳՊՀ-ում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի համաձայն՝ «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտության գծով որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի (240 կրեդիտ՝ բակալավրիատում և 120 կրեդիտ՝ մագիստրատուրայում) կուտակման արդյունքում:

Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների, հաշվապահական ոլորտի զարգացման արդի միտումների, միջազգային չափորոշիչների և Գավառի պետական համալսարանում իրականացվող՝ «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտության բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ինչպես նաև մասնագիտական դասընթացների շնորհիվ:

«Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում մասնագիտական և ընդհանուր հումանիտար գիտելիքներ, միաժամանակ, խորացնում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն) իմացությունը, տիրապետում են տնտեսագիտական գիտելիքների, հաշվապահական հաշվառման վարման սկզբունքներին և ստանդարտներին, ֆինանսների և հաշվապահության հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերին ու կառուցակարգերին, ինչպես նաև արդյունավետ հաղորդակցման հմտություններին, արդի թվային տեխնոլոգիաներին, արհեստական բանականության գործիքներին:

Ուսուցումը կազմակերպվում է ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով ու մեթոդներով, կարևորվում են կրթության ելքային արդյունքների ձեռքբերումը, այդ նպատակով սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացումը, գործնական, սեմինար պարապմունքների ընթացքում ցուցաբերած ակտիվությունը: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

«Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտական կրթական ծրագրի շրջանավարտը կարող է աշխատել տնտեսական ընկերություններում, մասնավոր հատվածում, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, բանկային համակարգում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինքնուրույն զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև ուսումը շարունակել հաջորդ կրթական աստիճանում՝ մագիստրատուրայում:

Գավառի պետական համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մրցունակ մասնագետներ պատրաստելու համար: Ուստի, սիրելի՛ ուսանողներ, եղե՛ք նպատակասլաց ու աշխատասեր և միշտ հիշե՛ք, որ հաջողության երաշխիքը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը ներառում է դասընթացների նկարագիր, որը նախատեսված է «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտությամբ սովորող բակալավրի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Մասնագիրը ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված կրթական ելքային արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ամփոփիչ ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի, դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական ելքային արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿՈՒՄ /ԸՍՏ ՈԼՈՐՏԻ/

Մասնագիտական կրթական ծրագրի /այսուհետ Ծրագիր/ նկարագիրը

Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի, 041101.00.6
Բուիը	Գավառի պետական համալսարան
Ծրագիրը հավատարմագրված է	-
Շնորհվող որակավորումը	Տնտեսագիտության բակալավր
Կրթական աստիճանը	բակալավր
Ուսումնառության լեզուն	հայերեն
Ուսուցման ձևը	հեռակա
<p>8. Ծրագրի ընդունելության չափանիշները. Ծրագրի դիմորդը պետք է ունենա.</p> <ul style="list-style-type: none"> միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական կրթություն, ընդունելությունը կատարվում է մրցույթային կարգով մաթեմատիկա (գրավոր), հայոց լեզու (գրավոր) կամ օտար լեզու (գրավոր), և հայոց լեզու(գրավոր) կամ օտար լեզու (գրավոր) ոչ մրցույթային քննությունների աղյուսքների հիման վրա: 	
<p>9. Ավարտելու պահանջները.</p> <p>Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.</p> <ul style="list-style-type: none"> 240 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի ավարտական աշխատանքը: <p><i>Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.</i></p> <p>(Գիտելիք) ունի հիմնարար գիտելիքներ հաշվապահական հաշվառման սկզբունքների, ֆինանսական և կառավարչական հաշվառման հիմունքների, փարբեր ոլորտների կազմակերպությունների հաշվապահական հաշվառման առանձնահատկությունների վերաբերյալ</p> <p>(Կարողություն) կարող է ստացած գիտելիքները կիրառել հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվությունների կազմման, ֆինանսների կառավարման, ֆինանսական վերլուծության անցկացման ոլորտներում</p> <p>(Հմտություն) փիրապետում է հաշվապահական համակարգչային ծրագրերին, ֆինանսական վերլուծական գործիքներին կիրառում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին</p>	

Ունի բավարար գիտելիքներ և կարողություններ՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում՝ մագիստրատուրայում, ուսումը շարունակելու համար:

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

Ծրագրի նպատակները և խնդիրները

«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել հաշվապահական հաշվառման և հարկման ոլորտում հիմնարար պատրաստվածություն և վերլուծական մտածողություն ունեցող հաշվապահներ /տնտեսագետներ/, որոնց գործունեությունն ուղղված կլինի հաշվապահական հաշվառման, հարկման, ֆինանսների և տնտեսագիտության բնագավառներում իրենց գիտելիքները կիրառելու և ժամանակակից հիմնախնդիրները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար:

Ելնելով բուհի առաքելությունից՝ Կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները.

Կրթություն.

1. Ստեղծել համագործակցային միջավայր՝ իրականացնելու հաշվապահի /տնտեսագետի/ պատրաստման կրթական ծրագրի որակի ապահովման ազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն:
2. Տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հաշվապահական հաշվառման և հարկման ոլորտում հիմնարար պատրաստվածություն ձեռք բերելու համար:
3. Ձևավորել հաշվապահին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:
4. Նպաստել շրջանավարտների մրցունակությանը աշխատաշուկայում և նրա՝ որպես վերլուծական մտածողություն ունեցող հասարակության անդամի ձևավորմանը:
5. Զարգացնել ուսանողների մոտ սովորելու, նորն ընդունելու և անընդհատ կատարելագործվելու հմտություններ:

Հանրային ծառայություն

Նպաստել ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ ներգրավելով նրանց արտաքին շահակիցներին մատուցվող մասնագիտական ծառայությունների տրամադրման գործընթացին:

Կրթական ծրագրի կոմպետենցիաների շրջանակը

11.1. Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն	<u>Ուսումնառության վերջնարդյունքները</u>
Ա1. Հաշվապահական հաշվառման և հարկման հիմունքների հիմնարար գիտելիք:	Գիտի հաշվապահական հաշվառման և հարկման հիմնական նպատակները, հասկացությունները և սկզբունքները
Ա2. Մասնագիտական գործունեության օբյեկտների հիմնարար գիտելիք:	Գիտի հաշվապահական հաշվառման վարումը կանոնակարգող նորմատիվ նյութերը, հաշվապահական հաշվառման վարման տեխնիկայի կանոնները
Ա3. Հաշվապահական հաշվառման և ֆինանսների հետ առնչվող տեսությունների հիմնական հայեցակարգերի և սկզբունքների վերաբերյալ գիտելիք:	Գիտի հաշվապահական հաշվառման և ֆինանսների տեսությունը, տերմինաբանությունը և հայեցակարգերը
Ա4. Տնտեսագիտության, հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականության մակրոտնտեսագիտության, միկրոտնտեսագիտության և հանրահաշվական հիմունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք:	Գիտի ժամանակակից տնտեսագիտության, հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականության մակրոտնտեսագիտության, միկրոտնտեսագիտության հասկացությունները, կանոնները, մեթոդները:
Ա5. Հաշվապահական հաշվառման տեսության, ֆինանսական հաշվառման, կառավարչական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:	Գիտի հաշվապահական հաշվառման տեսության, ֆինանսական հաշվառման, կառավարչական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի դերը կազմակերպությունների կառավարման համակարգում:
Ա6. Հաշվապահական ստանդարտների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:	Գիտի հաշվապահական հաշվառման ստանդարտները:

Ա7. Աուդիտի իրականացման վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:	Գիտի աուդիտի անցկացման ընթացակարգերը, սկզբունքները և կանոնները:
Ա8. Քարծրագույն մաթեմաթիկայի հիմնական սկզբունքների, վիճակագրության, հավանականությունների տեսության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:	Գիտի Քարծրագույն մաթեմաթիկայի, բազմությունների տեսության, կոմբինատորիկայի, մաթեմատիկական տրամաբանության, խաղերի, գրաֆների, հավանականությունների տեսության, մաթեմատիկական վիճակագրության, մաթեմատիկական մոդելավորման և հաշվողական մաթեմատիկայի հիմնական հասկացությունները, կանոնները, մեթոդները:
Ա9. Ֆինանսական համակարգի կառուցվածքի և դրա առնչվող տնտեսագիտական հասկացությունների, ֆինանսական կառավարման առանձնահատկությունների, << մակրոտնտեսական և միկրոտնտեսական վիճակը, գների և փոխարժեքների դինամիկան, բանկային նորմատիվների վերաբերյալ գիտելիքներ:	Գիտի ֆինանսական համակարգի կառուցվածքը և դրա առնչվող տնտեսագիտական հասկացությունները, ֆինանսական կառավարման առանձնահատկությունները, համակարգում կիրառվող մեթոդները և սկզբունքները, << մակրոտնտեսական և միկրոտնտեսական վիճակը, գների և փոխարժեքների դինամիկան, բանկային նորմատիվները:

11.2. Կրթական ծրագրի գործնական մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը

Բ. Մասնագիտական գիտելիք և իմացություն	Ուսումնառության վերջնարդյունքները
Բ1. Տարբեր ոլորտների և կազմակերպչ-իրավական ձևերի կազմակերպություններում հաշվապահական հաշվառում կազմակերպելու և	Կարող է կազմակերպել և իրականացնել հաշվապահական հաշվառումը տարբեր ոլորտների և կազմակերպչ-իրավական ձևերի կազմակերպություններում:

<p>իրականացնելու գործնական գիտելիք և կարողություն:</p>	
<p>Բ2. Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքական-նությունը մշակելու գործնական գիտելիք և կարողություն:</p>	<p>Կարող է մշակել և կատարելագործել հիմնավորել կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:</p>
<p>Բ3. Արժանահավատ ֆինանսական հաշվետվություններ կազմելու գործնական գիտելիք և կարողություն:</p>	<p>Կարող կազմել արժանահավատ ֆինանսական հաշվետվություններ:</p>
<p>Բ4. հաշվապահական հաշվառման վարման ժամանակակից համակարգչային ծրագրերը և տեխնոլոգիաները կիրառելու գործնական գիտելիք և կարողություն:</p>	<p>Կարող է կիրառել հաշվապահական հաշվառման վարման ժամանակակից համակարգչային ծրագրերը և տեխնոլոգիաները</p>
<p>Բ5. կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը, վերլուծելու գործնական գիտելիք և կարողություն:</p>	<p>Կարող է վերլուծել և գնահատել կազմակերպությունների</p> <ul style="list-style-type: none"> • ֆինանսական ցուցանիշները • ֆինանսական դրությունը, • ֆինանսական ռիսկերը, • մշակել ձեռնարկության ֆինանսական ծրագրերը և բյուջեն:
<p>Բ6. Դրամական, նյութական և ֆինանսական ռեսուրսների օգտագործման ժամանակ վերահսկողական գործառույթների իրականացման սկզբունքների իմացություն:</p>	<p>Կարող է գնահատել վերահսկողական գործառույթների պահանջների պահպանումը դրամական, նյութական և ֆինանսական ռեսուրսների օգտագործման ժամանակ:</p>
<p>Բ7. Մարքեթինգային ռազմավարությունների, ֆինանսական գործիքներ և բիզնես գործընթացների, կիրառման ոլորտներում գործնական գիտելիք և կարողություն:</p>	<p>Կարող է օգտագործելու տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և բիզնես գործընթացներ,</p>

11.3. Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը

<p>Գ. Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը</p>	<p><i>Ուսումնառության վերջնարդյունքները</i></p>
<p>Գ1. Համակարգչային հմտություններ և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում. մասնագիտական ոլորտում աշխատանքները դյուրացնելու, արագացնելու և խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվություն որոնելու, մշակելու և վերլուծելու կարողություն, մաթեմատիկական բնույթի խնդիրներ լուծելու կարողություն:</p>	<p>Գիտի</p> <ul style="list-style-type: none"> • տվյալների հավաքման, պահպանման և մշակման հիմնական սկզբունքները և մեթոդները: <p>Կարող է</p> <ul style="list-style-type: none"> • հավաքել, վերլուծել և մշակել տվյալներ՝ օգտագործելով քանակական և որակական վերլուծության մեթոդներ, • կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և գործիքներ <p>Տիրապետում է</p> <ul style="list-style-type: none"> • համակարգչային հիմնական ծրագրերին (Microsoft Office փաթեթ՝ Word, Excel, PowerPoint), • համացանցային տեխնոլոգիաներին և որոնողական համակարգերին, • էլեկտրոնային գրադարանների և տեղեկատվական համակարգերի օգտագործման հմտություններին, • տվյալների վերլուծության և մշակման գործիքների կիրառման միջոցներին, • վիրտուալ հանդիպումների և հեռավար աշխատանքի հարթակների (Zoom, Teams, Slack) կիրառման գործիքներին, •
<p>Գ2. Առաջնորդություն, թիմային աշխատանք և պատասխանատվություն. թիմում ներդրում ունենալու և աշխատելու, միջառարկայական համագործակցություն իրականացնելու և այլ մասնագիտական բնագավառների ներկայացուցիչների հետ որպես փորձագետ աշխատելու,</p>	<p>Գիտի</p> <ul style="list-style-type: none"> • Թիմում աշխատելու հիմնական սկզբունքները, մեթոդաբանությունները և միջոցները: <p>Կարող է</p>

<p>աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:</p>	<ul style="list-style-type: none"> • Արդյունավետորեն կատարել որոշակի գործառույթներ թիմում, հանդես գալ նախաձեռնություններով, մասնակցել ընդհանուր թիմային որոշման կայացմանը, ստանձնել և կատարել առաջադրանքներ: • Յուրացնել և արդյունավետ կերպով կիրառել ժամանակի կառավարման, համագործակցության և թիմային աշխատանքի նոր եղանակները: • Տրամադրել խորհրդատվական-փորձագիտական օգնություն թիմի անդամներին:
<p>Գ3. Հասկանալի ու գրագետ գրավոր և բանավոր խոսք հայերեն և օտար լեզուներով մտքերը սահուն ձևով արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ, դատողություններ անելու և դրանք բանավոր և գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու կարողություն:</p>	<p>Կարող է</p> <ul style="list-style-type: none"> • գրավոր և բանավոր ներկայացնել հասարակ տեքստեր և ցուցադրություններ, ինչպես նաև առավել բարդ և գիտական տեքստեր՝ ավարտական տարում օգտագործելով հաղորդակցման տարբեր հմտություններ: • ամփոփել ներկայացնել գրավոր և բանավոր դիրքորոշումներ, պարզ և հստակ խորհրդատվություն: • հաղորդակցվել առնվազն մեկ մասնագիտական օտար լեզվով, • կազմել և թարգմանել պարզ տեքստեր մասնագիտական թեմայի շուրջ, ունենալ հաղորդակցվելու ունակություն: • կարդալ և ուսումնասիրել հայերեն և օտարալեզու մասնագիտական գրականություն, կազմել ակնարկներ, ստեղծել անձնական էլեկտրոնային գրադարան և օգտագործել աշխատանքային գործընթացում: <p>Տիրապետում է</p>

	<ul style="list-style-type: none"> մասնագիտության համապատասխան ոլորտում կիրառվող եզրույթներին, արտահայտություններին, գործնական միջոցներին: սեփական աշխատանքի արդյունքների ներկայացման, տեղեկատվության պատկերավորման ժամանակակից մոտեցումներին:
<p>Գ4. Հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, բնագիտական բնագավառի դասընթացների հիմնական դրույթների իմացություն:</p>	<p>Գիտի</p> <ul style="list-style-type: none"> հումանիտար, բնագիտական և տնտեսագիտական գիտությունների ոլորտներում կիրառվող ընդհանուր հասկացությունները, սահմանումները: <p>Կարող է</p> <ul style="list-style-type: none"> կիրառել սեփական գիտելիքները տարբեր ոլորտներում, պահպանելով տեխնիկական, տնտեսական, իրավական, սոցիալական և էկոլոգիական, կենսագործունեության անվտանգության պահանջները, դրսևորել քննադատական և հիմնավորված վերլուծական մոտեցում՝ մասնագիտական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար: հաշվի առնել մասնագիտական աշխատանքի հնարավոր հետևանքները: մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում: <p>Տիրապետում է</p>

	<ul style="list-style-type: none"> վերոնշյալ բնագավառների ուսումնասիրության մեթոդներին ու մոտեցումներին:
<p>Գ5. Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն և անհրաժեշտության դեպքում 1-ին բուժօգնության ցուցաբերելու, ֆիզիկական դաստիարակության նորմերի տիրապետում:</p> <p>:</p>	<p>Գիտի</p> <ul style="list-style-type: none"> Անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները: Բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները: Արտակարգ իրավիճակներում անվտանգ վարվելակերպը և բնակչության պաշտպանության հիմունքները: <p>Կարող է</p> <ul style="list-style-type: none"> Ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում, զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին: Իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին անհետաձգելի բժշկական օգնություն: <p>Տիրապետում է</p> <ul style="list-style-type: none"> կայուն զարգացման ռազմավարությանը, անվտանգության կառավարման համակարգերին,

	<ul style="list-style-type: none"> անհատական պաշտպանական միջոցների կիրառության սկզբունքներին և կոլեկտիվ պաշտպանության հիմունքներին, արտակարգ իրավիճակների ժամանակ շտապ բժշկական օգնության կազմակերպման ձևերին ու եղանակներին:
<p>Գ6. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու կազմակերպական կարողություն:</p>	<p>Կարող է</p> <ul style="list-style-type: none"> ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքը, նպատակաուղղված շարունակել ուսումնառությունը, պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը, ուսումնասիրել մասնագիտական գրականությունը, բարելավել մասնագիտական գործունեությունը և ինտեգրվել հարափոփոխ և պահանջկոտ աշխատանքային միջավայրին, <p>Տիրապետում է</p> <ul style="list-style-type: none"> բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում ինֆորմատիկայի բնագավառում ուսումնառությունը շարունակելու համար:

12.1. Դասավանդման մեթոդներ.

- Դասախոսություն

- Գործնական աշխատանք
- Սեմինար պարապմունք
- Բանավեճ-քննարկում, հարց ու պատասխան,
- Հեռահար ուսուցման մեթոդներ
- Խորհրդատվություններ
- Վերլուծություններ
- Պրոբլեմային ուսուցման մեթոդ
- Իրավիճակային վերլուծություններ /case-study/:

12.2. Ուսումնառության մեթոդներ

- Դասախոսության նյութի յուրացում
- Գրականության ուսումնասիրում
- Հետազոտական մեթոդ
- Որոնողական մեթոդ
- Ինքնուրույն հետազոտության մեթոդ
- Կուրսային աշխատանքների կատարում և գեկուցում
- Նախագծային բնույթի աշխատանք (անհատական կամ խմբային)
- Գործնական-կիրառական ուղղվածություն ունեցող հանձնարարականների կատարում
- Խնդիրների և վարժությունների լուծում

13.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա9 գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Բ1-Բ7 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ

- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները.

Ուսանողների Գ1-Գ7 ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ:

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- տեսալսողական կաբինետ,
- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ուսումնամեթոդական կաբինետներ,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ

- ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները պետք է ապահովվեն ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:
- Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
- ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:

- Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և/ կամ էլեկտրոնային հրատարակություններով:

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բակալավրի մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը ապահովվում է գիտամանկավաժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասավանդվող առարկային համապատասխան մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան) և իրականացնում են գիտական կամ գիտամեթոդական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում, այդ թվում՝ մասնագիտական առարկաների գծով: Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ կազմակերպությունների, հիմնարկությունների, ձեռնարկությունների աշխատակիցների համակազմից:

«Հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի» կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա հետևյալ բնութագրերը.

Մասնագետի բնութագիր.

Անձնային որակներ.

1. Տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և պատշաճ վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների գիտելիքներն ու ներուժը օբյեկտիվ գնահատելու կարողություններ:

Մանկավարժական որակներ.

1. Մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, ՀՀ գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն և դրանց ներկայացման, մեկնաբանման, վերլուծության կարողություն, ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացում, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում, ուսումնառողների սովորելու դրդապատճառների ձևավորում և խթանում, դասավանդման նպատակների և խնդիրների ձևակերպման կարողություն, դասընթացի ծրագրի կազմման և մշակման կարողություն:

Կազմակերպչական բնութագիր.

1. Ուսուցման լավագույն ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցության մոդելավորման կարողություն,
2. Վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն,
3. Անհրաժեշտ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,
4. Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման կարողություն:

Հաղորդակցական հմտություններ.

1. Խոսքի բարձր մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն,
2. Մանկավարժական հաղորդակցման մշակույթի զարգացում:

Համակարգչային ծրագրերի իմացություն

1. Համակարգչային ծրագրերի ազատ տիրապետում և դասավանդման գործընթացում դրանք կիրառելու հմտություն:

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսագիտության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու տնտեսագիտության մագիստրոսի որակավորման աստիճան,
- ասպիրանտուրայում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ, ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնագավառներն են.

«Հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես տնտեսագիտության բնագավառի մասնագետ՝ հաշվապահ, ֆինանսիստ, հանրային ծառայող, խորհրդատու մասնավոր ընկերություններում, կարող են զբաղեցնել այլ պաշտոններ պետական կառավարման համակարգում, տեղական ինքնակառավարման մարմիններում:

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են դիմորդների շրջանում մասնագիտության նկատմամբ եղած պահանջարկը, հանրապետական և մարզային տարբեր հաստատություններում աշխատատեղի հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ պետական կառավարման համակարգում աշխատելու փորձը, գործատուներից ստացված դրական կարծիքները, ԳՊՀ գործընկեր եվրոպական բուհերում տնտեսագետ ուսանողների սովորելու հնարավորությունը, բակալավրի որակավորմամբ տնտեսագետների՝ մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորելու հնարավորությունը, բուհի Հաշվապահական հաշվառման ամբիոնի կադրային համալրվածությունը, ոլորտի պրակտիկ մասնագետներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավումը, «Հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի՝ մասնագիտական կրթական ծրագրով սովորողների համար պրակտիկայի բազայի առկայությունը՝, տնտեսագետ մասնագետներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանեցման շարունակական աշխատանքը, ՀՀ Սահմանադրության, օրենքների փոփոխություններին համապատասխան կրթական ծրագրի բովանդակության վերանայումն ու արդիականացումը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ «Learn.GSU» համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ «E-Library.GSU» առկայությունը: Ծրագրի կայունությանը սպառնում են ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալական անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդագրական բացասական միտումները, դիմորդների թվի զգալի նվազումը, ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը:

Մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը հաղթահարելու և կայունությունը ապահովելու միջոցներ ենք համարում ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցումը ԳՊՀ-ի և տարբեր հիմնադրամների կողմից, ուսանողների համար կազմակերպվող օտար լեզվի լրացական դասընթացները, ամառային և ձմեռային դպրոցները, ՏՀՏ-ների ընձեռած հնարավորությունների օգտագործումը, հեռավար դասերի անցկացումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին ուսանողների մասնակցությունը, <<Հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի>> մասնագիտական կրթական ծրագրի բարելավման նպատակով բենչմարքինգի գործիքների կիրառումը:

Միաժամանակ, կրթական ծրագիրը զերծ չէ ռիսկայնությունից: Բացասական գործոններ են «Հաշվապահական հաշվառում և հարկում ըստ ոլորտի» մասնագիտության գծով պետպատվեր (անվճար) տեղերի սակավությունը և այդ մասնագիտության գծով ԳՊՀ-ում

ասպիրանտուրայի բացակայությունը: Ծրագրի կայունությանը սպառնում են ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալական անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդագրական բացասական միտումները, դիմորդների թվի զգալի նվազումը, հաշվապահական հաշվառման բաժնի ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը:

Մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը հաղթահարելու և կայունությունը ապահովելու միջոցներ ենք համարում ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցումը ԳՊՀ-ի և տարբեր հիմնադրամների կողմից, ուսանողների համար կազմակերպվող օտար լեզվի լրացական դասընթացները, հեռավար դասերի անցկացումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին ուսանողների մասնակցությունը, «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտական կրթական ծրագրի բարելավման նպատակով բենչմարքինգի գործիքների կիրառումը:

ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 48 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համառ ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության

ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործություն չկա:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի կրթական ծրագրի աշխատաժավալը

ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում հեռակա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Հեռակա ուսուցման կրթական ծրագրերի նորմատիվային կիսամյակային բեռնվաճությունը կազմում է 24 կրեդիտ՝ անկախ հայցվող որակավորման աստիճանից: Ուսանողի կիսամյակային փաստացի ուսումնական բեռնվաճությունը սահմանվում է 15-24 կրեդիտ:

Հեռակա ուսուցման կրթական ծրագրերով նախատեսված լսարանային պարապմունքների տարեկան նորմատիվային ժամաքանակն առնվազն 160 ժամ է:

Հեռակա ուսուցման ձևում կիսամյակի տևողությունը 16 շաբաթ է, որից 12-ը հատկացվում է ուսումնական պարապմունքներին և ինքնուրույն աշխատանքին, իսկ 4 շաբաթը՝ քննաշրջանին: Լսարանային պարապմունքների գումարային տևողությունը ուսումնական տարում կազմում է առնվազն 8 շաբաթ:

Ռեֆերատների, կուրսային աշխատանքների և նախագծերի, գրավոր առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքների ստուգման ու գնահատման ընթացակարգերը սահմանում է համալսարանը՝ ելնելով մասնագիտական և հայցվող որակավորման առանձնահատկություններից:

Ստուգարքներին և եզրափակիչ քննություններին մասնակցելու թույլտվություն են ստանում այն ուսանողները, ովքեր հանձնել են ուսումնական պլանով տվյալ դասընթացի համար նախատեսված ինքնուրույն աշխատանքի բոլոր բաղկացուցիչները:

Հեռակա ուսուցման ուսանողի հեռացումը կամ վերականգնումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի:

Հեռակա ուսուցման ուսանողի շարժունությունն իրականացվում է համաձայն «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի:

Հեռակա ուսուցման ձևով կրեդիտային համակարգում յուրաքանչյուր դասընթացի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ հետևյալ գործոնների և դրանց կշիռների հիման վրա. հաճախումներ, ընթացիկ ակտիվություն, մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ քննություններ (կամ ստուգարք), սեմինար, գործնական և

լաբորատոր աշխատանքներին ակտիվություն, ինքնուրույն հետազոտական աշխատանք: Գործոնները գնահատվում են 100 միավորանոց համակարգով:

Ուսանողների գիտելիքների ստուգումները կատարվում են քննությունների և ստուգարքների միջոցով՝ ըստ սահմանված ժամանակացույցի կամ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով, քննությունները՝ կիսամյակի ընթացքում երկու անգամ (մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ), իսկ ստուգարքները՝ կիսամյակի ընթացքում մեկ անգամ: Քննաշրջանից հետո ստուգարքներ և /կամ/ քննություններ կազմակերպվում են լուծարային շրջաններում, ինչպես նաև առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաժամալը 240 կրեդիտ է:

3.Դասընթացները և կրթական մոդուլները

Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով: Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների: Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

բ) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

ա) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ՝ ազատ:

4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է երեք հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	26	14
Պարտադիր	24	12
Կամընտրական	2	2
Ընդհանուր մաթեմատիկական և քնագիտական	7	4
Պարտադիր	5	2
Կամընտրական	2	2
Ընդհանուր մասնագիտական Կուրսային աշխատանքներ	178	54
	5	5
Պարտադիր	168	51
Կամընտրական	15	8
Կրթական այլ մոդուլներ	24	2
Ընդամենը	240	77

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

4.1.2. Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու բաղկացուցիչ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍ պարտադիր դասընթացներ.

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 2

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) ²	Կիսամյակ	Գնահատման ձևը
-----------------	--------	-------------------------------------	----------	---------------

Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	10(8/2/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	10(8/2/0)	2	քննություն
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	10 (4/6/0)	1	ստուգարք
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	2	10(4/6/0)	2	քննություն
Օտար լեզու /անգլերեն/ -1	2	10(0/10/0)	1	ստուգարք
Օտար լեզու /անգլերեն/ -2	2	10(0/10/0)	2	քննություն
Ռուսաց լեզու-1	2	10(0/10/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-2	2	10(0/10/0)	2	քննություն
Փիլիսոփայության հիմունքներ	2	12(10/2/0)	7	ստուգարք
Քաղաքագիտության հիմունքներ	2	10(8/2/0)	3	ստուգարք
Իրավագիտության հիմունքներ	2	10(8/2/0)	4	ստուգարք
Հետազոտության մեթոդաբանություն	2	12(10/2/0)	8	ստուգարք

² Այսուհետ՝ դ - դասախոսություն, գ -գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

³ Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

ԸՀՍՏ կամընտրական դասընթացներ

ՀԱՏ կամընտրական դասընթացների ցանկը ներառում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Աղյուսակ 3

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մշակութաբանության հիմունքներ	2	10(8/2/0)	7	ստուգարք
Կրոնագիտության հիմունքներ				

4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 4

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2	12 (6/6/00)	1	ստուգարք
Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	3	12 (8/4/00)	2	ստուգարք

ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ 5

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ	2	10(8/2/00)	2	ստուգարք
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր				

4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում «Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/» մասնագիտության գծով:

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ շրջանավարտի պատրաստմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտական մոդուլ-դասընթացների համար ներկայացված են ստորև.

Աղյուսակ 6

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Արդյունաբերական ճյուղերի տեխնոլոգիական համակարգեր	4	12 (10/2/0)	1	քննություն

Գործարարության բարոյագիտություն և հոգեբանություն	2	10 (8/2/0)	3	ստուգարք
Վիճակագրություն	4	12 (10/2/0)	3	քննություն
Տնտեսամաթեմատիկական մոդելավորում	2	12 (10/2/0)	4	քննություն
Կոմերցիա և լոգիստիկա	4	18 (12/6/0)	4	քննություն
Միկրոտնտեսագիտություն-1	3	14 (10/4/0)	3	ստուգարք
Միկրոտնտեսագիտություն-1	4	14 (10/4/0)	4	քննություն
Կուրսային աշխատանք Միկրոտնտեսագիտություն	1		4	քննություն
Մակրոտնտեսագիտություն	4	18 (14/4/0)	6	քննություն
Սոցիոլոգիա	2	12(10/2/0)	9	ստուգարք
Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառումում	5	10(8/2/0)	5	ստուգարք
Մենեջմենթ	4	18 (14/4/0)	5	քննություն
Մարքեթինգ	4	16 (10/6/0)	4	քննություն
Աշխատանքի տնտեսագիտություն	3	14(10/4/0)	3	քննություն
Բնապահպանություն և բնօգտագործման տնտեսագիտություն	4	14(10/4/0)	4	քննություն
Տնտեսագիտության տեսություն 1	4	12(10/2/0)	1	ստուգարք
Տնտեսագիտության տեսություն 2	4	12(10/2/00)	2	քննություն
Տնտեսագիտության տեսություն 3	2	14(10/4/0)	3	քննություն

Կուրսային աշխատանք Տնտեսագիտության տեսություն	1		3	քննություն
Միջազգային տնտեսական հարաբերություններ	3	18(14/4/0)	6	քննություն
ՀՀ հարկային համակարգ	5	20 (16/4/0)	5	քննություն
Ֆինանսներ-1	4	16 (12/4/0)	6	ստուգարք
Ֆինանսներ-2	3	12 (10/2/0)	7	քննություն
Ֆինանսական մենեջմենթ-1	2	12 (10/2/0)	8	ստուգարք
Ֆինանսական մենեջմենթ-2	4	16 (12/4/0)	9	քննություն
Գնումների գործընթացի կազմակերպում	2	12 (10/2/0)	7	ստուգարք
Հաշվապահական հաշվառման տեսություն	4	14 (10/4/0)	2	քննություն
Ֆինանսական հաշվառում- 1	4	16 (12/4/0)	3	ստուգարք
Ֆինանսական հաշվառում -2	3	16 (10/6/0)	4	քննություն
Տնտեսական գործունեության վերլուծություն-1	5	22(16/6/0)	5	ստուգարք
Տնտեսական գործունեության վերլուծություն-2	4	16(10/6/00)	6	քննություն
Կուրսային աշխատանք Տնտեսական գործունեության վերլուծություն	1		5	քննություն
Կառավարչական հաշվառում-1	5	20 (14/6/0)	5	քննություն
Կառավարչական հաշվառում-2	4	16 (12/4/0)	6	քննություն
Կուրսային աշխատանք Կառավարչական հաշվառում	1		5	քննություն
Աուդիտ- 1	4	14 (10/4/0)	7	ստուգարք
Աուդիտ- 2	3	16 (12/4/0)	8	քննություն

Կուրսային աշխատանք Աուդիտ	1		8	քննություն
Բարձրագույն մաթեմատիկա 1	4	14 (10/4/0)	1	քննություն
Բարձրագույն մաթեմատիկա 2	3	14 (10/4/0)	2	քննություն
Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	3	12(10/2/0)	3	քննություն
Հաշվապահական հաշվառման ստանդարտներ-1	4	12 (10/2/0)	8	ստուգարք
Հաշվապահական հաշվառման ստանդարտներ-2	5	20 (14/6/0)	9	քննություն
Հարկային հաշվառում-1	3	12(6/6/00)	8	ստուգարք
Հարկային հաշվառում-2	4	16(8/8/00)	9	քննություն
Տնտեսական աշխարհագրություն	2	10(8/2/0)	1	ստուգարք
Գործավարությունը հաշվապահությունում	3	14(10/4/00)	7	ստուգարք
Հաշվապահական հաշվառու-մը համակարգչային ծրագրերով-1	4	16 (8/8/0)	7	ստուգարք
Հաշվապահական հաշվառու-մը համակարգչային ծրագրերով-2	4	18 (6/12/0)	8	քննություն
Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում-1	3	12 (8/4/0)	8	ստուգարք
Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում-2	4	20 (14/6/0)	9	քննություն

ԸՄ կամընտրական դասընթացներ

ԸՄ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ 7

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ֆինանսական հաշվետվություններ-1	4	16(12/4/00)	6	ստուգաթղթ
Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ-1				
Ֆինանսական հաշվետվություններ-2	4	14(10/4/00)	7	քննություն
Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ-2				
Հաշվապահական հաշվա-ռումը և հարկումը բանկերում-1	2	12(10/2/00)	8	ստուգաթղթ
Վճարահաշվարկային համակարգեր-1				
Հաշվապահական հաշվա-ռումը և հարկումը բանկերում-2	5	16(10/6/00)		
Վճարահաշվարկային համակարգեր-2				

Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ 8

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանայի ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Արտադրական պրակտիկա	12	-	10	քննություն
Ամփոփիչ ատեստավորում՝ ավարտական աշխատանքի պաշտպանություն	12	-	10	քննություն

5. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրսղեկների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերի քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

ԳՊՀ՝ կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրիատի կրթական ծրագրերում հեռակա բաժնում ընդգրկված ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար ընդունվում է ներքոհիշյալ աղուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 9

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86
Լավ	B+	3,3	75-80
	B	3,0	67-74
	B-	2,7	61-66
Բավարար	C+	2,3	55-60
	C	2,0	46-54
	C-	1,7	40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

ա/ Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 10

h/h	Գործոններ	Միավորներ
1.	Հաճախումներ	20
2.	Միջանկյալ քննություն	20
3.	Ընթացիկ ակտիվություն և ինքնուրույն հետազոտական աշխատանք	25
4.	Վերջնական հանրագումարային քննություն	35
	Ընդամենը	100

բ/ Ստուգարքով ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 11

h/h	Գործոններ	Միավորներ
-----	-----------	-----------

1	Հաճախումներ	20
2	Ընթացիկ ակտիվություն և ինքնուրույն հետազոտական աշխատանք	35
3	Վերջնական հանրագումարային ստուգում	45
	Ընդամենը	100

գ/ Կուրսային աշխատանք

Աղյուսակ 12

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորներ
1	Բովանդակության ամբողջականությունը (լիարժեքությունը)	30
2	Կատարման ինքնուրույնությունը	25
3	Համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	15
4	Ներկայացման և պաշտպանության որակը	30
	Ընդամենը	100

դ/ Նախաավարտական պրակտիկա /քննություն/

Աղյուսակ 13

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորը	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	30	գնահատման ժամանակ 30 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների

			թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Աշխատանքային պլանի կատարում	30	Գնահատումը իրականացվում է կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և պաշտպանություն	40	

ե/ Ավարտական աշխատանքի պաշտպանություն

Աղյուսակ 14

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+/1,7 – 4,0

h/h	Գործոններ	Միավոր
1	Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները,	10

	հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	
4	Ավարտական աշխատանքի ներկայացումը, պաշտպանությունը	30

6.1 Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը՝ կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում,
- հանրագումարային ստուգում:

6.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում

6.2.1. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային ստուգողական աշխատանքները, իսկ ինքնուրույն հետազոտական աշխատանքը կարող է ստուգվել հետազոտությունների արդյունքների, շնորհանդեսների, գեկուցումների, թեստերի, կատարված հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

6.2.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

6.2.3. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն հետազոտական աշխատանքի

արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ընթացքում ուսանողներին ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

6.2.4. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքները:

6.2.5. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատում:

6.2.6. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

6.2.7. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի աղյուսակ 2-ում և 3-ում «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների արդյունքներից:

6.2.8. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և

Օրինակ 2-ում (քննությանը ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյունների միավորների բազմապատկման արդյունքում).

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 1.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5 սյունակի միավորը.= 3 սյունակ *4 սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			

Ընդամենը	25,2=26
/Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/	

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5 սյունակի միավորը.= 3 սյունակ * 4 սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			

Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/	12,8=13
--	---------

Այսպիսով, $V_{\text{ընթ}} = Y_x * Q_x$, որտեղ

$V_{\text{ընթ}}$ -ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Y_x -ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Q_x -ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի $/0,4+0,4+0,2=1/$, $/0,4+0,6=1/$:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

6.3. Միջանկյալ ստուգում

6.3.1. Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

6.3.2. Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /Թեմաների/ գնահատականները:

6.3.3. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով:

6.3.4. Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.3.5. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

6.4. Հանրագումարային ստուգում

6.4.1. Հանրագումարային ստուգման ձևերն են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն չի անցկացվում/:

6.4.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

6.4.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.4.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

6.4.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

Առանձին դեպքերում կարող է թույլատրվել հաճախումների լրացում՝ առկա բաժնի համապատասխան մասնագիտության նույն դասընթացներին մասնակցելու, լրացուցիչ առաջադրանք կատարելու կամ դասախոսի կողմից սահմանված այլ ձևով:

6.4.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 20-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

6.4.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

6.4.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերաբերյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

6.4.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

7.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ

կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

7.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

7.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ✗ ծրագրային կրեդիտների քանակը,
- ✗ որակավորման կրեդիտների քանակը,
- ✗ վարկանիշային միավորները,
- ✗ միջին որակական գնահատականը:

7.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

7.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$\text{ՈԿ} = \sum \text{Կրեդիտ}$$

7.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ} \cdot \text{Գարդ.}$$

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ $3,0 = 6 \cdot 8$ հնարավորից):

7.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

7.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

8. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

8.1 Լուծարք

8.1.1 Լուծարքը կազմակերպվում է երեք գործոնների փաստացի արդյունքներով, ապա դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում։

8.1.2 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար։

8.1.3 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25-ի և պակաս՝ 40-ից։

8.1.4 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

8.1.5 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը (ները) և/կամ ստուգարքը (ները) կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

8.2 Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

8.2.1 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, իսկ հանրագումարային գնահատականի արժեքը պակաս է 25-ից,

8.2.2 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, հանրագումարային գնահատականի արժեքը ավել կամ հավասար է 25-ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

8.2.3 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

9. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

9.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

9.2 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա հանրագումարային գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

9.4 Հարգելի պատճառով ստուգարքին, եզրափակիչ քննությանը և լուծարքին չներկայացած ուսանողը կարող է առարկայական պարտքերը հանձնել անհատական ժամանակացույցով:

9.5 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մտնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

10. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

10.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ:

10.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

10.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,

դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

10.4. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ 8-ի և Աղյուսակ 13-ի:

11. Ծրագրի ավարտական պահանջները

11.1 Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

11.2 Մինչև ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ: Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 39 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 36 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 9 կրեդիտ՝ ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 6 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), հատուկ մասնագիտական դասընթացներից՝ 10 կրեդիտ և առնվազն 18 կրեդիտ՝ պրակտիկայից և ամփոփիչ ատեստավորման ձևերից /ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում/:

11.3 Մնացած 171 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին (մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել տվյալ մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

11.4 Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

12. Կրեդիտների փոխանցումը

12.1 Այլ բուհերից ԳՊՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

12.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

12.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2025 թվականի ուսումնական տարի

Ձմեռային կիսամյակ

Աղյուսակ 15

8 հունվարի 2025թ. – 26 հունվարի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	8 հունվարի

Միջանկյալ քննություն	դասացուցակին համապատասխան
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	դասացուցակին համապատասխան
Ստուգարքների հանձնում	05 փետրվարի – 16 փետրվարի
Ուսուցման ավարտ	26 հունվարի
Քննաշրջան	19 փետրվարի – 09 մարտի

Ամառային կիսամյակ

Այդուսակ 16

4 հունիսի – 22 հունիսի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	4 հունիսի
Միջանկյալ քննություն	դասացուցակին համապատասխան
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	դասացուցակին համապատասխան
Ստուգարքների հանձնում	3 սեպտեմբերի – 20 սեպտեմբերի
Ուսուցման ավարտ	22 հունիսի
Քննաշրջան	24 սեպտեմբերի – 12 հոկտեմբերի
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	07 մայիսի- 31 մայիսի
Արձակուրդներ	29 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

1.1 Պարտադիր դասընթացներ

Հայոց պատմության հիմնահարցեր

Դասընթացի նպատակը.

- Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանի վերաբերյալ,
- ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ,
- դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի,
- որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում,
- որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում,
- հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում,
- Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձևավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատևման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտենա- ուսանողը խորը և համակողմանի գիտելիքներ ունենա մեր ժողովրդի բազմադարյան պատմության վերաբերյալ:

Կարողանա- քննական և ինքնուրույն մոտեցումներ ցուցաբերի պատմական երևույթները գնահատելու առումով:

Տիրապետի- երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, հասկանա ու արժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը պատմական զարգացումների հետ:

23/Բ20- Հայոց պատմության հիմնահարցեր -1 (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտենա - ուսանողը պետք է համակողմանի ու խոր գիտելիքներ ունենա հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի վերաբերյալ:

Կարողանա - քննական ու ինքնուրույն մոտեցումներ ձևավորել հին և միջնադարյան ժամանակաշրջանի պատմական երևույթները գնահատելու առումով:

Տիրապետի - հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանների երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, հասկանա ու արժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը հետագա պատմական զարգացումների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց հայրենիքը և հայ ժողովրդի կազմավորումը: **Թեմա 2.** Վանի թագավարություն: **Թեմա 3.** Երվանդունիների պետությունը: **Թեմա 4.** Արտաշեսյանների թագավորությունը: **Թեմա 5.** Արշակունիների թագավարությունը: **Թեմա 6.** Հայկական մշակույթը 4-9-րդ դդ.: **Թեմա 7.** V դարի ազգային ազատագրական շարժումները: **Թեմա 8.** Բագրատունիների թագավորությունը: **Թեմա 9.** Հայաստանը Ջաքարյանների օրոք: **Թեմա 10.** Կիլիկիայի հայկական պետությունը:

2303/Բ21 Հայոց պատմության հիմնահարցեր-2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ *սեմինար*)

2-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայ ազգային ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Հայկական հարցի առաջացումը: **Թեմա 3.** Հայ ազգային-քաղաքական կուսակցություններ: **Թեմա 4.** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին. հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում: **Թեմա 5.** Հայոց ցեղասպանությունը: **Թեմա 6.** Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920թթ.): **Թեմա 7.** Խորհրդային Հայաստան: **Թեմա 8.** Հայաստանի անկախության գործընթացը. ՀՀ հռչակումը: **Թեմա 9.** Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

Հայոց լեզու և խոսքի մշակույթ

22/Բ39 Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1 (2 կրեդիտ)

10 ժամ (4 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգաբար

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի հնչյունական կազմի, ուղղագրության և ուղղախոսության, իմաստաբանության, բառապաշարի, բառակազմության, դարձվածաբանության, բառարանագրության, ձևաբանական իրողությունների վերաբերյալ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն).

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը,
2. ուղղագրության, ուղղախոսության օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. հայերենի բառագիտական, ձևաբանական նորմերը, նրանց գործածության առանձնահատկությունները,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. ներկայացնել հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը,
2. պահպանել ուղղագրության, ուղղախոսության օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. հասկանալ հայերենի բառագիտական, ձևաբանական նորմերը, նրանց կիրառական առանձնահատկությունները,

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը ներկայացնելու,
2. բառերը ճիշտ գրելու, արտասանելու,
3. հայերենի բառագիտական, ձևաբանական նորմերը գործնականում ճիշտ կիրառելու, հմտությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Զարգացման փուլերը, բարբառներ: Հայերենը որպես ազգային, պետական և գրական լեզու: **Թեմա 2.** Հնչյունաբանություն: Հայերենի հնչյունական համակարգը: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Երկհնչյուններ: Ուղղագրության և ուղղախոսության օրինաչափություններն ու առանձնահատկությունները: **Թեմա 3.** Վանկը և շեշտը հայերենում: Վանկատման և տողադարձի օրինաչափություններն ու առանձնահատկությունները: **Թեմա 4.** Շեշտից կախված հնչյունափոխություն: **Թեմա 5.** Հայերենի բառապաշարի դասակարգումը, հարստացման ուղիները, բառապաշարային շերտեր, մասնագիտական բառապաշար: Տերմիններ. նորակազմություններ և օտարաբանություններ **Թեմա 6.** Իմաստափոխություն. Հոմանիշ, համանուն, հարանուն, հականիշ բառերի գործածության առանձնահատկությունները: **Թեմա 7.** Բառակազմություն: Բառերի տեսակներն ըստ կազմության: Բառակազմական կաղապարների վերլուծություն: Բառի կազմության սխալ ընկալում: **Թեմա 8.** Բարդությունների տեսակները. Բառերի գծիկով,

անջատ, միասին գրության կանոնները. Բառերի գրության ձևերի հիմնավորումը. հապավական բարդություններ և համառոտագրություններ: **Թեմա 9.**Դարձվածքների տեսակները, գործածության առանձնահատկությունները. **Թեմա 10.** Խոսքի մասեր, դրանց դասակարգման հիմունքները: Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր: **Թեմա 11.** Բառագործածության և քերականական սխալներ: **Թեմա 12.** Գոյականի խոսքիմասային և գործածության առանձնահատկությունները /անձնանիշ և իրանիշ, հավաքական, անեզական, հոգնակերպ գոյականներ/, Գոյականի հոգնակի թվի կազմության սկզբունքները, հոլովական տարբերակային ձևեր, որոշյալ և անորոշ առումներ: **Թեմա 13.** Ածականի, թվականի, դերանվան, մակբայի խոսքիմասային և գործածության առանձնահատկությունները: **Թեմա 14.** Ածականի, թվականի, դերանվան, մակբայի գործածության տարբերակային ձևեր: **Թեմա 15 .** Բայի խոսքիմասային և գործածության առանձնահատկությունները: **Թեմա 16.** Քերականական և վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի /կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն/գործածության առանձնահատկությունները: **Թեմա 17.** Բառագործածության և քերականական սխալներ:

22/Բ40 Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2 (2 կրեդիտ)

10 ժամ (4 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի շարահյուսական իրողությունների, փոխակերպվող կառույցների և փոխակերպման ձևերի, կետադրության կանոնների վերաբերյալ, ծանոթացնել խոսքի դրսևորման ձևերին, զարգացնել ուսանողների՝ քերականորեն և ոճական առումով ճիշտ խոսք կառուցելու կարողությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, մասնագիտական տեքստերի հետ աշխատելու, դրանք խմբագրելու, սեղմելու, վերաշարադրելու կարողությունների զարգացմանը:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն).

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. հայերենի շարահյուսական նորմերը, նրանց գործածության առանձնահատկությունները, կետադրական կանոնները, կիրառական առանձնահատկությունները,
2. նախադասությունների փոխակերպումների ձևերն ու յուրահատկությունները,

3. ոճերի տեսակները և նրանց գործածության առանձնահատկությունները, խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, նրանց առանձնահատկությունները, խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները,
4. գործնական գրությունների կազմման ձևերը,
5. բառագործածության և քերականական սխալները,
6. մասնագիտական տեքստերի հետ աշխատելու, սրբագրելու, վերաշարադրելու, սեղմելու սկզբունքներն ու ձևերը

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. հասկանալ հայերենի շարահյուսական նորմերը, կետադրական կանոնները, նրանց կիրառական առանձնահատկությունները,
2. ցույց տալ նախադասությունները փոխակերպելու ձևերն ու յուրահատկությունները
3. տարբերել ոճերի տեսակները, խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները,
4. կազմել գործնական գրություններ,
5. գտնել բառագործածության և քերականական սխալները
6. աշխատել մասնագիտական տեքստերի հետ, սրբագրել, վերաշարադրել, սեղմել տեքստերը

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. հայերենի շարահյուսական նորմերը գործնականում ճիշտ կիրառելու, ճիշտ կետադրելու,
2. նախադասությունների փոխակերպելու,
3. ոճերի տեսակները, խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները գործնականում տարբերելու,
4. գործնական գրություններ կազմելու,
5. բառագործածության և քերականական սխալները բացառելու,
6. մասնագիտական տեքստերի հետ աշխատելու, սրբագրելու, վերաշարադրելու, սեղմելու հմտությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Շարահյուսություն. կապակցման միջոցների և եղանակների յուրահատկությունները: Համաձայնության, խնդրառական և շարադասական սխալներ; **Թեմա 2.** Նախադասությունների կառուցվածքային տեսակները և գործածության առանձնահատկությունները: Պարզ և բարդ նախադասություններ, փոխակերպման ձևերն ու հնարավորությունները, դերբայական դարձվածով կառույցներ: **Թեմա 3.** Ուղղակի և անուղղակի խոսք: Փոխակերպման ձևերն ու հնարավորությունները:

Կետադրության սկզբունքները: **Թեմա 4.** Խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, նրանց առանձնահատկությունները: Խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները:

Խոսքի գործառական տարբերակները: Գիտական, պաշտոնական, խոսակցական, գեղարվեստական, հրապարակախոսական ոճեր, կիրառական առանձնահատկությունները: Գործնական գրությունների կազմման ձևերը: **Թեմա 5.** Տեքստերի շարադրման և խմբագրման հետ կապված աշխատանքները /համանիշային կառույցների ստեղծում, փոխակերպումներ, վերաշարադրում, սեղմում/: Տեքստերի վերաշարադրման և սեղմման ձևերը; Աշխատանք մասնագիտական տեքստերով:

Օտար լեզու՝ անգլերեն

Դասընթացի նպատակն է՝

ուսուցանել տնտեսագիտական, հաշվապահական և բիզնես թեմաներով հաղորդակցության հմտություններ և բառապաշար: Զարգացնել համապատասխան քերականություն բազմաթիվ երկխոսությունների և բառային դարձվածքների յուրացման միջոցով: Այնպիսի տնտեսագիտական թեմաներ ինչպիսիք են՝ տնտեսական համակարգ, արժեզրկում, կարող է արդյոք արժեզրկվել լինել արդյունավետ, գին, եկամուտ, պահանջարկ, փող եվ բանկային գործ, բանկերի դերը, շուկայի դերը, տոկոսային դրույքներ, առաջնային եվ երկրորդային շուկաներ, առաձգական և ոչ առաձգական պահանջարկ, դրամական քաղաքականություն կարող են հիմք դառնալ տնտեսական թեմայով լավագույնս հաղորդակցվելու համար:: Հետևյալ տնտեսագիտական թեմաների, քերականական կանոնների և համապատասխան բառապաշարի յուրացման շնորհիվ ուսանողը ձեռք է բերում հաղորդակցման բավարար հմտություններ տնտեսական և բիզնես միջավայրում գերազանց հաղորդակցության համար::

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն).

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. համապատասխան քերականություն և բառային դարձվածքներ խոսքը ճիշտ և գրագետ կազմելու համար:
2. տնտեսագիտական թեմաներ ինչպիսիք են՝ տնտեսական համակարգ, արժեզրկում, կարող է արդյոք արժեզրկվել լինել արդյունավետ, գին, եկամուտ, պահանջարկ, փող և բանկային գործ, բանկերի դերը, շուկայի դերը, տոկոսային դրույքներ, առաջնային և երկրորդային շուկաներ, առաձգական եվ ոչ առաձգական պահանջարկ, դրամական քաղաքականություն:
3. տնտեսագիտական զանազան տերմիններ, տեքստը ճիշտ ընկալելու և թարգմանելու կարողություններ:
4. հաղորդակցման ճիշտ տեխնիկա

մասնագիտական տեքստի ընկալման և վերարտադրման մեխանիզմները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. համապատասխան քերականության և բառային դարձվածքների կիրառմամբ խոսքը ճիշտ և գրագետ կազմել
2. երկխոսությունների միջոցով համապատասխան քերականության և բառային դարձվածքների յուրացման շնորհիվ հաղորդակցվել բիզնես միջավայրում
3. կիրառել տնտեսագիտական բառապաշարը բիզնես միջավայրում
4. անցկացնել զանազան բանավեճեր տնտեսագիտական արդի խնդիրների շուրջ, ի վիճակի լինելով արտահայտել իր տեսակետը գրագետ անգլերենով:
5. արտահայտել իրենց տեսակետը զանազան տնտեսագիտական հարցի շուրջ անգլերեն լեզվով:
6. գործածել հայերեն տնտեսագիտական եզրերի անգլերեն համարժեքները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Կտիրապետի համապատասխան քերականության և բառային դարձվածքներին խոսքը ճիշտ եվ գրագետ կազմելու համար:

տնտեսագիտական բառապաշարին և արտահայտություններին, որը թույլ կտա արտահայտել իրենց մտքերը տնտեսագիտության տարբեր հարցերի շուրջ:

24/Բ30 Օտար լեզու՝ անգլերեն -1 (2 կրեդիտ)

10 ժամ (10 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը.

Lesson 1. Introduction of Business English, **Lesson 2.** Business communication skills: “Meeting People
Lesson 3. Business communication skills: “Conducting telephone conversations **Lesson 4** Business communication skills: “Socializing”. **Lesson 5.** Business companies: structure, operations, staff. **Lesson 6** Correspondence: electronic, regular **Lesson 7.** The Economic Environment **Lesson 8.** Measuring Economic Activity **Lesson 9.** Three Economic Issues

24/Բ31 Օտար լեզու՝ անգլերեն -2 (2 կրեդիտ)

10 ժամ (10 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը.

Lesson 10. Income **Lesson 11.** The Role of Government **Lesson 12.** Economic System **Lesson 13** Markets and Demand **Lesson 14.** Price, Income and Demand **Lesson 15** Elastic and Inelastic Demand **Lesson 16.** A Model Of the Economy **Lesson 17.** Injections **Lesson 18.** Withdrawals

Ռուսաց լեզու

Դասընթացի նպատակն է՝

Յուրացնել ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանության, բառագիտության, դարձվածաբանության, բառակազմության, ձևաբանության և շարահյուսության տեսական դրույթները, զարգացնել ուսանողների գրավոր և բանավոր խոսքը, խորացնել և կատարելագործել նրանց հմտությունները գործնական քերականության ոլորտում, ձևավորել անհրաժեշտ կարողություններ մասնագիտական գրականությունից օգտվելու և մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու համար:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն).

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանության տեսական դրույթները,
2. ժամանակակից ռուսաց լեզվի բառագիտության, դարձվածաբանության տեսական դրույթները,
3. ժամանակակից ռուսաց լեզվի բառակազմության տեսական դրույթները,
4. Ռուսաց լեզվի բառապաշարի ընդհանուր հատկանիշները,
5. ժամանակակից ռուսաց լեզվի խոսքի մասերի դասակարգման առանձնահատկությունները, գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն խոսքի մասերն առանձին - առանձին՝ իրենց բնորոշ քերականական կարգերով, խոսքիմասային և կիրառական առանձնահատկություններով,
6. ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսության տեսական դրույթները, շարահյուսական կարգերը՝ իրենց բնորոշ հատկանիշներով:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Կատարել բառերի հնչյունաբանական և բառակազմական վերլուծություն, խոսքի մեջ,
2. Ճիշտ օգտագործել բառերն և դարձվածները,

3. Կատարել բառերի ձևաբանական վերլուծություններ,
4. Ճիշտ ընտրել քերականական զուգաձևությունները,
5. Որոշել բառակապակցության մեջ գոյություն ունեցող կապակցման միջոցները,
6. Կատարել պարզ և բարդ նախադասությունների շարահյուսական վերլուծություն:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Գործնական հնչյունաբանության վերլուծությանը,
2. Բառերի բառակազմական և ձևային վերլուծությանը,
3. Բառերի ձևաբանական վերլուծությանը,
4. Խոսելու, գրելու, լսելու և կարդալու կարողություններին՝ մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու նպատակով,
5. Պարզ և բարդ նախադասությունների մասին տեսական և գործնական գիտելիքներին,
6. Մասնագիտության լեզվին՝ խոսքային գործնության բոլոր ձևերում:
Դասընթացի կրթական վերջնարդյունքները, ուսուցման, ուսումնառության և գնահատման հիմնական մեթոդները

24/Բ65 Ռուսաց լեզու-1 (2 կրեդիտ)

10 ժամ (10 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգաթղթ

Բովանդակությունը.

Тема 1. Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы. Грамматический материал: фонетика (звуки и буквы языка, образование, звуков, ударение, слог, чередование звуков; соотношение звуков и букв; фонетический разбор слова) Работа над текстами по специальности .

Тема 1. Что такое экономика Тема 2. Что такое экономика страны Тема 3. Что такое микроэкономика? Тема 4. Предложение и спрос. Тема 5. Цена и Ценообразование.

Тема 2. Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы. Работа над текстами по специальности.

Грамматический материал: лексика, (лексическое значение слова; однозначные и многозначные слова; прямое и переносное значение слова; синонимы, антонимы, омонимы, паронимы)

Работа над текстами по специальности .

Тема 1. Что такое бухгалтерский учет. Тема 2. Что такое конкуренция Тема 3. Рыночная экономика. Тема 4. Фондовая биржа Тема 5. Недвижимость.

Тема 3. Лексика и фразеология по теме. Лексико – грамматические упражнения, переводы. Упражнения на развитие коммуникативных умений.

Работа над текстами по специальности.

Грамматический материал: фразеология (фразеологизмы).

Словообразование (морфемный анализ слова: основа и окончание, корень, приставка, суффикс, словообразовательный анализ)

Работа над текстами по специальности. Тема 1. Что такое аудит Тема 2. Акции? Тема 3. Акционерное общество. Тема 4. Инвестор. Тема 5. Труд и заработная плата.

Тема 4. Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы.

Упражнения на развитие коммуникативных умений.

Грамматический материал: имя существительное (лексико - грамматические разряды, род, число, падеж, склонение имен существительных); имя прилагательное (значение и грамматические признаки имени прилагательного; изменение имен прилагательных);

Работа над текстами по специальности.

Тема 1. Доход. Тема 2. Национальный банк. Тема 3. Армянский драм. Тема 4. Евро. Тема 5. Облигации.

24/Ք66 Ռուսաց լեզու-2 (2 կրեդիտ)

10 ժամ (10 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը.

Тема 5. Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы, стихи. Упражнения на развитие коммуникативных умений.

Работа над текстами по специальности .

Грамматический материал: глагол (значение и грамматические признаки глагола; время, наклонение, вид, спряжение глагола); наречие (разряды по значению), местоимение; числительное.

Тема 5. Что такое валюта? Тема 6. Прибыль. Тема 7. Что такое менеджмент. Тема 8. Налоги.

Тема 6. Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы, стихи. Упражнения на развитие коммуникативных умений.

Грамматический материал: Причастие. Деепричастие. Причастный и деепричастный оборот. Числительное.

Работа над текстами по специальности. **Тема 1.** Сборы. **Тема 2.** Процентная ставка. **Тема 4.** Дилер и брокер. **Тема 5.** Виды кредитов: Тема 3. Облигации

Тема 7. Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы, стихи. Упражнения на развитие коммуникативных умений.

Грамматический материал: Способы выражения синтаксических отношений, простое предложение, типы предложений по цели высказывания, главные члены предложения
Работа над текстами по специальности .

Тема 1. Безработица. Тема 2. Лизинг. Тема 3. Олигополия, монополия. Тема 4. Международный валютный фонд. Тема 5. Кредит

Тема 8 Лексика и фразеология по теме. Лексико – грамматические упражнения, переводы. Упражнения на развитие коммуникативных умений.

Грамматический материал: способы выражения синтаксических отношений, сложное предложение, сочинительная связь,

Работа над текстами по специальности

Тема 1. Аукцион. Тема 2. Бюджет страны. Тема 3. Дефляция. Тема 4. Инфляция. Тема 5. Ценные бумаги.

23/Բ54- Փիլիսոփայության հիմունքներ (2 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

«Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, դրանց տեսական և գործնական նշանակությունները, տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և աշխարհայացքի ձևավորման գործում: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն է ընձեռում խորությամբ ընկալելու և վերլուծելու շրջակա միջավայրն ու հասարակական հարաբերությունները, հստակ պատկերացում կազմել հասարակական կարծիքի, զարգացման առաջընթացի, հասարակական շահերի, պահանջումների վերաբերյալ և կանխատեսում անել զարգացման ուղղությամբ:

Սովորողը ծանոթանալով փիլիսոփայական ուսմունքներին հստակ պատկերացում է կազմելու մարդու էության և գոյության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հստակ կողմնորոշում կունենա ժամանակի և տարածության առարկայական պատկերացումների և գիտական ըմբռնման հարցում, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների, ճշմարիտի, արդարի, ստի և մոլորության խնդրի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք.

1. Որպես գիտություն փիլիսոփայությունը գոյություն ունի ավելի քան 2500 տարի և գոյություն կունենա այնքան ժամանակ քանի դեռ կլինի մարդն ու մարդկային հասարակությունը:

2. Փիլիսոփայությունը մարդու կողմից իր կեցության ու գոյության գլխավոր հարցերի որոնումն ու դրանց պատասխանների հավերժ փնտրտուքն է:
3. Փիլիսոփայությունը ուսմունք է իրականության զարգացման համընդհանուր օրինաչափությունների մասին:
4. Փիլիսոփայական բազմաթիվ ուսմունքներից առանձնացնել մասնավորապես է. Կանտի ընթրնումը փիլիսոփայության ոլորտի շրջանակների վերաբերյալ, որը հրատապ է բոլոր ժամանակներում.

ա/ Ես ի՞նչ կարող եմ անել

բ/ Ես ի՞նչ պետք է անեմ:

գ/ Ինչի՞ վրա կարող եմ հույս դնել:

դ/ Ինչ է մարդը:

5. Բնական գիտություններն ու արտադրությունը աշխարհ են ստեղծում մարդու համար, փիլիսոփայությունը որպես հումանիտար գիտելիք մարդ է նախապատրաստում աշխարհի համար:
6. Փիլիսոփայական խորհրդածությունների օբյեկտը ոչ թե կեցության որևէ կողմն է, այլ ողջ գոյավորը իր բովանդակության և իմաստի ամբողջության մեջ:
7. Եթե աշխարհն իրոք լինել այնպիսին, ինչպիսին այն երևում է մարդուն նրանց գործնական կյանքում, թերևս փիլիսոփայության կարիքը չլինել: Մինչդեռ աշխարհը որքան ակնհայտ, նույնքան առեղծվածային է մարդու համար: Փիլիսոփայությունը ծնվում է երևույթի և էության այդ հակադրությունից:
8. Մարդու կողմից աշխարհը ճանաչելու հնարավորությունների ու կարողությունների սահմանների և հարակից այլ ճշմատության այլ տեսակների՝ ստի, մոլորության, ճշմարտության չափանիշի ու դրանց առնչվող մյուս խնդիրների մասին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի /կկարողանա/

Կարողություն.

1. Պնդել, որ փիլիսոփայության կարիքը միշտ էլ զգացվում է, առանց որևէ պարտադրանքի, այն մեր հոգևոր կյանքի մի մասն է, բաղկացուցիչ մասը, հոգևոր պահանջմունքի բավարարման ձև, որ փիլիսոփայական գիտելիքի զարգացման գրավականը մտքի ազատությունն է:
2. Մեկնաբանել, որ փիլիսոփայությունը միայն անձնական գործ չէ, փիլիսոփայական ուսմունքներում արտացոլվում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց մտածմունքները, իդեալները և նպատակները:
3. Եզրահանգումներ կատարել կոնկրետ ոփիլիսոփաների ուսմունքների հենքի վրա՝ այդ թվում Հեգելի «Փիլիսոփայությունը դարաշրջանի հոգևոր խտացումն է» կարգախոսի

փիլիսոփայությունը, տվյալ դարաշրջանի մարդկանց մտածնությունների, իդեալների և նպատակների հանրագումարն է:

4. Ընդհանրացնել, որ փիլիսոփայության շնորհիվ մենք իրատես ենք դառնում մեր ճանաչողական հնարավորությունների գնահատման մեջ:
5. Բացահայտելու, որ փիլիսոփայությունը թե՛ անձնական և թե՛ հասարակական կյանքի կողմնակի ուղեկիցը չէ, այլ հենց կյանքը որպես «ապրում» և կենսադիրքորոշում, այն ծնվում է կյանքի էությունից:
6. Բացահայտելու փիլիսոփայության չափազանց տարողունակ, ընդգրկուն իմաստները, փիլիսոփայության «հավերժական հարցերի» բովանդակությունը:
7. Ճանաչել առավել խորությամբ և բազմակողմանիորեն հասարակական հարաբերությունները: Հասարակական կյանքի նկատմամբ ցուցաբերել քննախոյզ և խորքային մոտեցում:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

Հմտություն.

7. Ներկայացնելու, որ փիլիսոփայությունը գոյություն ունի ոչ այլ կերպ քան հանուն մարդու, քանզի փիլիսոփայական խորհրդածությունների կենտրոնում միշտ եղել ու մնում է մարդը, որպես կեցության բարձրագույն որժեքն ու նպատակը:
8. Աջակցելու մարդկանց, դասընկերներին, դրսևորելու չափազանց ուշադիր վերաբերմունք հանդեպ մարդ արարածի:
9. Ցուցաբերելու վերլուծական, ինքնուրույն և քննադատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի իր մասնագիտության ուղղությամբ, ոլորտում, փիլիսոփայական հարցերի փոխառնչության կապակցությամբ:
10. Բացահայտել իր համար և փոխանցել մյուսին, որ մարդու համար իր իսկ սեփական գոյության առեղծվածը այն ճանապարհն է, որ նրան տանում է դեպի տիեզերքի առեղծվածը:
11. Պատկերավոր ներկայացնել, որ ձգտելով բացահայտել իր իսկ սեփական էությունը, մարդը փորձում է դա անել բնության իմաստավորման միջոցով և վերջին հաշվով հանգում այն մտքին, որ տիեզերքը հրաշք է մարդու մեջ, մարդը հրաշք է տիեզերքում:
12. Գործնականում իրականացնել փիլիսոփայական տիեզերքի յուրահատկությունը, շեշտելով գիտություն լինելու հանգամանքը, սովերում չթողնել զգացական-գեղագիտական կողմնորոշումը դեպի արվեստն ունեցած հակվածությունը:
13. Դրսևորել քննական և վերլուծական մոտեցում հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային ոլորտների փոխկապակցության վերաբերյալ, կյանքի որակի և առաջընթացի արժեհամակարգում:
14. Ի մի բերել կեցության խնդրի աղերսները մարդկային գոյության իմաստի համատեքստում, նշանաբան ունենալով ոչ միայն ճշմարիտը այլև բարին ու գեղեցիկը:

Բովանդակությունը.

Թեմա 1. ԹԵՄԱ 1 Փիլիսոփայության առարկայական տիրույթը և գործառույթները, **ԹԵՄԱ 2** Փիլիսոփայական մտքի զարգացման տրամաբանությունը, **ԹԵՄԱ 3** Գոյաբանություն, **ԹԵՄԱ 4** Փիլիսոփայական մարդաբանություն /անտրոպոլոգիա/, **ԹԵՄԱ 5** Հոգեկանի ծագման հիմնահարցը տեսական - գաղափարական տարասեռ համակարգերում, **ԹԵՄԱ 6** Իմացաբանություն, **ԹԵՄԱ 7** Սոցիալական փիլիսոփայություն:

23/Բ55 Քաղաքագիտության հիմունքներ (2 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգաբա

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական հասկացություններին, քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին:

Նպաստել ուսանողների մոտ քաղաքական իրականության, քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծական մտքի ձևավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք.

1. Քաղաքական գիտության ձևավորումն ու զարգացումը,
2. քաղաքական գիտության առաջացման և զարգացման հիմնական փուլերը,
3. քաղաքական իշխանության էությունն ու բովանդակությունը, կառուցվածքը, լեգիտիմությունն ու լեգալությունը,
4. քաղաքական համակարգի էությունը և կառուցվածքը,
5. ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմների էությունն ու բնորոշ գծերը,
6. իրավական պետության էությունն ու հիմնական սկզբունքները,
7. քաղաքական կուսակցության էությունը, գործառույթները: Կուսակցական համակարգերի տիպաբանությունը,
8. քաղաքական գաղափարախոսության հասկացությունը, գործառույթները, հիմնական գաղափարախոսական հոսանքները,
9. քաղաքական կոնֆլիկտի էությունը, տիպերը, հաղթահարման ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի /կկարողանա/

Կարողություն.

1. կատարել քաղաքագիտական վերլուծություններ,
2. կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում,
3. պատկերացում կազմել քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին

4. արտահայտել սեփական քաղաքական կարծիքը, անհրաժեշտության դեպքում միավորվել որևէ քաղաքական գաղափարի շուրջ:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

Հմտություն.

1. Քաղաքագիտության առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին
2. քաղաքագիտության տեսության և պատմության հիմնական հասկացություններին, սկզբունքներին,
3. հասարակական, քաղաքական ոլորտներում առկա տարբեր հիմնախնդիրներին, դրանք ներկայացնելու, բացահայտելու, վերլուծելու, քննարկելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: **Թեմա 2.** Քաղաքագիտության տեսական-գաղափարական ակունքները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն: **Թեմա 4.** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 6.** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 7.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 8.** Քաղաքական կոնֆլիկտներ: **Թեմա 9.** Քաղաքական գաղափարախոսություն: **Թեմա 10.** Քաղաքական լիդերություն

21/Բ10 Իրավագիտության հիմունքներ (2 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, սպուզարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել իրավագիտության հիմնարար դրույթների, պետության և իրավունքի ծագման ու գործառույթների, պատմական տիպերի և ձևերի, իրավունքի հիմնական ճյուղերի հիմունքների իմացություն, գիտելիքներ հաղորդել հասարակության պետաիրավական վերնաշենքի, սոցիալական կյանքի կազմակերպման պետաիրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի բազմաթիվ ու բազմաբնույթ առնչությունների վերաբերյալ:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մարդու իրավունքների և ազատությունների, հասարակության պետաիրավական վերնաշենքի կառուցվածքի և գործառույթների իմացություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Գիտենա՝

1. պետության և իրավունքի ծագումն ու հիմնական հատկանիշները
2. պետության գործառույթները

3. պետության և իրավունքի պատմական տիպերը
4. իրավունքի հիմնական ձևերը (աղբյուրները)
5. պետության ձևերը
6. մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները
7. հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգի տարրերը
8. իրավունքի համակարգը կազմող ճյուղերի հիմունքները

Կարողանա՝

1. սահմանել իրավունք, պետություն, պետության պատմական տիպ, պետության ձև, «իրավունքի համակարգ», «իրավանորմ», «իրավահարաբերություն», հասկացությունները
2. ներկայացնել պետության և իրավունքի ծագման նախադրյալները
3. բնութագրել պետության և իրավունքի հիմնական հատկանիշները
4. դասակարգել պետության և իրավունքի պատմական տիպերը
5. տարբերակել իրավունքի աղբյուրները
6. ներկայացնել պետության հիմնական ձևերը
7. դասակարգել պետության գործառույթները
8. վերլուծել իրավունքի հիմնական ճյուղերը:

Տիրապետի՝

1. սահմանադրական իրավունքի հիմնական ինստիտուտներին
2. վարչական իրավունքի հիմունքներին
3. քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի հիմունքներին
4. աշխատանքային իրավունքի հիմունքներին
5. բնապահպանական իրավունքի հիմունքներին
6. ընտանեկան իրավունքի հիմունքներին
7. ֆինանսական իրավունքի հիմունքներին
8. քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմունքներին
9. միջազգային իրավունքի հիմունքներին

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Իրավագիտությունը որպես հասարակական գիտություն: Իրավագիտության ուսումնասիրման առարկան և մեթոդները, պետության և իրավունքի ծագումը, տիպերը և ձևերը: **ԹԵՄԱ 2.** Սահմանադրական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, քրեական, քրեական դատավարության իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 3.** Աշխատանքային, ընտանեկան իրավունքի հիմունքներ **ԹԵՄԱ 4.** Վարչական,

Ֆինանսական, բնապահպանական, ընտանեկան իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 5.**
Ազգային և միջազգային իրավունք:

23/Բ29 Հետազոտության մեթոդաբանություն (2 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

Ց-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել հետազոտություն կատարելու սկզբունքներին, ընդունված կանոններին, պահանջներին, զարգացնել մասնագիտական ոլորտում խնդրո առարկայի ուսումնասիրման կարողությունները: Ապահովել ինչպես ուսումնական, այնպես էլ ակադեմիական հետազոտական աշխատանք (ռեֆերատ, կուրսային աշխատանք, բակալավրի ավարտական աշխատանք կատարելու, հոդված գրելու) հիմնական սկզբունքները, հետազոտական աշխատանքի պլանավորման կանոնները, աշխատանքին առաջադրվող կառուցվածքային և բովանդակային պահանջները, գիտական աշխատանքի էթիկայի նորմերը, տեղեկատվություն հավաքելու, ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, մեջբերումներ ու հղումներ կատարելու, եզրակացություններ ու առաջարկություններ ձևակերպելու, այնուհետև դրանք ամփոփ ու գրագետ ներկայացնելու եղանակները: Դասընթացը կօգնի ուսանողներին արդյունավետ պլանավորել իրենց հետազոտությունները, պատրաստել գիտականության սկզբունքներին և գիտական էթիկայի կանոններին համապատասխանող աշխատանքներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ գիտական ճանաչողության հասկացությունը, հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, ուսումնասիրության մեթոդները, տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական գրականության, վիճակագրական նյութի հետ աշխատելու կանոնները, հետազոտական աշխատանք կատարելու եղանակները, աշխատանքում հղումների կատարման կարգը:

Կկարողանա՝ հիմնավորել թեմայի արդիականությունը, ներկայացնել ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրը, առանձնացնել հետազոտության հիմնական դրույթները, ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

Կտիրապետի՝ հետազոտական աշխատանքի մեթոդներին, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական հիմնախնդրի ուսումնասիրության ձևերին, եզրակացությունների ներկայացման գիտական ոճին:

Ներածություն: Գիտական ճանաչողությունը: Գիտական ոճ: Առանձնահատկությունները:

Թեմա 1. Գիտական ճանաչողությունը, գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: **Թեմա 2.** Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր

մեթոդաբանությունը: **Թեմա3.** Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները:
Թեմա 4. Գիտահետազոտական աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքները:
Մասնագիտական աղբյուրների բացահայտման եղանակները: **Թեմա 5. Փաստարկման
ընդհանուր մեթոդաբանությունը և ակադեմիական ազնվությունը** /Մ. Զաքարյանի
«Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները <. Մաթևոսյանի «Մեծամոր»
էսսեում» հոդվածի օրինակով/ **Թեմա6.** Հղումները գիտական հրապարակումներում:
Հետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ հանդիպող հասկացություններ
ը: Թեմա 7. Ռեֆերատը որպես տեքստի հիմնական տեղեկատվության սեղմ
փոխադրություն:**Կուրսային և ավարտական աշխատանքների տիտղոսաթերթի օրինակել
ի նմուշներ Թեմա 8.** Գրավոր խոսք: Ծանոթագրություններ: Ներածություն: Հիմնական մաս:
Եզրակացություն: Օգտագործված գրականության ցանկ:

1.2. Կամընտրական դասընթացներ

23/Բ37- Մշակութաբանության հիմունքներ (2 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ցույց տալու, որ ուսումնասիրելով մշակութաբանության հիմունքներ առարկան ուսանողը ձեռք է բերում կայուն գիտելիքներ մշակույթ հասկացության և նրա ծագման վերաբերյալ: Ուսանողների մոտ արմատավորվում է համակարգված պատկերացում մշակույթ հասկացության բաղադրիչների, գործընթացների և մեխանիզմների մասին: Դասընթացը բացահայտում է մշակութաբանության, որպես գիտության էությունը և տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և հակումը դեպի էլիտար մշակույթը: Օգնում է ուսանողին հստակ պատկերացում կազմելու թե ինչպես է առաջացել մշակույթը նախ որպես երևույթ, հոգևոր պահանջմունքի տարատեսակ, այնուհետև նպաստել մարդկային հասարակության առաջընթացին և սերունդների սոցիալական փորձի փոխանցմանը՝ որպես ազգային հարստություն: Ծանոթանալով նախնադարից մինչ օրս տարբեր դարաշրջաններում տարբեր ժողովուրդների ու ազգերի կողմից ստեղծած մշակութային արժեքներին, հնարավորություն է ունենում այն համադրելու հայ ժողովրդի կողմից ստեղծած մշակութային արժեքներին: Մշակութաբանության մեջ մեծ ավանդ ունի նաև հայազգի մշակութաբան Էդուարդ Մարգարյանը՝ հատկապես մշակութային գործունեությունը դիտելով որպես գործունեության առանձնահատուկ տարատեսակ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտենա՝ «Մշակույթ» հասկացության սահմանումները, մշակույթի առանձին բաղադրիչներն ու դրսևորումները:

Կկարողանա՝ բացատրել մշակույթի կառուցվածքը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները, ներկայացնել համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունները, լուսաբանել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները, զանազանել համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները:

Կտիրապետի՝ արդի դարաշրջանում մշակութային գործոնի դերի աճի կարևորման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մշակութաբանության դասընթացի ընդգրկման շրջանակները: **Թեմա 2.** Ազգի և մշակույթի փոխալսման ավորվածությունը: **Թեմա 3.** Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: **Թեմա 4.** Մշակույթ - բնություն – հասարակություն փոխհարաբերությունների հիմունքները: **Թեմա 5.** Նախնադարյան հասարակության և Հին Արևելքի մշակույթը: **Թեմա 6.** Հին Հունաստանի և Հռոմի մշակույթը: **Թեմա 7.** Միջնադարյան, Վերածննդի, նոր շրջանի մշակույթը (17-19-րդ դարեր) և ժամանակակից մշակույթը: **Թեմա 8.** Հայկական մշակույթը պատմական զարգացման ընթացքում:

23/Բ12- Կրոնագիտության հիմունքներ (2 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին տալ ընդհանուր համակարգված գիտելիքներ կրոնի, դրա պատմական դրսևորումների առաջացման, ձևավորման և զարգացման, հասարակական և հոգևոր կյանքում դերակատարության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ աշխարհում գոյություն ունեցող կրոնների, դրանց, դասակարգման սկզբունքների, օրինաչափությունների, առանձնահատկությունների, Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից ավանդական և ոչ ավանդական կրոնների աշխարհայացքային և դավանաբանական հիմնարար սկզբունքներին և պաշտամունքային առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Կիմանա՝ կրոնի սահմանումը և կառուցվածքը, նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ժամանակակից կրոնների և կրոնների պատմական ձևերի ձևավորման ու զարգացման պատմությունը, ազգային և համաշխարհային կրոնների բնութագիրը, գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական գծերը, ոչ ավանդական կրոնների առանձնահատկությունները և դասակարգումը, Հայոց եկեղեցու պատմությունը, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, ՀՀ արդի կրոնական իրավիճակը,

Կկարողանա՝ հասկանալ և վերլուծել կրոնական ու կրոնագիտական գրականությունը, սահմանել կրոն հասկացությունը և կրոնական տարբեր երևույթները, դասակարգել կրոնի բազմազան և տարատեսակ դրսևորումները, խմբավորել տարբեր կրոններ, բացահայտել և համակարգել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, ծիսապաշտամունքային, դավանաբանական առանձնահատկությունները, իրականացնել կրոնների համեմատական վերլուծություն և քննական արժևորում, դիտարկել և համեմատել տարբեր կրոններ:

Կտիրապետի՝ ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, կրոնների ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքերը բացատրելու և լուսաբանելու հնարներին, կրոնագիտության արդի հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Կրոնագիտության հիմունքներ» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Կրոնի պատմական ձևերը: **Թեմա 3.** Բուդդայականություն: **Թեմա 4.** Քրիստոնեություն: **Թեմա 5.** Իսլամ: **Թեմա 6.** Արդի կրոնական դեմոմինացիաներն ու ներփակ հոսանքները: **Թեմա 7.** ՀՀ արդի կրոնական իրավիճակը:

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

2.1. Պարտադիր դասընթացներ

11/Բ51 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ

(2 Կրեդիտ)

12 ժամ (6 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալու համակարգիչների կառուցվածքի, Windows օպերացիոն համակարգի և նրանց աշխատանքի հիմնական սկզբունքների մասին:

Ուսումնասիրվում է MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը և փաստաթղթերի ձևավորումը նրա օգնությամբ:

Ուսումնասիրվում է MS Office փաթեթի Power Point ներկայացումների պատրաստման տեխնոլոգիան:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել.

- համակարգիչների միմյանքի կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հետ,
- Windows օպերացիոն համակարգի հետ և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին,
- MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի և նրա աշխատանքի հետ,
- MS Office փաթեթի PowerPoint շնորհանդեսների ստեղծման ծրագրի աշխատանքի հետ,

Կրթական արդյունքները.

**Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝
Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա
/Գիտելիք/.**

1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները
2. Համակարգիչների տեխնիկական ապահովումը և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հիմունքները,
3. Համակարգիչների ծրագրային ապահովման տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքները,
4. MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչի և նրա աշխատանքի հիմունքները,
5. MS Office փաթեթի Power Point - ով շնորհանդեսներ պատրաստել

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա
/Կարողություն/.**

1. աշխատել «Windows»-ի միջավայրում,
2. օգտագործել MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը փաստաթղթերի ստեղծման և ձևավորման համար,
3. օգտագործել MS Office փաթեթի Power Point խմբագրիչը ներկայացումներ պատրաստելու համար,

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. համակարգիչների կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի վերաբերյալ գիտելիքների,
2. Windows օպերացիոն համակարգի և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքների վերաբերյալ գիտելիքների,
3. MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի օգնությամբ փաստաթղթերի ստեղծմանը և ձևավորմանը,
4. MS Office փաթեթի Power Point խմբագրիչի օգտագործմանը ներկայացումներ պատրաստելու համար

Բովանդակությունը.

Թեմա 1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները :Ներածություն-ընդհանուր տեղեկություններ դասընթացի մասին: Ինֆորմատիկա առարկան և խնդիրները:Ինֆորմացիայի հասկացությունը, հատկությունները, կողավորումը, չափումը: Համակարգիչների դասակարգումը, զարգացման միտումները: Ինֆորմացիայի

ներկայացման ձևերը, հաշվման համակարգեր: Թվերի թարգմանումը հաշվման մի համակարգից մյուսը: Մեքենայական թվաբանություն: **Թեմա 2. Համակարգչի տեխնիկական ապահովումը:** Համակարգչի հիմնական կառուցվածքը, Ֆոն-Նեյմանի ճարտարապետությունը: Համակարգչի հիմնական սարքերի կառուցվածքը և նշանակությունը: Կենտրոնական պրոցեսոր: Նշանակությունը և ֆունկցիաները: Անհատական համակարգչի մուտքի/ելքի ստանդարտ սարքավորումները: Անհատական համակարգչի մուտքի/ելքի օժանդակ սարքավորումները: Հիշասարքերի տեսակները և նշանակությունը: **Թեմա 3. Համակարգչի ծրագրային ապահովումը:** Ծրագրային ապահովման մակարդակները: Ծրագրային միջոցների ստորակարգությունը: Օպերացիոն համակարգեր: Ֆայլ: Ֆայլային համակարգը և դրա կառուցվածքը: Համակարգային ծրագրային ապահովում: Կիրառական ծրագրային ապահովում: Ինֆորմացիայի պաշտպանության տեխնոլոգիաներ: Հակավիրուսային ծրագրեր: Տվյալների արխիվացում: **Թեմա 4. Windows օպերացիոն համակարգ:** Windows օպերացիոն համակարգի օգտվողի ինտերֆեյսը (Desktop, Taskbar, My Computer, Recycle Bin, My Documents): Windows -ի ղեկավարման վահանակի հետ աշխատելու հիմնական դրույթները (Control Panel): Windows-ի ստանդարտ ծրագրերը (Accessories) WordPad, Notepad, Paint և այլն: Աշխատանք ֆայլերի և թղթապանակների հետ: **Թեմա 5. MS Office Word տեքստային խմբագրիչ:** MS Office Word 2016 տեքստային խմբագրիչի միջավայրը: Սիմվոլների ձևավորում, ANSI և Unicode կոդավորման համակարգեր, տառաձևեր, պարբերության ձևավորում, ցուցակներ, վերնագրային ոճ: Փաստաթղթի ձևավորում. դաշտերի, չափսերի, դիրքավորման սահմանում, սյուներ, տիտղոսաթերթ, էջավերնագիր, էջախորագիր, հետնապատկերի ձևավորում: Աղյուսակներ և սխեմաների մշակում: Նկարի և մակագրության ներդնում, WordArt ձևավորում: Գծապատկերի, օբյեկտների, սիմվոլների և բանաձևերի ներդնում: Հիպերհղումների, ծանոթագրության ներդնում, գրականության ցանկի և բովանդակության կազմում: Ուղղագրության ստուգում, ուղղումների գրանցում, մեկնաբանությունների ստեղծում, փաստաթղթերի համեմատում: **Թեմա 6. MS Office Power Point ներկայացումների պատրաստման տեխնոլոգիա:** MS Office Power Point 2016 ներկայացումների համակարգի միջավայրը: Նոր ներկայացման ստեղծում, աղյուսակի, դիագրամի, սխեմայի և այլ օբյեկտների ներդնում, փաստաթղթի փոխակերպումը ներկայացման: Դրվագի հիմնանկար, հիմնագույն, անիմացիոն սխեմա, անիմացիոն էֆեկտ, նշումներ, հիպերհղումներ, ղեկավարման կոճակներ:

13/Բ52 Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում

բնակչության առաջին բուժօգնություն (3 Կրեդիտ)

12 ժամ (8 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը՝

Դասընթացի նպատակն է “Մարդ - բնական միջավայր” համակարգում բնակչության անվտանգ կենսագործունեության ապահովումը: Տնտեսական գործունեության ընթացքում

մարդը միշտ ենթարկվում է շրջակա միջավայրի բացասական երևույթների ազդեցություններին, ենթարկվում է արտադրական վնասվածքների, պետք է պատկերացնի և կարողանա ցանկացած իրավիճակում ճիշտ միջոցառումներ իրականացնել դրանց հետևանքները վնասազերծելու և նորմալ կենսագործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու համար: Դասընթացում մեծ տեղ է հատկացվում նաև աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և իր հանգիստը կազմակերպելու գործընթացների գործընթացներին:

Դասընթացի նպատակն է ծանոթացնել առաջին օգնության հիմունքներին: Ստացված գիտելիքները հնարավարություն են տալիս բնութագրել արտակարգ պատահարը (իրավիճակը), որի դեպքում որոշակի տարածքում (աղետի գոտի, դեպքի վայր) խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը և արդյունքում առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն; հասկանալ թե ով է տվյալ իրավիճակում տուժած: Դասընթացը հնարավարություն է ընձեռում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվել, ճիշտ որոշում կայացնել և իրադրությանը համապատասխանաբար օգնության քայլեր ձեռնարկել՝ ցուցաբերել առաջին օգնություն:

Կրթական արդյունքները՝

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/

- Ճանաչել մարդու օրգանիզմի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները,
- Հիմնավորել անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները,
- Նկարագրել բնական միջավայրը և նրա աղտոտումը,
- Լուսաբանել մարդու տեղը և դերը բիոսֆերայում,
- Մթնոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները,
- Ջրոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները,
- Բնահող, նրա աղտոտումն ու հետևանքները,
- Ներկայացնել բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները,
- նկարագրել արտակարգ իրավիճակները,
- վերլուծելու արտակարգ իրավիճակները և կազմակերպել իրադրությանը համապատասխան առաջին բուժօգնություն,
- արժևորելու առաջին բուժօգնության գիտելիքները և հմտությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/

- Կիրառել ստացած գիտելիքները ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին,

- Իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից,
- Ներկայացնել իոնացնող ճառագայթների ազդեցությունից, էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից պաշտպանվելու ուղիները,
- Լուսաբանել պաշտպանությունը աղմուկից, ինֆրա- և ուլտրաձայներից, թրթռոցներից (տատանումներից), վնասակար նյութերի ազդեցությունից,
- կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում,
- իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկել,
- ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արտակարգ իրավիճակին համապատասխան:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- Կայուն զարգացման ռազմավարությանը անվտանգության կառավարման համակարգերին,
- Արտակարգ իրավիճակների ընթացքում ձեռնարկվող քայլերին,
- Անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից պաշտպանվելու հմտություններին,
- Քիմիական և ռադիոակտիվ վարակվածության գոտիներում մարդկանց անհատական պաշտպանական միջոցներին,
- Վտանգված տեղանքում փրկարարական աշխատանքների իրականացման,
- կատարել արհեստական շնչառություն,
- կատարել սրտի անուղղակի մերսում,
- կատարել վերքերի և վնասվածքների վիրակապում:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Մարդու օրգանիզմի բաղադրությունը, կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: **ԹԵՄԱ 2.** Բնական միջավայրը և նրա աղտոտումը: **ԹԵՄԱ 3.** Պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից: **ԹԵՄԱ 4.** Հակահրդեհային պաշտպանություն: **ԹԵՄԱ 5.** Պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից: **ԹԵՄԱ 6.** Պաշտպանություն էլեկտրական հոսանքի ազդեցությունից: **ԹԵՄԱ 7.** Իոնացնող ճառագայթների ազդեցությունից: **ԹԵՄԱ 8.** Պաշտպանություն էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից: **ԹԵՄԱ 9.** Պաշտպանություն աղմուկից, ինֆրա և ուլտրա ձայներից: **ԹԵՄԱ 10.** Պաշտպանություն ճնշման տակ գտնվող համակարգերում առաջացող վտանգներից: **ԹԵՄԱ 11.** Պաշտպանություն թրթռոցներից (տատանումներից): **ԹԵՄԱ 12.** Պաշտպանություն վնասակար նյութերի ազդեցությունից: **ԹԵՄԱ 13.** Հրատապ գործողությունների փուլերը: **ԹԵՄԱ 14.** Սրտի աշխատանքի խանգարումներ: **ԹԵՄԱ 15.** Արյունահոսություններ: Վիրակապական նյութեր և վիրակապեր: Փափուկ հյուսվածքների վնասվածքներ: **ԹԵՄԱ 16.** Այրվածքներ: Ջերմային խանգարումներ: **ԹԵՄԱ 17.** Թունավորումներ:

2.2. Կամընտրական դասընթացներ

13/Բ15_Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ (2 Կրեդիտ)

10 ժամ (8 դասախոսություն, 2 սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

«Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ» առարկան նպատակ է հետապնդում բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ ու կուլտուրայով, ծանոթացնել նրան բնական համակարգերի կազմավորման և բնօգտագործման գործունեության հիմունքներին, մարդ-բնություն-հասարակություն փոխհարաբերություններին, էկոլոգիական հիմնահարցերին: « Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ » դասընթացը բուհի բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի հիմնական ուսումնական, մասնագիտական առարկաներից է, որի դասավանդումը կարևորվում է էկոլոգիական գրագիտության ու կուլտուրայի մասին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերելու առումով:

Դասընթացի ուսումնասիրման ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվելու է բնական համակարգերի կազմավորման և բնօգտագործման գործունեության հիմունքներին, կենսոլորտի կայունությանը, մարդածին էկոլոգիական ճգնաժամերին::

Դասընթացի ուսումնասիրումը ուսանողներին հնարավորություն կտա ծանոթանալու Հայաստանի Հանրապետության բնապահպանական խնդիրներին և դրանց լուծման ուղիներին::

Դասընթացի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում բնական պաշարներին և դրանց դասակարգմանը, բնական ռեսուրսների ճգնաժամների վրա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/.

Լուսաբանել էկոլոգիական հիմնական գործոնների տիպերը, դրանց փոխադարձ ազդեցությունները գոյության պայմանների վրա:

- Մեկնաբանել միջավայրի պայմանների (օդային, ջրային, հողային) ազդեցությունը օրգանիզմների վրա, որոշել օրգանիզմների հարմարողականության բնույթը:

- Բացահայտել կենսացենոզում սնման շղթաները, սնման մի շղթայից մյուսին անցնելիս էներգիայի կորստի օրինաչափությունները:

-Ճանաչել երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ, էկոհամակարգերի կազմավորման հիմնական սկզբունքները:

- Նկարագրել մարդ-բնություն միասնականությունը, հիմնական էկոլոգիական հիմնախնդիրների ծագումնաբանությունը, դրանց հաղթահարման ուղիները:
- Բացատրել բնական ռեսուրսների դասակարգման, արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա /Կարողություն/.

Կիրառել ստասած գիտելիքները միջավայրի էկոլոգիական վիճակը գնահատելու, ինչպես նաև էկոլոգիական մոնիթորինգ իրականացնելու համար:

-Բացահայտել կենսոլորտի ֆունկցիոնալ առանձնահատկությունները. որպես մեկ միասնական ամբողջականություն, կենսոլորտի առանձին բաղադրիչների փոփոխությունը, պայմանավորված կլիմայական պայմանների համընդհանուր փոփոխությամբ:

-վերլուծել բնության վրա մարդու ազդեցության հետևանքները, կենսոլորտի վրա մարդածին գործոնը մեղմացնելու ուղիները:

Հիմնավորել կենսոլորտի վրա համընդհանուր կլիմայական փոփոխության ազդեցությունը բնական և ագրոէկոհամակարգերի վրա, էներգիայի այլընտրանքային ձևերի ներգրավման հնարավորությունները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի /Հմտություն/.

էկոլոգիական հիմնական հասկացություններին, Օրգանիզմների վրա միջավայրի գործոնների ազդեցության ընդհանուր օրինաչափությունները (օպտիմումի կանոն, էկոլոգիական տոլերանտություն, գործոնների փոխազդեցություն, սահմանափակող գործոններ):

- Օրգանիզմների էկոլոգիական դասակարգման սկզբունքներին: Օրգանիզմների կենսական ձևերին, նրանց միջև գոյություն ունեցող կապերին:

- Մարդու կենսոլորտի վրա ունեցած ազդեցություններին, Կենսոլորտի կայունություններին, Մարդածին էկոլոգիական ճգնաժամերի Երկրագնդի ազգաբնակչության թվաքանակի աճով պայմանավորված բնական ռեսուրսների ճգնաժամի առանձնահատկություններին:

- Հայաստանի Հանրապետության էկոլոգիական հիմնախնդիրները և բնապահպանական միջոցառումներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Էկոլոգիայի առարկան և բովանդակությունը: Էկոլոգիայի ձևավորումը որպես գիտություն: Էկոլոգիական հիմնական հասկացությունները: Էկոլոգիայի սահմանումը և նրա առարկան: Էկոլոգիական պատկերացումների զարգացումը հին ժամանակներից մինչև մեր օրերը: Էկոլոգիայի ձևավորումը և զարգացումը որպես գիտություն: Ժամանակակից էկոլոգիան և նրա կառուցվածքը՝ ընդհանուր էկոլոգիա, կենսէկոլոգիա, մարդու էկոլոգիա, կիրառական էկոլոգիա: Էկոլոգիական հիմնախնդիր հասկացությունը: Էկոլոգիայի դերն ու նշանակությունը գիտության մյուս բնագավառների զարգացման գործում: Էկոլոգիական գիտության զարգացումը Հայաստանում: **Թեմա 2.** Բնակության միջավայր: Էկոլոգիական գործոններ և դրանց բնութագիրը: Հասկացություն բնակության միջավայրի մասին: Աբիոտիկ միջավայր (ջրոլորտ, մթնոլորտ, քարոլորտ): Միջավայրի հիմնական էկոլոգիական գործոնները և դրանց դասակարգումը. աբիոտիկ գործոններ (ջերմություն, լույս, խոնավություն, իոնացնող ճառագայթում, ճնշում, մագնիսական դաշտ, օդի և ջրի ֆիզիկական ու քիմիական կազմ, օդային և ջրային հոսանքներ), բիոտիկ գործոններ (ներտեսակային, միջտեսակային), մարդածին գործոններ: Օրգանիզմների վրա միջավայրի գործոնների ազդեցության ընդհանուր օրինաչափությունները (օպտիմումի կանոն, էկոլոգիական տոլերանտություն, գործոնների փոխազդեցություն, սահմանափակող գործոններ): **Թեմա 3** Օրգանիզմների հարմարվողականությունը բնակության միջավայրի պայմաններին: Օրգանիզմների հարմարվողականությունը բնակության միջավայրի գործոններին: Բնական երևույթների պարբերականությունը. կենսաբանական ռիթմեր, լուսապարբերականություն:

Օրգանիզմների էկոլոգիական դասակարգման սկզբունքները: Ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմներ: Օրգանիզմների կենսական ձևերը: Նրանց միջև գոյություն ունեցող կապերը:

Թեմա 4. Պոպուլյացիա: Կենսահամակարգ: Էկոհամակարգ Հասկացություն պոպուլյացիայի մասին էկոլոգիայում: Պոպուլյացիայի կառուցվածքը՝ տեսակային, կենսաբանական, սեռական, տարիքային, տարածական, վարքագծային: Պոպուլյացիայի դինամիկական բնութագիրը՝ ծնելիություն, մահացություն, աճի արագություն: Հասկացություն կենսահամակարգի մասին: Կենսահամակարգի կառուցվածքը՝ տեսակային, տարածական: Օրգանիզմների հարաբերությունները կենսահամակարգերում՝ սննդային (տրոֆիկ),

գիշատիչ-զոհ, մակաբույծ-տեր, կոմենսալիզմ, մուտուալիզմ, չեզոքություն, մրցակցություն: Էկոլոգիական խորշ: Հասկացություն էկոհամակարգի մասին: Օրգանիզմների սննդային կապերը էկոհամակարգում: Էկոլոգիական բուրգեր: Առաջնային և երկրորդային արդյունավետություն, աղտոտում, ինքնամաքում, կայունություն: Կրկնվող (ցիկլիկ) և ուղղորդված փոփոխությունները էկոհամակարգերում (ֆլուկտուացիա, սուկցեսիա, էվոլյուցիա): **Թեմա 5. Կենսոլորտ** Հասկացություն կենսոլորտի մասին: Կենսոլորտը և նրա սահմանները: Կենսաբազմազանությունը որպես կենսոլորտի կայունության հիմք: Կենդանի նյութ, նրա ֆունկցիաները և հատկությունները: Քիմիական տարբեր տարրերի՝ ածխածնի, թթվածնի, ազոտի, ֆոսֆորի և ծծումբի մեծ և փոքր շրջապտույտները կենսոլորտում: Կենսոլորտի էվոլյուցիան: Հասկացություն նոսֆերայի մասին:

Թեմա 6. Սոցիալ-էկոլոգիական սուբյեկտները և նրա նց փոխազդեցությունը Մարդը և հասարակությունը որպես սոցիալ-էկոլոգիական փոխազդեցության սուբյեկտներ: Մարդու, որպես սոցիալ-էկոլոգիական փոխազդեցության սուբյեկտի, կարևոր բնութագրիչները: Մարդու ուրբանիզացված միջավայրը և դրա տարրերը, դրանց դասակարգումը. սոցիալ-կենցաղային միջավայր, աշխատանքային միջավայր, ռեկրեացիոն միջավայր: Միջավայրի գործոնների ազդեցությունը մարդու վրա: Մարդու հարմարվողականությունը միջավայրին և դրա փոփոխություններին՝ հնարավորությունները, ուղիները, հետևանքները (էկոլոգիական, ֆիզիոլոգիական, ձևաբանական, կազմաբանական):

Թեմա 7. Մարդու փոխազդեցությունը բնության հետ Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Կենսոլորտի կայունությունը: Մարդածին էկոլոգիական ճգնաժամեր: Երկրագնդի ազգաբնակչության թվաքանակի աճ: Բնական պաշարներ և դրանց դասակարգումը: Բնական ռեսուրսների ճգնաժամ. **Թեմա 8. Մթնոլորտի պահպանություն** Մթնոլորտի կառուցվածքը և բաղադրությունը: Մթնոլորտի շերտերը: Մթնոլորտի նշանակությունը: Մթնոլորտի աղտոտում հասկացությունը: Մթնոլորտի աղտոտման հիմնական ձևերը: Մթնոլորտի աղտոտման հետևանքները: Մթնոլորտի աղտոտումը ջերմոցային գազերով: Օզոնային շերտի քայքայումը: Թթվային տեղումներ: Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումները: **Թեմա 9. Ջրային պաշարների պահպանությունը** Ջրոլորտ: Ջրի հատկությունները և նրա նշանակությունը բնության մեջ: Ջրերի աղտոտման հիմնական աղբյուրները: Ջրամբարների ջերմային աղտոտումը: Ջրամբարների էֆտրոֆացումը: Ջրի նշանակությունը մարդու համար: Քաղցրահամ ջրի հիմնական աղբյուրները: Քաղցրահամ ջրի սակավության պատճառները: Ջրային պաշարների պահպանությունը աղտոտումից **Թեմա 10. Հողային պաշարների պահպանությունը** Հողի կառուցվածքը: Հողի

նշանակությունը բնության մեջ: Հողի դերը նյութերի շրջապտույտում: Հողի նշանակությունը մարդու կյանքում: Հողերի էռոզիա: Հողերի աղակալում: Հողերի ճահճացում: Հողերի դեգրադացիա: Հողերի աղտոտումը արտադրական թափոններով: Հողերի աղտոտումը ռադիոակտիվ նյութերով: Հողերի աղտոտումը պեստիցիդներով: **Թեմա 11. Կենսաբազմազանության պահպանություն:** Ինչ է կենսաբանական բազմազանությունը: Կենսաբազմազանության մակարդակները: Տեսակների թիվը: Տեսակների բաշխումը: Տեսակների անհետացման պատճառները: Կարմիր գիրքը որպես հազվագյուտ և անհետացող տեսակների հաշվառման միջոց: Հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանության ռազմավարությունը: **Թեմա 12. Հայաստանի Հանրապետության բնապահպանական խնդիրները և դրանց լուծման ուղիները:** ՀՀ բնապահպանության մասին օրենսդրական և նորմատիվ ակտերը: Հայաստանի մասնակցությունը բնապահպանության միջազգային կոնվենցիաներին: Հայաստանի արգելանոցները, արգելավայրերը, ազգային պարկերը, հատուկ պահպանվող տարածքները: Դրանց բնապահպանական նշանակությունը: Սևանա լճի հիմնախնդիրը: Հայաստանի "Կարմիր գիրքը", նրանում ընդգրկված բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների ընդհանուր նկարագրությունը:

13/Բ5 Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր (3 Կրեդիտ)

10 ժամ (8 դասախոսություն, 2 սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին պատկերացում տալ բնագիտության հայեցակարգերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները: Դասընթացը հիմնականում հիմնված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդի ձեռքբերումների լուսաբանմանը: Դասընթացը բացատրում է կենդանի և անկենդան նյութի տարբերությունը, հնարավոր զարգացումները՝ կապված ինֆորմացիայի և ինֆորմացիոն փոխներգործության հետ: Տրված է կենսոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները, դրա առանձին բաղադրիչների միջև եղած կապերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/

1. Լուսաբանել բնագիտության ժամանակակից հայեցակարգերը, դրանց վերաբերյալ ժամանակակից մոտեցումները,
2. Մեկնաբանել բնագիտության դերը աշխարհաընկալման գործընթացներում, հիմնավորել բնագիտության դերը արտադրության զարգացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում,
3. Բացահայտել տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները, արեգակնային համակարգի առանձնահատկությունները:

4. Ճանաչել երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ:
5. Նկարագրել կենսոլորտի բաղադրիչների՝ /ջրոլորտ, քարոլորտ, մթնոլորտ/ փոխադարձ կապը և փոխապայմանավորվածությունը,
6. Հիմնավորել մատերիայի կենսաբանական կազմակերպվածության բնութագրերը:
7. Բացատրել երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/

1. Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնական բնույթի աշխատանքներ կատարելիս,
2. Տարբերակել բնագիտության արդի հիմնախնդիրներն ըստ ոլորտների, նկարագրել դրանց բնորոշ առանձնահատկությունները և նշանակությունը ժամանակակից աշխարհում:
3. Բացահայտել կենսոլորտի ֆունկցիոնալ առանձնահատկությունները. որպես մեկ միասնական ամբողջականություն:
4. Վերլուծել բնության վրա մարդու ազդեցության հետևանքները, կենսոլորտի վրա մարդածին գործոնը մեղմացնելու ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Բնագիտական գիտությունների մեթոդաբանությանը և գործնական կիրառության հմտություններին:
2. Բնություն-կենսոլորտ-մարդ համակարգի փոխներգործության առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ժամանակակից բնագիտության կառուցվածքը, գործառույթները, հայեցակարգերը, իմացության մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Բնափիլիսոփայության պատկերացումները և գիտական գիտելիքները Անտիկ աշխարհում և միջին դարերում: Վերածննդի դարաշրջանի և Նոր ժամանակի գիտական հեղափոխությունը: **Թեմա 3.** XX դարի բնագիտական և գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխարհընկալման տիպերի հերթագայումը: **Թեմա 4.** Տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները: **Թեմա 5.** Արեգակնային համակարգի առանձնահատկությունները, երկիր մոլորակ, օդային թաղանթը, կազմությունը, բաղադրամասերը, երկրագնդի և մթնոլորտի ջերմային հատկությունները և ջերմային ռեժիմը: **Թեմա 6.** Մատերիայի կենսաբանական կազմակերպվածության մակարդակի բնութագրությունը **Թեմա 7.** Երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները թաղանթը, կազմությունը, բաղադրամասերը, երկրագնդի և մթնոլորտի ջերմային հատկությունները և ջերմային ռեժիմը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

3.1. Պարտադիր դասընթացներ

11/Բ3 Արդյունաբերական ճյուղերի տեխնոլոգիական համակարգեր

(4 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ծանոթացնել տեխնոլոգիական գործընթացների զարգացման ուղիներին և օրինաչափություններին՝

նոր առաջադիմական, անթափոն և շրջակա միջավայրը չախտոտող տեխնոլոգիական գործընթացների մշակում և կազմակերպում,

հումքանյութերի արդյունահանման և նախնական վերամշակման նորագույն տեխնոլոգիաների ուսումնասիրում,

էներգետիկ ռեսուրսների և վառելանյութերի համալիր օգտագործման արդյունավետ ուղիների հայտնաբերում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. արտադրության ճյուղերի յուրահատկությունները, հումքանյութերի դասակարգման համակարգերը, դրանաց տեսակները, հատկությունները և կիրառման բնագավառները,
2. նախնական և հմնական վերամշակման եղանակների առանձնահատկությունները,
3. էներգետիկ ռեսուրսների տարատեսակները, էներգիայի ստացման և փոխակերպման եղանակները,
4. հումքանյութերի, կիսապատրաստուկների և պատրաստի արտադրանքի ֆիզիկամեխանիկական և քիմիակենսաբանական հատկությունները,
5. տեխնոլոգիական գործընթացներում օգտագործվող մեքենա-սարքավորումների կոուցվածքը և աշատանքի սկզբունքները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. նկարագրել ու պարզաբանել տեխնոլոգիական գործընթացը,
2. գտնել հումքանյութերի վերամշակման առավել արդյունավետ եղանակները,
3. ընտրել գործընթացների իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների համալիրը և հիմնավորել ընտրության օպտիմալությունը:
4. ինքնուրույն կատարել լաբորատոր փորձարկումներ այս կամ այն հատկությունները պարզաբանելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/

1. արտադրության կազմակերպան եղանակներին՝ գտնելով առավել արդյունավետը,
2. արտադրական գործընտացներում թափոնների և կողմնակի նյութերի ստացման և դրանց վերօգտագործման համար եղանակներ մշակելու ունակությամբ,
3. գոյություն ունեցող չափման մեթոդներին և միջոցներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն Արդյունաբերությունը որպես նյութական արտադրության հիմնական ճյուղ: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը (արդյունահանող և վերամշակող): Աշխատանքի առարկաներ և աշխատանքի միջոցներ թողարկող ճյուղեր, լայն սպառման առարկաներ և սննդամթերք թողարկող ճյուղեր, դրանց համառոտ բնութագիրը և առանձնահատկությունները: Դասընթացի կապը տնտեսագիտական առարկաների հետ:

Թեմա 2. Տեխնոլոգիական հիմնական սահմանումներ և հասկացություններ: Արտադրական գործընթացների կառուցվածքը, դրանց կոմպլեքսային բնույթը: Արտադրական ցիկլ, տեխնոլոգիական գործընթաց, փուլ, տեխնոլոգիական օպերացիա (հիմնական, օժանդակ և սպասարկման), տեխնոլոգիական գործընթացը բնութագրող պարամետրեր: Տեխնոլոգիական գործընթացի դասակարգումն ըստ ընթացքի բնույթի՝ ֆիզիկամեխանիկական, քիմիական, կենսաքիմիական: Տեխնոլոգիական գործընթացի դասակարգումն ըստ հումքի մշակման պատիկության՝ բաց ցիկլ, փակ ցիկլ: Տեխնոլոգիական գործընթացի դասակարգումն ըստ կազմակերպման սկզբունքի՝ ընդհատ, անընդհատ և կոմբինացված: Տեխնոլոգիական գործընթացի դասակարգումն ըստ կառուցվածքի՝ գծային, ճյուղավորված և ցիկլիկ: Տեխնոլոգիական գործընթացի դասակարգումն ըստ մեքենայացման և ավտոմատացման աստիճանի, դրանց կապը գործընթացի բարդության աստիճանից: Արտադրական գործընթացների դասակարգումն ըստ թողարկվող նույնատիպ արտադրանքի քանակի՝ զանգվածային, սերիական և հատային, դրանց առանձնահատկությունները:

Թեմա 3. Տեխնոլոգիական հումք և արտադրանք Տեխնոլոգիական հումքի դասակարգումն ըստ ծագման, ագրեգատային վիճակի, քիմիական կազմության, օգտագործման նպատակի: Հիմնական հումք, օժանդակ նյութեր, կիսաֆաբրիկատներ: Տեխնոլոգիական գործընթացի արտադրանք՝ նպատակային, կողմնակի, թափոններ (օգտագործվող և չօգտագործվող): Զուրը և օդը, դրանց դերը արտադրական գործընթացներում, ջրի որակական ցուցանիշները:

Թեմա 4. Վառելիքաէներգետիկ ռեսուրսների դերն արտադրական գործընթացներում: Դրանց տեսակները, ստացման եղանակները, նյութական և էներգետիկ հաշվեկշիռներ: Նպատակային արտադրանքի ելք, հումքանյութերի և էներգիայի ծախսի գործակիցներ: Արտադրանքի նյութատարության և էներգատարության որոշումը նյութական և էներգետիկ հաշվեկշիռների միջոցով: **Թեմա 5. Արտադրական գործընթացների տեխնիկա-տնտեսական նախագծում** Տեխնոլոգիական գործընթացի հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշները և դրանց բարելավման ուղիները: Տնտեսապես հիմնավորված հզորության

ընտրությունը: Արտադրության գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները՝ արտադրանքի տարեկան ծավալ, տեսակարար կապիտալ ներդրումներ, աշխատանքային ցուցանիշներ, արտադրանքի ինքնարժեք: Արտադրանքի տեխնոլոգիական ինքնարժեքի հաշվարկում: Արտադրանքի տարեկան ծավալի ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի վրա, արտադրանքի տարեկան ծավալի մեծացման ուղիները: Օպտիմալ տեխնոլոգիական գործընթացի ընտրության սկզբունքը: Տեխնոլոգիա և արտադրանքի որակ: Արտադրանքի որակը բնութագրող ցուցանիշները՝ կոմպլեքսային և դիֆերենցված: Ստանդարտավորման և ունիֆիկացման դերն արտադրանքի շահագործական, տնտեսական և սպառողական հատկանիշների բարձրացման հարցում: Գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը արտադրանքի որակի և տեսականու ընդլայնման վրա: **Թեմա 6.** Տեխնոլոգիական գործընթացի զարգացման հիմնական ուղիները և օրինաչափությունները Գիտատեխնիկական հեղափոխության և գիտատեխնիկական առաջընթացի հիմնական ուղիները արդյունաբերության մեջ: Արդյունաբերական արտադրության հիմնական կազմակերպչական ձևերը՝ կոնցենտրացում, կոմբինացում, մասնագիտացում, կոոպերացում: Գիտատեխնիկական առաջընթացի հիմնական ուղիները՝ էլեկտրոֆիկացում, կոմպլեքսային մեքենայացում, ավտոմատացում, ռոբոտացում, քիմիացում, ինտենսիֆիկացում: Բարեշրջական տիպի տեխնիկական լուծումներ: Աստիճանական բարեփոխումների էվոլյուցիոն ուղին՝ էքստենսիվ և ինտենսիվ: Հեղափոխիչ տիպի տեխնիկական լուծումներ, նոր «տեխնոլոգիական մակարդակի» անցում, դրանց տնտեսական արդյունավետությունը:

Թեմա 7. Հումքի նախնական մշակում Հումքի նախնական մշակման նպատակը, դրա ազդեցությունը հիմնական տեխնոլոգիական գործընթացի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների վրա: Հումքի հարստացում, գործընթացի էությունը և գործընթացը բնութագրող տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ: Պինդ հումքի նախնական մշակման և հարստացման եղանակները: Հեղուկ և գազային հումքանյութերի հարստացման զանգվածափոխանակման գործընթացը, դրանց կազմակերպման արդյունավետությունը:

Թեմա 8. Գիտատեխնիկական առաջադիմությունը բնորոշող արդյունաբերության ճյուղերի տեխնոլոգիական սկզբունքները: Մետալուրգիան որպես արդյունաբերության կոմպլեքսային ճյուղ, դրա տեխնիկա-տնտեսական առանձնահատկությունները: Մետաղները և համաձուլվածքները որպես հիմնական կոնստրուկցիոն նյութեր մեքենաշինության և շինարարության մեջ, դրանց ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները: Մետալուրգիական արտադրության հիմնական տեխնոլոգիական սկզբունքները՝ պիրոմետալուրգիա, հիդրոմետալուրգիա, էլեկտրամետալուրգիա: Մետալուրգիական արտադրության տեխնոլոգիական համակարգերի զարգացման օրինաչափությունները և դրանց տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավման ուղիները: **Թեմա 9.** Մեքենաշինական արտադրության տեխնոլոգիական սկզբունքները: Մեքենաշինական արտադրության կատառուցվածքային սխեմաները, դրանց առանձնահատկությունները: Նախաշինվածքային արտադրության տեխնոլոգիական սկզբունքները, նախաշինվածքի պատրաստման տնտեսապես հիմնավորված եղանակի ընտրությունը: Հասկացություն

մեքենայի և դրա տարրական մասի՝ դետալի մասին: Շինվածքի տեխնոլոգիականությունը, դրա գնահատման մեթոդները: Դետալի չափային բնութագրերը՝ պատրաստման ճշգրտություն և մշակված մակերևույթի մաքրություն: Կտրումով մեխանիկական մշակման տեխնոլոգիական սկզբունքը: Կտրման ռեժիմ, կտրման ուժ, կտրող գործիքների ծախս, մշակման՝ տնտեսապես հիմնավորված ճշգրտություն: Մետաղահատ հաստոցների դասակարգումը և համառոտ բնութագիրը: Ջերմային և ջերմաքիմիական մշակում, դրանց ազդեցությունը դետալի տեխնոլոգիական և շահագործական հատկանիշների վրա: Հուսալիություն, երկարակեցություն, համափոխարինելիություն, հասկացությունները: Մետաղների կոռոզիա և պայքարը դրանց դեմ: Ձևագոյացման առաջադիմական տեխնոլոգիական գործընթացներ՝ ճշգրիտ ձուլում, դրոշմում, փոշեմետալուրգիա, էլեկտրաֆիզիկական և էլեկտրաքիմիական մշակում: Անխախտ միացումների ստացման տեխնոլոգիական սկզբունքները՝ եռակցում և զոդում: Հավաքման արտադրության տեխնոլոգիական սկզբունքները և կազմակերպման ձևերը՝ կոնցենտրացված և դիֆերենցված, ստացիոնար և հոսքային: Մեքենահավաքման արտադրության հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշները և դրանց բարելավման ուղիները:

Թեմա 10. Քիմիական արդյունաբերության տեխնոլոգիական սկզբունքները Քիմիական արդյունաբերության հիմնական արտադրատեսակները և դրանց օգտագործման բնագավառները: Պոլիմերային նյութեր, նրանց ստացման տեխնոլոգիական հիմունքները՝ պոլիմերացում, պոլիկոնդենսացում: Պլաստմասաներ, նրանց ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները, հիմնական տեսակները, օգտագործման բնագավառը և արդյունավետությունը: Սինթետիկ կաուչուկ և ռետին, նրանց արտադրության տեխնոլոգիական սկզբունքները և օգտագործման արդյունավետությունը: Քիմիական և սինթետիկ մանրաթելեր, նրանց արտադրության և օգտագործման արդյունավետությունը: Բնական վառելանյութերի տեսակները, հատկությունները, կիրառությունը արտադրության մեջ: Վառելանյութերի վերամշակման տեխնոլոգիական գործընթացները (կոքսաքիմիական արտադրություն, նավթի վերամշակման ջերմաքիմիական եղանակները, կոքսաքիմիայի և նավթաքիմիայի առաջնային խնդիրները): Քիմիական միջոցների կոմպլեքս օգտագործում (պարարտանյութեր, թունաքիմիկատներ): Հանքային պարարտանյութերի հիմնական տեսակները՝ ազոտական, ֆոսֆորական, կալիումական, կոմպլեքսային: **Թեմա 11.** Թեթև արդյունաբերության տեխնոլոգիական համակարգ: Թեթև արդյունաբերության նշանակությունը և ճյուղային կառուցվածքը: Հիմնական հասկացություններ տեքստիլ, տրիկոտաժի և կարի արտադրությունների մասին: Տեքստիլ արդյունաբերության հումքային ռեսուրսներ՝ բամբակ, բուրդ, վուշ, քիմիական և սինթետիկ մանրաթելեր: Թեթևի հիմնական ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները, նրանց ազդեցությունը տեքստիլ և տրիկոտաժի արտադրության արդյունավետության վրա: Կարի արտադրության տեխնոլոգիական հիմունքները, արտադրության փուլերը, կազմակերպման ձևերը, հիմնական տեխնոլոգիական սարքավորումները: Հոսքային գծեր, նրանց աշխատանքը

բնութագրող ցուցանիշները՝ արտադրողականություն, աշխատանքային ռիթմ, թողարկման տակտ: Թեթև արդյունաբերության զարգացման հեռանկարները և հիմնական ուղիները:

Թեմա 12. Շինարարական արտադրության տեխնոլոգիական հիմունքներ:

Շինարարությունը ինչպես նյութական արտադրության կարևոր բնագավառ, նրա հիմնական մասերը՝ շինարարական նյութերի արտադրության և շինարարական ինդուստրիա: Տեխնիկական առաջընթացը շինարարության մեջ՝ տեխնոլոգիայի և կազմակերպման կատարելագործում, շենքերի և կառույցների առաջադեմ նախագծերի ներդրում, մեքենայացման և ինդուստրիալիզացման աստիճանի բարձրացում: Շինարարական նյութերի հիմնական տեսակները և նրանց դասակարգումն ըստ ծագման (բնական և արհեստական), ըստ օգտագործման նպատակի և դերի շինարարական արտադրության մեջ (պատային, կապակցող, տանիքային, երեսպատման, ջերմա և ձայնամեկուսիչ), բետոն, երկաթբետոն: Շինարարական արտադրատեսակները, նարնց արտադրության առանձնահատկությունները: Շինարարական արտադրության կազմակերպման ձևերը, հիմնական ՏՏՏ և նրանց բարելավման ուղիները: Ընդհանուր հասկացություն անվտանգության տեխնիկայի և արտադրական սանիտարիայի մասին արդյունաբերության և շինարարության մեջ: Կազմակերպչական, տեխնիկական, սանիտարա-հիգիենիկ, ուսումնահիգիենիկ միջոցառումների համակարգ աշխատանքի բարենպաստ պայմաններ ստեղծելու, աշխատանքային անվտանգությունը ապահովելու և անձնակազմի պրոֆեսիոնալ հիվանդությունները կանխարգելելու նպատակով:

Թեմա 13. Գիտատեխնիկական առաջընթաց և էկոլոգիական անվտանգություն: Մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը կենսոլորտում տեղի ունեցող գործընթացի վրա, «մարդ-բնություն» հարաբերություններում առաջացող պրոբլեմներ: Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման պրոբլեմի լուծման հիմնական ուղիները՝ անթափոն կամ սակավաթափոն տեխնոլոգիական գործընթաց, փակ ցիկլով գործող ջրօգտագործման համակարգերի ներդրում, երկրորդական հումքանյութերի և էներգո միջոցների օգտագործումը, արդյունաբերական թափոնների ուտիլիզացումը և վնասագերծումը, տնտեսական աճի ապահովումը որակական ցուցանիշների բարձրացման հաշվին:

12/Բ5 Գործարարության բարոյագիտություն և հոգեբանություն (2 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին ընդհանուր պատկերացում տալ գործարար շփման կանոնների և հմտությունների, մարդկանց հոգեբանական տիպերի, հոգեբանական ազդեցությունների մեխանիզմների մասին, ուսումնասիրել գործարար բնագավառում վարվեցողության կանոնները, տալ հաղորդակցման ունակությունների և հմտությունների կիրառման տարբերակներ, ինչպես նաև ծանոթացնել գործարար զրույցների և բանակցությունների անցկացման կարգին, գործարար շփման ազգային առանձնահատկություններին: Ուսանողների մոտ ձևավորել պատկերացում հաղորդակցման և ղեկավարման

ունակությունների, սոցիալական հոգեբանության, խմբերի, հասարակական և միջանձնային հարաբերությունների, հաջողված ղեկավար դառնալու, ճիշտ գործարար բանակցություններ վարելու, արտասահմանյան գործընկերների հետ շփման առանձնահատկությունների վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է դարձվում գործարար շփումների հոգեբանական և մշակութային հիմքերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. Էթիկայի նորմերը
2. Գործարար մարդու իմիջը ձևավորող պարտադիր բաղկացուցիչները
3. Բաց և փակ ժեստերը
4. Վարվեցողության կանոնները տարբեր բնագավառներում
5. Սթրեսների առաջացման պատճառները
6. Կոնֆլիկտների կառուցվածքը
7. Խառնվածքի տիպերը
8. Տարբեր երկրներում գործարար բանակցությունների վարման առանձնահատկությունները
9. գործարար հաղորդակցման սոցիալ-հոգեբանական հիմքերը
10. գործարար հաղորդակցման հոգեբանությունը
11. մարդկանց վրա ազդելու հնարքները
12. բանակցությունների հոգեբանությունը և ազգերի պահվածքի առանձնահատկությունները
13. բաց և փակ ժեստերը

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Ճիշտ գնահատել իրավիճակը
2. Հասկանալ կոնֆլիկտների առաջացման պատճառները և զարգացման ընթացքը և վերահսկել իրավիճակը
3. Ազատ արտահայտվել ցանկացած միջավայրում
4. Ճանաչել դիմացինի բնավորությունը և համապատասխան հարաբերությունները կառուցել
5. Նրբանկատություն դրսևորել նույնիսկ կոնֆլիկտների ժամանակ
6. Մարդկանց տրամադրել դեպի իրեն
7. Վերլուծել լսելու և հասկանալու, ընկալման խնդիրները
8. Կանխատեսել դիմացինի պահվածքը դատելով ժեստերից և միմիկայից
9. Կառավարել սեփական և մյուսների էմոցիաները,
10. Կարողանա ազդել, հետաքրքրել, ձևավորել խմբեր և դրդել հասնելու նպատակներին
11. Ադապտացվել և ինքնակատարելագործվել
12. Վերլուծել իրավիճակային խնդիրներ

13. Տարբերել շփման մյուս կոմի ազգային և էթնիկ պատկանելությունը և ճիշտ ստրատեգիա կիրառել

**Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.**

1. Հետաքրքրելու, ներշնչելու և համոզելու հմտություններին
2. Մանիպուլյացիոն որոշակի հմտություններին
3. Կոնֆլիկտային իրավիճակներում՝ պահվածքի կողքսին
4. Բաց ժեստերին
5. Իրավիճակին և վայրին համապատասխան հագնվելու և անհրաժեշտ տպավորություն թողնելու հմտություններին
6. Գեղեցիկ խոսքին
7. մարդկանց իր նկատմամբ տրամադրելու ազդեցության հնարքների կիրառման հմտություններին
8. հետաքրքրելու և ղեկավարելու, կոմպրոմիսի գնալու կարողություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Էթիկետի պատմական զարգացման ակնարկ, Էթիկետի հիմունքներ: **Թեմա 2.** Մարդկաց հոգեբանական տիպերը: **Թեմա 3.** Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն: **Թեմա 4.** Գործարար էթիկետ և արարողակարգ: **Թեմա 5.** Հոգեբանական ազդեցություններ: **Թեմա 6.** Գործարար շփման ազգային առանձնահատկությունները: **Թեմա 7.** Հաղորդակցման սոցիալ-հոգեբանական հիմքերը: **Թեմա 8.** Մարդկանց փոխհարաբերությունների օրինաչափությունները: **Թեմա 9.** Շփման օրինաչափությունները: **Թեմա 10.** Գործարար շփման հոգեբանություն: **Թեմա 11.** Գործարար շփում: **Թեմա 12.** Բանակցությունների հոգեբանություն: **Թեմա 13.** Գործընկերոջը բանակցությունների գործընթաց ներքաշելու միջոցները: **Թեմա 14.** Ազգային բնութագիր: **Թեմա 15.** Ստերեոտիպիզացիան որպես ազգերի միմյանց ընկալման գործոն:

12/Բ27 Վիճակագրություն (4 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

զանգվածային պատահական երևույթների և դրանց բնորոշ օրինաչափությունների վերաբերյալ տեսական գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ընդհանրացնող բնութագրիչների որոշման հիման վրա տվյալների գիտական մշակման և վերլուծության հնարքների, եղանակների և մեթոդների կիրառման գործնական հմտությունների ձևավորումը:

«Վիճակագրություն» դասընթացը մշակում է վիճակագրական ընդհանուր հասկացությունները, կատեգորիաներն ու սկզբունքները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական երևույթների քանակական ուսումնասիրության մեթոդները: **«Վիճակագրություն»** դասընթացը հիմնարար նշանակություն ունի և տեսական ու մեթոդաբանական հիմք է հանդիսանում կիրառական վիճակագրության դասընթացի և բիզնեսի առաջադրած խնդիրները լուծելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

- սկզբնական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ձևերը, տեսակները, եղանակները, ռեսպոնդենտների հետ անմիջական շփման սկզբունքները և տեխնիկան,
- տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվական բազան, այդ ցուցանիշների վերլուծության մեթոդիկան,
- տեղեկատվության վիճակագրական մշակման և համակարգման հիմնական մեթոդները և գործիքային միջոցները,
- երևույթների և գործընթացների վիճակագրական չափման և նկարագրման կատեգորիաները, հայեցակարգերը, ցուցանիշների համակարգերը և դրանց կառուցման կանոնները,
- վերլուծական և հետազոտական խնդիրների լուծման համար կիրառվող հիմնական ժամանակակից տեխնիկական միջոցները և տեղեկատվական տեխնոլոգիաները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

- կազմակերպել և անցկացնել վիճակագրական դիտարկումներ, հավաքագրել և ամփոփել անհրաժեշտ տվյալներ՝ առաջադրված խնդիրները լուծելու համար,
- իրականացնել վիճակագրական տվյալների մշակման գործիքակազմի ընտրություն և հիմնավորում՝ առաջադրված խնդիրն համապատասխան,
- օգտագործել և հիմնավորել տվյալների մշակման համար անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաներ, ամփոփված տվյալները ներկայացնել գրաֆիկական և աղյուսակային տեսքով,

- ընտրել ուսումնասիրվող երևույթը կամ գործընթացը բնութագրող ցուցանիշների համապատասխան համակարգը,
- գնահատել և վերլուծել երևույթների ու գործընթացների դինամիկան, փոխկապվածությունները և զարգացման միտումները, բացահայտել կոնկրետ իրավիճակների ուսումնասիրության հիմնախնդիրները,
- օգտագործել վիճակագրական կիրառական ծրագրերի փաթեթները զանգվածային տվյալների բազաների, երևույթների ու գործընթացների վիճակագրական վերլուծությունում:

**Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.**

- վիճակագրական հետազոտություն անցկացնելու ընդհանուր սկզբունքներին և հմտություններին,
- զանգվածային տվյալների մշակման համար անհրաժեշտ գործիքակազմին,
- վիճակագրական դիտարկման մեթոդներին ու տեխնոլոգիաներին և տեղեկատվություն հավաքագրելու և մշակելու հմտություններին,
- երևույթներն ու գործընթացները վերլուծելու և կանխատեսելու, ստացված արդյունքները բովանդակալից մեկնաբանելու հմտություններին,
- ժամանակակից էՀՄ-երի կիրառական ծրագրային ապահովության ընտրության և օգտագործման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վիճակագրության ներածությունը: Վիճակագրության ընդհանուր տեսության առարկան, մեթոդը և խնդիրները: Վիճակագրական տվյալների ստացման աղբյուրները. աղմինիստրատիվ տվյալներ, ընտրանքային հարցումներ և այլ վիճակագրական դիտարկումներ: Բաշխման շարքեր և դրանց հիմնական բնութագրիչները: Հաճախակա- նության և տեսակարար կշռի հասկացությունը: Տվյալների տիպերն ու չափման սանդղակները: **Թեմա 2. Վիճակագրական ամփոփում և խմբավորում:** Ամփոփումը որպես վիճակագրական հետազոտության երկրորդ փուլ: Ամփոփման խնդիրները և դրա հիմնական բովանդակությունը: Խմբավորման խնդիրները և դրա նշանակությունը վիճակագրական հե- տազոտությունում: Խմբավորման տեսակները: Խմբավորման հատկանիշի ընտրությունը և խմբերի թվի որոշումը: Որակական և քանակական հատկանիշներով խմբավորումներ: **Թեմա 3. Վիճակագրական ցուցանիշներ, դրանց արտահայտման ձևերը:** Վիճակագրական ցուցանիշների էությունը և նշանակությունը: Վիճակագրական ցուցանիշները՝ որպես երևույթ- ների և գործընթացների քանակական բնութագիր: Վիճակագրական ցուցանիշներին ներկայացվող պահանջները՝ տեսական հիմնավորում, համադրելիություն, հավաստիություն: Վիճակագրական ցուցանիշների համակարգերը, դրանց տեսակները: Վիճակագրական

ցուցանիշների արտահայտման ձևերը՝ բացարձակ, հարաբերական և միջին մեծություններ: Բացարձակ մեծությունների տեսակները, դրանց նշանակությունը և ստացման եղանակները: Հարաբերական մեծությունների տեսակները, դրանց հաշվարկման եղանակները և արտահայտման ձևերը: Հարաբերական մեծությունների փոխկապվածությունը: **Թեմա 4.** Նկարագրական վիճակագրություն: Կենտրոնական միտման չափորոշիչներ: Միջին մեծություններ, դրանց տեսակները և հաշվարկման եղանակները: Կառուցվածքային միջիններ՝ մոդա, մեդիանա, քվարտիլներ և այլն: Կառուցվածքային միջինների հաշվարկման եղանակներ: Տատանման հասկացությունը և դրա վիճակագրական ուսումնասիրության խնդիրները: Տատանման բացարձակ և հարաբերական ցուցանիշներ: Բաշխման ձևի ուսումնասիրում: **Թեմա 5.** Վիճակագրական բաշխումներ: Դիսկրետ պատահական մեծության բաշխման ֆունկցիան, դրա հատկությունները: Դիսկրետ պատահական մեծության հիմնական բնութագրիչները՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, ստանդարտ շեղում, կովարացիա: Անընդհատ պատահական մեծություն: Անընդհատ պատահական մեծության բաշխման խտությունը, դրա հատկությունները: Նորմալ և ստանդարտացված նորմալ բաշխումներ: Նորմալ բաշխման հատկությունները: Նորմալ բաշխման հավանականությունների որոշումը: Ընտրանքային բաշխումների հատկությունները: Կենտրոնական սահմանային թեորեմ: Միջին արժեքների ընտրանքային բաշխումներ: Միջին թվաբանականի անշեղելիություն: Միջինի ստանդարտ սխալ: Մասերի ընտրանքային բաշխումներ: **Թեմա 6** Վստահելիության միջակայքեր: Վստահելիության միջակայքի էությունը: Միակողմանի և երկկողմանի վստահելիության միջակայքեր: Վստահելիության միջակայքեր միջինի համար, երբ ստանդարտ շեղումը հայտնի է: Վստահելիության միջակայքեր միջինի համար, երբ ստանդարտ շեղումը հայտնի չէ: Ընտրանքի ծավալի որոշումը գլխավոր համակցության մաթեմատիկական սպասման և մասի գնահատման համար: **Թեմա 7** Վարկածների ստուգում: Վարկածների ձևավորման և ստուգման հիմնական հասկացությունները: Առաջին և երկրորդ կարգի սխալներ: Վիճակագրական թեստի ուժը (power) և նշանակալիության մակարդակը (significance level): Միջինի միակողմանի և երկկողմանի թեստեր: p-value-ի էությունը և ստացումը: **Թեմա 8** Պարամետրերի գնահատում: Մի քանի խմբերի պարամետրերի միջև տարբերությունների գնահատում՝ միագործոն դիսպերսիոն վերլուծություն: F-չափանիշի կիրառումը: Միագործոն դիսպերսիոն վերլուծության անհրաժեշտ պայմանները: Ռեգրեսիոն մոդելների տեսակներ: Պարզ գծային ռեգրեսիայի հավասարման դուրս բերում: Փոքրագույն քառակուսիների մեթոդ: Ռեգրեսիայի գործակիցների մեկնաբանություն: **Թեմա 9** Դինամիկայի շարքեր: Դինամիկայի շարքերը և դրանց տեսակները: Դինամիկայի շարքերի վերլուծական ցուցանիշները: Բացարձակ հավելած, աճի տեմպ, հավելածի տեմպ, 1 տոկոս հավելածի բացարձակ նշանակություն: Դինամիկայի միջին ցուցանիշները: Դինամիկայի շարքի միջին մակարդակ, միջին բացարձակ հավելած, աճի և հավելածի միջին տեմպեր: **Թեմա 10** Ինդեքսային մեթոդ: Հասկացություն ինդեքսների մասին: Անհատական և ընդհանուր ինդեքսներ: Ագրեգատային ինդեքսներ:

Ինդեքսների փոխկապվածությունը: Լասպեյրեսի, Պասաշեի և Ֆիշերի ինդեքսները: Միջին ինդեքսներ:

12/Բ35 Տնտեսամաթեմատիկական մոդելավորում (2 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Տնտեսամաթեմատիկական մոդելավորումը ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերել տնտեսագիտական գիտելիքներ՝ օգտվելով մաթեմատիկական մեթոդներից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/.

- Ի՞նչ է մոդելը
- Գծային ծրագրման խնդիրները,
- Երկակիության տեսությունը և դրա միջոցով լավագույն լուծումների փնտրման մեթոդները
- Փոփոխականների և պարամետրերի բազմությունները, որոնք տրոհվում են թույլատրելի փոփոխականների (որոնց արժեքներն ընտրում է որոշում կայացնողը) և արտածին փոփոխականների (որոնց արժեքների որոշումը հիմնախնդրի ծրագրավորման շրջանակից դուրս է)

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

- տնտեսագիտական երևույթները ներկայացնել մաթեմատիկական մեթոդների օգնությամբ
- կառուցել դրված խնդրին համապատասխան տնտեսամաթեմատիկական մոդել
- իրականացնել մոդելի փորձառական և տեսական վերլուծություն, ստացված արդյունքների համադրում տրված օբյեկտի տվյալների հետ
- իրականացնել մոդելի կատարելագործում

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- տնտեսագիտական երևույթների քանակական և որակական վերլուծությունների եղանակներին
- գծային ծրագրման խնդիրների լուծման եղանակներին

- հաշվողական եղանակներին, որոնց միջոցով որոշում կայացնողը կարողանում է գնահատել տարբեր լուծումների արդյունքները, ընտրել լավագույնը ըստ օպտիմալության հայտանիշի

Բովանդակությունը.

Թեմա 1 Մոդել, մոդելավորում, մոդելավորման փուլերը: **Թեմա 2** Ընդհանուր օգտակարության ֆունկցիա: Աքսիոմները **Թեմա 3** Անտարբերության կորեր, հատկությունները: Բարիքի սահմանային օգտակարություն: Բարիքների փոխարինելիության նորմա **Թեմա 4** Սպառման խնդիրները: Սպառողի օպտիմալ վարքագիծ: Հավասարակշռության գներ **Թեմա 5** Օպտիմալացման կիրառական չափանիշներ: Փոխադարձության թեորեմ **Թեմա 6** Միջնյուղային հաշվեկշռի սխեման և տնտեսամաթեմատիկական մոդելը արժեքային արտահայտությամբ **Թեմա 7** Ուղղակի ծախսումների գործակից: Ուղղակի ծախսումների գործակցի հատկությունները **Թեմա 8** Լրիվ ծախսումների գործակից: Լրիվ ծախսումների գործակցի հատկությունները: **Թեմա 9** Ուղղակի և լրիվ աշխատատարության և ֆոնդատարության գործակից **Թեմա 10** Ճյուղի հեռանկարային զարգացման բազմարդյունք ստատիկ խնդիրը /անընդհատ փոփոխականներով/: **Թեմա 11** Բազմարդյունք դիսկրետ փոփոխականներով ճյուղի հեռանկարային զարգացման ստատիկ խնդիրը **Թեմա 12** Ճյուղի հեռանկարային զարգացման արտադրա-տրանսպորտային խնդիրը **Թեմա 13** Արտադրության տեղաբաշխման բազմափուլ խնդիրը **Թեմա 14** Արտադրության տեղաբաշխման բազմարդյունք խնդիրը **Թեմա 15** Ցանցային դրվածքով մեկարդյունք արտադրության տեղաբաշխման խնդիրը **Թեմա 16** Արտադրական սարքավորումների օպտիմալ ծանրաբեռման խնդիրները **Թեմա 17** Նյութերի օպտիմալ ձևման խնդիրը: Երկակի խնդրի տնտեսագիտական մեկնաբանումը **Թեմա 18** Խառնուրդների և միացությունների կազմման օպտիմիզացիոն խնդիրները **Թեմա 19** Պաշարների կառավարման խնդիրները **Թեմա 20** Արդյունաբերության զարգացման և տեղաբաշխման մոդելները **Թեմա 21** Արտադրական ֆունկցիաների ծագումը, տեսքերը և հատկությունները: **Թեմա 22** Էլաստիկություն:

12/Բ9 Կոմերցիա և լոգիստիկա (4 Կրեդիտ)

18 ժամ (12 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կոմերցիայի և կոմերցիոն գործունեության հասկացությունների, առք ու վաճառքի գործընթացների, ապրանքների իրացման ձևերի առանձնահատկությունների և տեխնոլոգիաների հետ, ուսումնասիրել լոգիստիկայի հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, մեթոդները, ձևավորել լոգիստիկ մոտեցում ձեռնարկության կառավարման, ապահովել կայուն գիտելիքներ նյութական, ֆինանսական և տեղեկատվական հոսքերի կառավարման բնագավառում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Գիտենա կոմերցիոն գործունեության էությունը և տեսակները, առք ու վաճառքի պայմանագրերի կառուցվածքը և բովանդակությունը, միջնորդ գործարքների տեսակները և առանձնահատկությունները հասկացությունը, կոմերցիոն գործարքների կազմակերպումը և անցկացման տեխնիկան ապրանքային բորսաներում, աճուրդներում, տենդերներում, ցուցահանդեսներում, տոնավաճառներում, լոգիստիկայի նպատակները, հասկացությունները, սկզբունքները և զարգացման փուլերը, լոգիստիկայի ֆունկցիաները, հայեցակարգերը, գործառույթների տեսակները:

Կարողանա նախապատրաստել կոմերցիոն գործարքներ, վարել բանակցություններ կոմերցիոն գործարք կնքելու նպատակով, կազմել առք ու վաճառքի և այլ կոմերցիոն պայմանագրեր, հաշվարկել մուտքային, ելքային, արտաքին և ներքին նյութական հոսքերի ծավալները ու տարվա ընթացքում մատակարարումների օպտիմալ քանակը, օգտագործել նյութական պաշարների գնահատման մեթոդները, կատարել արտադրության և իրացման ծավալի վերլուծություն, իրականացնել լոգիստիկական մոդելավորում, մշակել ապրանքների մատակարարման երթուղիներ և ժամանակացույցեր:

Տիրապետի կոմերցիոն գործարքների նախապատրաստման ու անցկացման տեխնիկական և տեխնոլոգիան կիրառելու, տարբեր տեսակի կոմերցիոն պայմանագրեր կազմելու, նյութական և այլ հոսքերի կառավարման մեթոդները օգտագործելու, նյութական հոսքերի շարժի օպտիմիզացիայի արդյունքում ձեռնարկությունում պաշարների տնտեսման մեթոդները գնահատելու հմտություններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Կոմերցիայի հիմունքներ առարկան: **Թեմա 2.** Կոմերցիոն գործարքների կողմերի դասակարգումը: **Թեմա 3.** Արտահանման և ներմուծման գործարքների հասկացությունը և վիճակագրական հաշվառումը: **Թեմա 4.** Առք ու վաճառքի գործարքի նախապատրաստումը և կնքումը կողմերի միջև ուղղակի կապերի դեպքում: **Թեմա 5.** Առք ու վաճառքի պայմանագրի կառուցվածքը և բովանդակությունը: **Թեմա 6.** Առևտրային միջնորդ օղակի միջոցով իրականացվող կոմերցիոն գործունեություն: **Թեմա 7.** Կոմերցիոն գործարքների կազմակերպումը անցկացման տեխնիկական ապրանքային բորսաներում: **Թեմա 8.** Կոմերցիոն գործարքների կազմակերպումը անցկացման տեխնիկական աճուրդներում: **Թեմա 9.** Կոմերցիոն գործարքների կազմակերպումը և անցկացման տեխնիկական տենդերների ժամանակ: **Թեմա 10.** Վարձակալական գործարքներ /լիզինգ/: **Թեմա 11.** Միջազգային տուրիզմի գործարքներ: **Թեմա 12.** Գովազդային գործունեության կազմակերպում: **Թեմա 13.** Ցուցահանդեսներ և տոնավաճառներ: **Թեմա 14.** Ֆրանչայզինգի հասկացությունը և բովանդակությունը: Ֆրանչայզինգի տեսակները: **Թեմա 15.** Լոգիստիկ համակարգերի կազմակերպման հիմունքները: **Թեմա 16.** Բաշխիչ Լոգիստիկայի համակարգերի կազմակերպման առանձնահատկությունները: **Թեմա 17.** Տրանսպորտային լոգիստիկայի համակարգերի կազմակերպման առանձնահատկությունները:

Միկրոտնտեսագիտություն

Դասընթացի նպատակը.

Միկրոտնտեսագիտության ուսումնասիրման նպատակն է հասկանալ, յուրացնել և օգտագործել միկրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները և օրինաչափությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա միկրոտնտեսագիտության օրենքները, մեթոդները և օրինաչափությունները, շուկայական տնտեսության գործունեության օրինաչափությունները, կազմակերպությունների կազմակերպարավական տեսակները և նրանց առանձնահատկությունները, կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները տարբեր շուկայական իրավիճակներում, սպառողների վարքի տեսությունը, շուկայական գնագոյացման մեխանիզմները ռեսուրսների օպտիմալ բաշխման և արտադրական գործընթացների արդյունավետության բարձրացման ուղիները:

2.Կարողանա օգտագործել ստացված գիտելիքները միկրոտնտեսագիտական պրոբլեմներ լուծելու համար, կայացնել կառավարչական որոշումներ միկրոմակարդակով, գտնել առաջացող խնդիրների լուծման օպտիմալ տարբերակները:

3.Տիրապետի միկրոմակարդակով օպտիմալ որոշումներ ընդունելու հմտություններին, տնտեսվարող սուբյեկտների առաջ կանգնող գործնական խնդիրների լուծման մեթոդներին:

14/Բ16 Միկրոտնտեսագիտություն-1 (3 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը.

Թեմա 1. Միկրոտնտեսագիտության ուսումնասիրության առարկան, մեթոդները և սկզբունքները: **Թեմա 2.** Ձեռնարկություն և ձեռնարկատիրական գործունեություն: **Թեմա 3.** Առաջարկի և պահանջարկի տեսության հիմունքները: **Թեմա 4.** Առաջարկի և պահանջարկի առաձգականությունը: **Թեմա 5.** Սպառողի վարքը և սպառողական ընտրություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերը:

14/Բ16-1 Միկրոտնտեսագիտություն-2 (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը.

Թեմա 7. Շուկայական մոդելներ՝ Կատարյալ մրցակցություն: **Թեմա 8.** Շուկայական մոդելներ՝ Կատարյալ մոնոպոլիա: **Թեմա 9.** Շուկայական մոդելներ՝ Մոնոպոլիստական մրցակցություն: **Թեմա 10.** Շուկայական մոդելներ՝ Օլիգոպոլիա: **Թեմա 11.** Արտադրական

գործոնների շուկաները: **Թեմա 12.** Աշխատանքի շուկան, աշխատավարձը և ներդրումները մարդկային կապիտալի մեջ: **Թեմա 13.** Շահույթ, փոխատվական կապիտալ: **Թեմա 14.** Եկամուտների բաշխումը միկրոմակարդակով:

14/Բ17 Միկրոտնտեսագիտություն - Կուրսային աշխատանք (1 Կրեդիտ)

Դասընթացի նպատակը.

Կուրսային աշխատանքի ուսանողին նպատակն է կատարել գործնական հետազոտություն և վերլուծություններ միկրոտնտեսագիտական տարբեր պրոբլեմների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա միկրոմակարդակով տնտեսության տեսական և գործնական հետազոտություններ և վերլուծություններ կատարելու սկզբունքները:

2.Կարողանա կառուցել միկրոտնտեսագիտական մոդելներ, լուծել խնդիրներ և մեկնաբանել ու գնահատել ստացվող արդյունքները:

3.Տիրապետի միկրոտնտեսագիտական վերլուծության գործիքներին, խնդիրների լուծման և միկրոտնտեսագիտական մոդելներ կառուցելու ինչպես նաև հետազոտական աշխատանք կատարելու հմտություններին:

Կուրսային աշխատանքների թեմաներ

1.Շուկայական տնտեսությունը և նրա բնութագրերը: Շուկայական տնտեսության սուբյեկտները և գործունեության պայմանները:

2.Միկրոտնտեսական շուկաների տեսակները:

3.Ձեռնարկության (ֆիրմայի) հասկացությունը՝ որպես ձեռնարկատիրության կազմակերպական ձևի և միկրոտնտեսական շուկաների մասնակցի:

4.Ձեռնարկատիրության ձևերը Հայաստանի Հանրապետությունում:

5.Իրավաբանական անձինք: Առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ:

6.Տնտեսական ընկերություններ և ընկերակցություններ: Համեմատական վերլուծություն:

7.Բաժնետիրական ընկերություններ:

10.Պահանջարկի և առաջարկի տեսությունը և նրա գործնական օգտագործումը:

11.Պահանջարկի առաձգականության հայեցակարգը և նրա գործնական օգտագործումը

12.Առաջարկի առաձգականության հայեցակարգը և նրա գործնական օգտագործումը

13.Անհատական և շուկայական պահանջարկ: Հավասարակշռության գինը:

14.Սպառողի վարքը պայմանավորող պատճառները և գործոնները:

15.Ընդհանուր և սահմանային օգտակարություն: Օգտակարության մաքսիմիզացիան որպես սպառման նպատակային ֆունկցիա

- 16.Սպառողական օպտիմալ ընտրությունը և սպառողի հավասարակշռությունը: Օգտակարության մաքսիմիզացիայի կանոնը: Էնգելի կորերը:
- 17.Արտադրության գործընթացը և արտադրության գործոնները: Արտադրական ֆունկցիաների տեսակները:
- 18.Արտադրությունը՝ նպատակները և խնդիրները: Արտադրական ֆունկցիան և նրա առանձնահատկությունները կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածներում:
- 19.Ձեռնարկության ծախքերը և նրանց տեսակները կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածներում:
- 20.Շուկայական մոդելների էությունը, տեսակները, սահմանազատման չափորոշիչները:
- 21.Կատարյալ և ոչ կատարյալ մրցակցություն: Համեմատական վերլուծություն:
- 22.Կատարյալ մրցակցության տեսության հիմնական բնութագրերը:
- 23.Ոչ կատարյալ շուկաների և մրցակցության առաջացման պատճառները:
- 24.Պահանջարկը, առաջարկը, գինը, եկամուտը և շահույթը կատարյալ մրցակցության պայմաններում:
- 25.Մրցակցային ձեռնարկության ծախքերը և շահույթը կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածներում:
- 26.Կատարյալ մոնոպոլիայի հասկացությունը, բնութագրերը: Պահանջարկը, առաջարկը, գինը, եկամուտը և շահույթը կատարյալ մոնոպոլիայի պայմաններում:
27. Մոնոպոլիայի տեսակները Հայաստանի Հանրապետությունում:
- 28.Մրցակցային շուկայական միջավայրի ձևավորման պրոբլեմները: Մրցակցության խրախուսման ձևերը և մոնոպոլիզմի զսպումը :
- 29.Հակամոնոպոլ օրենսդրությունը և կատարելագործման խնդիրները :
- 30.Մոնոպոլիստական մրցակցության էությունը և բնութագրերը: Հակամոնոպոլիստական կարգավորում:
- 31.Պահանջարկը, առաջարկը, գինը, եկամուտը և շահույթը մոնոպոլիստական մրցակցության պայմաններում:
- 32.Շուկայի օլիգոպոլիստական կառուցվածքը: Օլիգոպոլիայի մոդելները:
- 33.Արտադրական գործոնների շուկաների հասկացությունը, և տեսակները:
- 34.Ռեսուրսների պահանջարկը: Ռեսուրսների պահանջարկի վրա ազդող գործոնները:
- 35.Ռեսուրսների պահանջարկի առաձգականությունը: Ռեսուրսների առաջարկը:
- 36.Աշխատանքի պահանջարկը և առաջարկը կատարյալ և ոչ կատարյալ շուկաների պայմաններում:
- 37.Մրցակցային և մոնոպոլիստական շուկաների ազդեցության առանձնահատկությունները աշխատանքի պահանջարկի և առաջարկի վրա:
- 38.Աշխատանքի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը ապրանքների մրցակցային շուկայում:
- 39.Աշխատավարձի ձևավորման տեսությունը, մոդելները և պրակտիկան:
- 40.Աշխատավարձի վճարման համակարգերը:

41.Ներդրումները մարդկային կապիտալում: Մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության գնահատման ձևերը:

42.Ձեռնարկատիրական եկամուտ և շահույթ:

43.Եկամտի ֆունկցիոնալ բաշխումը: Եկամտի բաշխումը ըստ մեծության:

12/Բ18 Մակրոտնտեսագիտություն (4 Կրեդիտ)

18 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին հաղորդել անհրաժեշտ հենքային գիտելիքներ տնտեսության զարգացման մակրոտնտեսական օրինաչափությունների ուսումնասիրության վերաբերյալ: Այս պարագայում ուսանողները ձեռք են բերում տնտեսության իրական հատվածը վերլուծելու, գործընթացներն ըմբռնելու և օբյեկտիվ գնահատելու կարողություններ, տիրապետում են վճարահաշվարկային համակարգի կարգավորման սկզբունքներին, կարող են կատարել պետության վարած մակրոտնտեսական քաղաքականության համեմատական վերլուծություն, գնահատել տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները, նախանշել ՀՀ արտաքին առևտրի զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, կանխորոշել տնտեսական աճի ապահովման մեխանիզմները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. պետության տնտեսական գործունեության հիմնական բնագավառները և գործառույթները,
2. ազգային արդյունքի հոսքերն ապահովող մեխանիզմը,
3. ապրանքների և ծառայությունների պահանջարկի բովանդակությունը,
4. զբաղվածության պետական ծառայության լիազորությունները,
5. գործազրկության բնական մակարդակի հաշվարկման մեթոդաբանությունը,
6. մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը,
7. դրամաշրջանառության օրենքը՝ փողի քանակական տեսության մեկնաբանությամբ,
8. գնողունակության համարժեքության օրենքի իրագործման կարևորությունը,
9. մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման օրինաչափությունները և սկզբունքները,
10. հարկերի և պետական ծախսերի բազմապատկիչը՝ որպես հարկաբյուջետային քաղաքականության իրականացման գործիքներ,
11. կապիտալի և ապրանքների միջազգային հոսքերի բովանդակությունը,
12. Ռոբերտ Սոլովի տնտեսական աճի մոդելի առանձնահատկությունները:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա
/Կարողություն/.**

1. գնահատել տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները դրամական հոսքերը կառավարելիս,
2. կատարել պետության վարած մակրոտնտեսական քաղաքականության իրավիճակային և համեմատական վերլուծություններ,
3. վերլուծել կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները,
4. մեկնաբանել ազգային եկամտի բաշխումն ըստ արտադրության գործոնների,
5. ներկայացնել ինֆլյացիայի և տոկոսադրույքի փոխառնչությունը,
6. բացահայտել տնտեսական տատանումների առաջացման պատճառները,
7. մեկնաբանել և վերլուծել ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոփոխությունները կարճատև և երկարատև ժամանակահատվածներում,
8. վերլուծել և գնահատել IS կորը՝ փոխառու միջոցների շուկայի միջոցով,
9. ներկայացնել փողի շուկան և վերլուծել LM կորը,
10. վերլուծել և գնահատել ՀՀ արտաքին առևտրի զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները,
11. մեկնաբանել և վերլուծել արժույթի փոխանակային կուրսի ազդեցությունը բաց տնտեսական համակարգում,
12. գնահատել խնայողության նորմի, կապիտալի կայուն մակարդակի և եկամտի փոխառնչությունները:

**Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.**

1. շուկայական տնտեսության առանձնահատկություններին,
2. պետական կարգավորման գործիքների կիրառման մեխանիզմներին,
3. ՀՆԱ-ի ըստ ծախսերի, եկամուտների և ըստ ավելացված արժեքի հաշվարկման մեթոդներին, տնտեսության զարգացման օրինաչափություններին,
4. տնտեսական աճի ապահովման սկզբունքներին,
5. ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա տնտեսական քաղաքականության ազդեցության սկզբունքներին,
6. բնակչության զբաղվածության պետական կարգավորման սկզբունքներին,
7. փողի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ձևավորման մեխանիզմին՝ իրացվելիության նախընտրության տեսության մեկնաբանությամբ,
8. տնտեսական տատանումների կանխման մեխանիզմներին,
9. տվյալ երկրի ապրանքների ու ծառայությունների հոսքերի վրա տնտեսական քաղաքականության ազդեցության առանձնահատկություններին և օրինաչափություններին,

10. երկրի վճարային հաշվեկշռի վրա տնտեսական քաղաքականության ազդեցության առանձնահատկություններին և օրինաչափություններին,
11. տնտեսական աճի ապահովման գործում կապիտալազինվածության, բնակչության աճի և տեխնոլոգիական առաջադիմության փոխառնչությունների գնահատման սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մակրոտնտեսական կարգավորման առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Մակրոտնտեսական կարգավորման մեթոդաբանությունը: **Թեմա 3.** Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը: **Թեմա 4.** Ազգային եկամտի արտադրությունը, բաշխումը և օգտագործումը: հավասարակշռությունն ապրանքների ու ծառայությունների և ֆինանսական շուկաներում: **Թեմա 5.** Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի հիմնական դրույթները: **Թեմա 6.** Աշխատանքի շուկան և դրա ենթակառուցվածքները, գործազրկությունը և բնակչության զբաղվածության մակրոտնտեսական քաղաքականությունը: **Թեմա 7.** Ինֆլացիայի առաջացման պատճառները և հետևանքները: ՀՀ Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրները: **Թեմա 8.** Տնտեսական ճգնաժամի հաղթահարման ուղիները: Տնտեսության կայունացման քաղաքականությունը: **Թեմա 9.** Մակրոտնտեսական կարճաժամկետ հավասարակշռության IS-LM մոդելն ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներում: **Թեմա 10.** Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական կարգավորման պետական մարմինները և դրանց գործառույթները: **Թեմա 11.** Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական և արժույթային քաղաքականությունը: **Թեմա 12.** Ռեբերտ Սոլովի տնտեսական աճի մոդելը:

12/Բ25 Սոցիոլոգիա (2 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, սպուդարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիայի՝ որպես գիտության կայացման առանձնահատկություններին, գիտությունների համակարգում սոցիոլոգիայի տեղին ու դերին, սոցիոլոգիայի աշխարհայացքային և էթիկական առանձնահատկություններին, ուսումնասիրության առարկային՝ հասարակությանը և դրա կառուցվածքին, սոցիոլոգիայի հիմնական և հիմնարար տեսություններին, մշակույթին և դրա տարրերին, ինչպես նաև հասարակության մեջ տեղի ունեցող մի շարք սոցիալական գործընթացներին ու առկա հիմնախնդիրներին: Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիոլոգիական գիտության առանցքային հասկացություններին և պարզաբանել սոցիալական աշխատանքի տարբեր բնագավառներում դրանց կիրառումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/.

- սոցիոլոգիական գիտելիքների ազատ կիրառության հիմնարար սկզբունքի մասին,
- ինչպես կազմել ճիշտ պատկերացում հասարակության սոցիալական կառուցվածքի մասին,
- սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդների, դրանց առանձնահատկությունների և կիրառության մասին,
- ինչպես իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

- առանձնացնել առօրյա կյանքի երևույթների և գործընթացների սոցիալական էությունը,
- կիրառել սոցիոլոգիական տարբեր տեսական մոտեցումներ՝ հասարակության տարբեր գործընթացների, հիմնախնդիրների մեկնաբանման նպատակով,
- իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- սոցիոլոգիական աշխարհայացքի առանձնահատկություններին:
- տեսական գիտելիքները գործնականում կիրառելուն:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սոցիոլոգիան որպես գիտություն: Սոցիոլոգիան որպես գիտություն. կայացման պատմությունն ու զարգացման առանձնահատկությունները: Սոցիոլոգիայի առաջացման նախադրյալները: Սոցիոլոգիայի օբյեկտը և առարկան: Սոցիոլոգիայի մեթոդը: Սոցիոլոգիայի կառուցվածքը: Մակրո և միկրոսոցիոլոգիա: Սոցիոլոգիան և այլ գիտությունները: Սոցիոլոգիայի գործառույթները: **Թեմա 2. Ամերիկյան և ժամանակակից արևմտյան սոցիոլոգիան:** 1920-1940 թթ. էմպիրիկ սոցիոլոգիան: Թ. Փարսոնսի սոցիալական գործողության տեսությունը, սոցիալական համակարգերի հայեցակարգը: Ռ. Մերթոնի միջին մակարդակի տեսությունը և գործառական վերլուծությունը: Բախման տեսությունը: Դյուրկհեյմյան ավանդույթը ֆրանսիական սոցիոլոգիայում: Վեբերական և մարքսիստական ավանդույթները գերմանական սոցիոլոգիայում: Ժամանակակից արևմտյան սոցիոլոգիա:

Թեմա 3. Հասարակությունը որպես սոցիոլոգիական վերլուծության օբյեկտ: Հասարակության մասին պատկերացումների ծագումը: «Հասարակություն» հասկացությունը հիմնական սոցիոլոգիական տեսություններում: Հասարակությունը որպես սոցիալական

համակարգ: Հասարակության հիմնական հայտանիշները: Հասարակությունների տիպավորումը: «Սոցիալական կառուցվածք» հասկացությունը: Մակրո և միկրոկառուցվածք: Սոցիալական խմբեր: **Թեմա 4.** Սոցիալական հաստատություններ և սոցիալական կազմակերպություններ: «Սոցիալական հաստատություն» հասկացությունը: Սոցիալական հաստատությունների հիմնական հայտանիշները: Սոցիալական հաստատությունների տիպաբանությունը: Սոցիալական հաստատությունների գործառույթները: «Կազմակերպություն» հասկացությունը: Սոցիալական կազմակերպությունների ձևավորման մեխանիզմները: Սոցիալական կազմակերպության հիմնական հայտանիշները: Սոցիալական կազմակերպությունների տիպաբանությունը: **Թեմա 5.** Սոցիալական շերտավորվածություն և սոցիալական շարժունություն: Սոցիալական անհավասարության հիմնախնդիրը սոցիոլոգիայում: «Սոցիալական շերտավորվածություն» հասկացությունը: Շերտավորված համակարգերի տիպերը: Խորհրդային հասարակության սոցիալական շերտավորվածությունը: «Սոցիալական շարժունություն» հասկացությունը: Սոցիալական շարժունության հիմնական տեսակները: Սոցիալական շարժունության հիմնական ուղիներն ու մեխանիզմները: Սոցիալական շարժունության հիմնական չափանիշները: Սոցիալական շարժունությունը ԽՍՀՄ-ում և Ժամանակակից հասարակության մեջ:

Թեմա 6. Անձի սոցիոլոգիական հիմնախնդիրները և սոցիալականացումը: «Անձ հասկացությունը» և անձի տեսությունները: Անձի կառուցվածքը: Անձի տիպերը: Անձի գործառույթները, սոցիալական կարգավիճակը և սոցիալական դերերը: Հասարակության և անձի փոխազդեցությունը: Սոցիալականացման հասկացությունները և տեսությունները: Սոցիալականացման փուլերը: Սոցիալականացման գործակալները և ինստիտուտները:

Թեմա 7. Շեղված վարք: «Սոցիալական նորմեր» հասկացությունը: Սոցիալական նորմերի տեսակները: Վարքի շեղման բացատրության հիմնական գիտական մոտեցումները: Շեղված վարք: Շեղված վարքի պատճառները: Վարքի շեղման հիմնական ձևերը: Սոցիալական հսկողության հիմնախնդիրները, հիմնական մեխանիզմներն ու մեթոդները:

Թեմա 8. Սոցիոլոգիական հետազոտություններ. կառուցվածքը, մեթոդիկան և տեխնիկան: Սոցիոլոգիական հետազոտության փուլերն ու տեսակները: Սոցիոլոգիական հետազոտությունների ծրագիրը: Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդները: Դիտարկման մեթոդը:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդը: Փորձի մեթոդ: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների կիրառումը և վերլուծությունը:

14/Բ18 Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառումում (5 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ավտոմատացման հիմունքներին, դրա դրական և բացասական կողմերին, տնտեսագիտական ինֆորմացիայի մշակման մեթոդներին, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններին, ինտելեկտուալ և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Գիտենա

1. Նկարագրել ձեռնարկությունների կազմակերպչատնտեսական կառավարման ավտոմատացման հիմունքները,
2. Թվարկել ավտոմատացման դրական և բացասական կողմերը,
3. Ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ֆինանսական ոլորտում:

Կարողանա

1. ընտրել շուկայում առկա բազմազան ծրագրային փաթեթներից տվյալ կազմակերպությանը համապատասխան ծրագրային փաթեթ ,
2. նախագծել տվյալ կազմակերպության ավտոմատացման պլանը,
3. նախապատրաստել կազմակերպության անձնակազմին ավտոմատացմանը,

Տիրապետի

1. բացահայտել,կանխատեսել ավտոմատացման ընթացքում առաջացող ռիսկերը,
2. համեմատել SS ներդրման մի քանի տարբերակներ,
3. վերլուծել SS ներդրման ընթացքը կազմակերպությունում՝ վեր հանելով թերությունները, և ձեռնարկել քայլեր դրանց վերացման ուղղությամբ
4. շահագործել տարբեր ֆինանսական ծրագրային փաթեթներ
5. կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ

Բովանդակությունը.

Թեմա 1. Հասկացություն տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց կիրառման մասին:
Թեմա 2. Տնտեսագիտական ինֆորմացիան որպես հասարակության ինֆորմացիոն ռեսուրսների բաղկացուցիչ մաս: **Թեմա 3.** Ինֆորմացիան և ինֆորմացիոն գործընթացները կազմակերպչական տնտեսագիտական ոլորտում: **Թեմա 4.** Ավտոմատ ինֆորմացիոն համակարգերի դերը և տեղը տնտեսագիտությունում: **Թեմա 5.** Ավտոմատ համակարգերի կիրառության արդյունավետության գնահատումը: **Թեմա 6.** Ֆինանսիստի դերը և տեղը ինֆորմացիոն համակարգերի ստեղծման, զարգացման և շահագործման փուլերում: **Թեմա 7.** Ներբանկային տեղեկատվական տեխնոլոգիաներ: **Թեմա 8.** Բանկային էլեկտրոնային ծառայությունների առաջացումը: **Թեմա 9.** Բանկումատներ, պլաստիկ քարտեր, վճարման էլեկտրոնային համակարգեր: **Թեմա 10.** Արմենիան քարտ վճարային համակարգը: **Թեմա 11.** Մեծածախ հաշվարկային համակարգեր: **Թեմա 12.** Ռիսկերը տեղեկատվական տեխնոլոգիական համակարգում: **Թեմա 13.** Տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգություն և անվտանգության քաղաքականություն: **Թեմա 14.** Ռիսկերի կառավարման գործնական միջոցառումներ տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերում: **Թեմա 15.** Ինտելեկտուալ տեխնոլոգիաներ և համակարգեր և դրանց կիրառումը ֆինանսական ոլորտում: **Թեմա 16.** Հեռահաղորդակցման տեխնոլոգիաները տնտեսագիտական ինֆորմացիոն համակարգերում: **Թեմա 17.** Տեղեկատվական համակարգերի զարգացման հեռանկարները հաշվապահական հաշվառումում:

12/Բ21 Մենեջմենթ (4 Կրեդիտ)

18 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

«Մենեջմենթի հիմունքներ» դասընթացի նպատակն է ուսանողներին գիտական տեղեկատվություն մատուցել կազմակերպությունների արդյունավետ կառավարման վերաբերյալ: Այս պարագայում ուսանողները ձեռք են բերում միջանձնային հարաբերությունների կառուցման, կազմակերպչական աշխատանք կատարելու, ղեկավարի դեր ստանձնելու, խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու հմտություններ, փոխհամագործակցության, հասարակական և մասնագիտական ոլորտներում կոնֆլիկտների լուծման, արժեքային համակարգին և սահմանված սկզբունքներին համապատասխան գործելու կարողություններ:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք՝ ուսանողը գիտի.

1. Կառավարման մեթոդները,
2. կառավարման սկզբունքները և զարգացման փուլերը,
3. մոտիվացիայի հասկացությունը և էությունը, դրսևորման ձևերը,
4. կոմունիկացիոն գործընթացի տարրերը,

5. միջանձնային հաղորդակցության տեսակներն ու դրանց գործառույթները՝ պերցեպտիվ, ինտերակտիվ, կոմունիկացիոն,
6. հետադարձ կապի նշակությունը կոմունիկացիոն գործընթացում,
7. կոմունիկացիոն գործընթացի արգելքների հաղթահարման ուղիները,
8. վերահսկողության ձևերն ու դրանց առանձնահատկությունները,
9. գործարարության ծրագրի բաժինները,
10. այլընտրանքային տարբերակների գնահատումը կառավարչական որոշումների ընդունման գործընթացում,
11. կոնֆլիկտի և սթրեսի հասկացությունն ու էությունը,
12. կոնֆլիկտի ներանձնային, միջանձնային, անձի և խմբի միջև միջխմբային ձևերը,
13. խմբի համախմբվածությունը պայմանավորող գործոնները:

*Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի /կկարողանա/
Կարողություն՝ ուսանողը կարող է.*

1. լուսաբանել գործառնական ռազմավարության բնութագրիչ հատկանիշները,
2. կատարել կորպորատիվ և գործարար ռազմավարությունների բնութագրիչ հատկանիշների համեմատական վերլուծություն,
3. կատարել անձնակազմի աշխատանքային գործունեության գնահատում,
4. մշակել կադրերի պատրաստման և վերապատրաստման մեխանիզմներ,
5. բացահայտել կոնֆլիկտների առաջացման պատճառները,
6. մոդելավորումը կապակցել կառավարչական որոշումների ընդունման գործընթացի հետ,
7. վերլուծել սոցիալական կառավարման առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

Հմտություն՝ ուսանողը տիրապետում է.

1. ռազմավարական պլանավորման հիմունքներին,
2. գործարարության ծրագրի մշակման մեթոդական սկզբունքներին,
3. կազմակերպության գործավարության և փաստաթղթաշրջանառության հիմունքներին,
4. իշխանության ձևերի և առաջնորդման ձևերի առանձնահատկություններին,
5. ղեկավարի առաջնորդման ոճի նորարարական- վերլուծական, նորարարական- ներըմբռնողական, պահպանողական- վերլուծական, պահպանողական – ներըմբռնողական ձևերին,
6. բախումների և սթրեսների կառավարման մեխանիզմներին,

7. կառավարման գործընթացի վրա փոփոխությունների ազդեցության ձևերին, կոնֆլիկտի լուծման մեխանիզմներին,
8. կառավարչի՝ մարդկային ռեսուրսների կառավարման գործիքակազմին,
9. կառավարման գործընթացում ռացիոնալ որոշումների ընդունման հիմունքներին,
10. մոդելավորման սկզբունքներին կառավարչական որոշումների ընդունման գործընթացում,
11. ինքնաներկայացման հմտություններին,
12. ճարտասանական վարպետության ձեռք բերման ուղիներին,
13. կորպորատիվ կուլտուրայի բարելավման ուղիներին:

Բովանդակություն

Թեմա 1. Կառավարման էությունը և մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Ռազմավարական պլանավորման էությունը և մակարդակները: Գործարարության ծրագրի կառուցվածքը և հիմնական ցուցանիշները: **Թեմա 3 .** Վերահսկողությունը որպես կառավարման գործառույթ: Բանկային վերահսկողության առանձնահատկությունները: **Թեմա 4** Մոտիվացիայի էությունը: Ա.Մասլոուի, Ֆ.Հերցբերգի և Պորտեր-Լոուլերի մոտիվացիոն տեսությունները: **Թեմա 5.** Կոմունիկացիաները կառավարման համակարգում : Գործավարության և փաստաթղթաշրջանառության կազմակերպում: **Թեմա 6.** Կառավարչական որոշումների ընդունումը և իրագործման կազմակերպումը: **Թեմա 7.** Խմբերի կառավարման առանձնահատկությունները: **Թեմա 8** Իշխանության էությունը և ձևերը: Առաջնորդման հիմնական ոճերը: **Թեմա 9.** Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսի կառավարում: **Թեմա 10.** Անձնակազմի կառավարման առանձնահատկությունները: **Թեմա 11.** Սոցիալական կառավարման սկզբունքները և առանձնահատկությունները: **Թեմա 12.** Կազմակերպության կուլտուրա և սոցիալական պատասխանատվություն: **Թեմա 13.** Ճարտասանության դերը կառավարման համակարգում:

12/Բ20 Մարքեթինք (4 Կրեդիտ)

16 ժամ (10 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին հաղորդել անհրաժեշտ հենքային գիտելիքներ և կարողություններ՝ տարբեր շուկաներում մարքեթինգի առանձնահատկությունները վերհանելու, մարքեթինգի միջավայրի ուսումնասիրման խնդիրները բացահայտելու, մարքեթինգային հետազոտություններ և շուկայական վերլուծություններ իրականացնելու նպատակով: Այս պարագայում

ուսանողները ձեռք են բերում շուկան վերլուծելու, սեզմենտավորելու գործընթացներն ըմբռնելու, կարիքները, պահանջմունքները և պահանջարկն ընտրված շուկաներում գնահատելու հմտություններ: Մարքեթինգային համալիրի շրջանակներում ուսանողները կարող են կատարել համեմատական վերլուծություն, վերհանել գնագոյացման որոշումների վրա ազդող գործոնները: Ոսումնառության ընթացքում ուսանողները տիրապետում են ապրանքը գովազդելու և վաճառելու նպատակով սպառողներին գրավելու, գնային քաղաքականության վարման սկզբունքներին, գնագոյացման մեթոդներին և ռազմավարությանը՝ որպեսզի սպառողը տեղեկացված լինի ապրանքի գոյության մասին և ցանկանա գնել այն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք՝ ուսանողը գիտի.

1. մարքեթինգի ժամանակակից մեկնաբանությունները, մարքեթինգային և իրացման մոտեցումների էությունը,
2. մարքեթինգային գործունեության կառավարման կազմակերպչական կառուցվածքը,
3. ռազմավարական պլանավորման խնդիրները, մակարդակները, տրամաբանությունը և փուլերը,
4. «Բուսթոն Քոնսալթինգ գրուփ» մատրիցայի բնութագիրը,
5. Փորթերի ընդհանուր ստրատեգիական մոդելի բնութագիրը,
6. բնակչության պահանջարկի վերաբերյալ ինֆորմացիայի աղբյուրները,
7. տեղեկատվական-որոնողական հարթակներում կիրառվող գործիքակազմերը,
8. հարցումների տեսակները, հարցման նպատակը, հարցաթերթիկի կառուցվածքը,
9. շուկայի հատվածավորման չափանիշները,
10. իրացման կանխատեսումը և ապրանքի կենսացիկլը,
11. մանրածախ առևտրի տեսակները, մեծածախ առևտրի կողմից իրականացվող գործառույթները,
12. գովազդի կարևորությունը, գովազդի բնութագրերը,
13. կոմերցիալ որոշումների առանձնահատկություններն ու բնութագրիչները,
14. ոչ թանկ որակի և բարձրացված գնի ռազմավարության բնութագիրը ռազմավարության բնութագիրը,
15. միջազգային մարքեթինգի էությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

Կարողություն՝ ուսանողը կարող է.

1. կապակցել մարքեթինգով վերահսկվող և չվերահսկվող փոփոխականները,

2. վերհանել մարքեթինգային ռազմավարության խնդիրները,
3. կատարել կորպորատիվ և գործարար ռազմավարությունների բնութագրիչ հատկանիշների համեմատական վերլուծություն,
4. կազմակերպել և ինքնուրույն կատարել մարքեթինգային հետազոտական աշխատանք,
5. հիմնավորել լրատվության դերը մարքեթինգային որոշումների կայացման գործում,
6. կատարել ներքին և արտաքին միջավայրերի իրավիճակային վերլուծություն և գնահատում,
7. որակի և ձևավորման նկատմամբ գնորդների կողմից ներկայացվող պահանջների, չբավարարված պահանջարկի հաշվառում,
8. վերլուծել գործընթացի դերն ու առանձնահատկությունները,
9. մարքեթինգային հետազոտական արդյունքների հիման վրա ձևակերպել եզրակացություններ և ներկայացնել առաջարկություններ,
10. հարցումները գործնականում կիրառել որպես պահանջարկի վերաբերյալ ինֆորմացիայի հավաքման աղբյուր,
11. կատարել գնային ոչ գնային մրցակցության համեմատական վերլուծություն,
12. դասակարգել կոմերցիալ որոշումները, վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակներ,
13. ձևակերպել սեփական դատողությունները և գրավոր շարադրել տրամաբանական հաջորդականությամբ,
14. կատարել ոչ թանկ որակի և բարձրացված գնի ռազմավարությունների համեմատական վերլուծություն,
15. ներկայացնել խնայողական և սերուցքի հանման ռազմավարությունների հիմնական բնութագիրը,
16. ներկայացնել մարքեթինգի առանձնահատկությունները ծառայությունների ոլորտում:

**Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
Հմտություն՝ ուսանողը տիրապետում է.**

1. մարքեթինգային կառավարման կառուցակարգերին,
2. գործարարության ծրագրի մշակման մեթոդական սկզբունքներին,
3. մարքեթինգային հետազոտությունների գործընթացի կազմակերպման հիմունքներին,
4. առևտրի իրավիճակի ուսումնասիրության կազմակերպման հիմունքներին,
5. ներքին և արտաքին միջավայրերի իրավիճակային վերլուծության սկզբունքներին,
6. ապրանքների ցուցահանդես-վաճառքի կազմակերպման հիմունքներին,
7. պահանջարկի ուսումնասիրության համար ցուցահանդես-դիտումների կազմակերպման սկզբունքներին,

8. պահանջարկի ուսումնասիրության պրակտիկայում հարցում- հարցազրույցների կազմակերպման սկզբունքներին,
9. հատվածավորման ստրատեգիայի պլանավորման սկզբունքներին,
10. նոր արտադրանքի պլանավորման հիմունքներին, ապրանքի շարժի և իրացման պլանավորման սկզբունքներին,
11. գովազդի պլանի մշակման սկզբունքներին,
12. հիմնախնդրին վերաբերող տարբեր հեղինակների կարծիքներն ու տեսակետները մեկնաբանելու ունակությունների,
13. կոմերցիալ որոշումների կատարման վրա վերահսկողության սկզբունքներին,
14. նոր ապրանքների գների սահմանման մոտեցումներին,
15. պարզևավճարային հավելադիրների ռազմավարության մշակման սկզբունքներին,
16. շուկա ներթափանցելու ռազմավարության սկզբունքներին,
17. միջազգային մասշտաբով իրացման և առաջարժման պլանավորման սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մարքեթինգի համառոտ բովանդակությունը, մարքեթինգի սահմանումը:

Թեմա 2. Մարքեթինգային ռազմավարությունը բիզնեսի զարգացման գործում:

Թեմա 3. Ստրատեգիական պլանավորման գործընթացի կազմակերպումը: **Թեմա 4.** Շուկայի իրավիճակի էությունը: **Թեմա 5.** Պահանջարկի ուսումնասիրության էությունն ու խնդիրները: **Թեմա 6.** Հարցաթերթային հարցումներ: **Թեմա 7.** Շուկայի հատվածավորման չափանիշները, ապրանքի շարժի և իրացման պլանավորումը: **Թեմա 8.** Մեծածախ և մանրածախ առևտրի դերն ու նշանակությունը: **Թեմա 9.** Կոմերցիալ որոշումների էությունն ու նշանակությունը: **Թեմա 10.** Գնագոյացման ռազմավարության չափորոշիչները և նոր ապրանքների գների սահմանումը: **Թեմա 11.** Մարքեթինգի առանձնահատկությունները ծառայությունների ոլորտում: Միջազգային մարքեթինգի տեսությունը:

14/Բ1 Աշխատանքի տնտեսագիտություն (3 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալ աշխատանքային ռեսուրսների, բնակչության, նրանց կենսամակարդակի, զբաղվածության, աշխատանքային շուկայի, աշխատանքի արտադրողականության, աշխատանքի կազմակերպման և վարձատրման առանձնահատկությունների ու ձեռնարկություններում անձնակազմի ձևավորման վերաբերյալ: Դա կարևոր և անհրաժեշտ նախադրյալ է ուսանողների կողմից կրթության

հետագա փուլերում դասավանդվող մյուս մասնագիտական դասընթացների ուսումնասիրման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա շուկայական տնտեսության պայմաններում հասարակական կյանքի սոցիալտնտեսական օրինաչափությունները, սկզբունքները,երևույթները: Աշխատանքային ռեսուրսների վերարտադրության փուլերը, դիտելով այն իբրև յուրահատուկ ապրանք, նրա շարժը և ներուժը:

2.Կարողանա բացահայտել աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությանը բարձրացման պահուստները: Կիրառել աշխատանքի կազմակերպման և վարձատրման առաջավոր դերը կազմակերպություններում:

3.Տիրապետի աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման առաջավոր ձևերին ու մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1._Աշխատանքի տնտեսագիտություն դասընթացի առարկան, խնդիրները: **Թեմա 2.** Աշխատանքային ռեսուրսների հասկացությունը և աշխատանքային ներուժ: **Թեմա 3.** Բնակչության զբաղվածությունը և աշխատանքի շուկա: **Թեմա 4.** Բնակչության կենսամակարդակը և եկամուտները: **Թեմա 5.** Աշխատանքի արտադրողականությունը: **Թեմա 6.** Աշխատանքի կազմակերպում: **Թեմա 7.** Աշխատանքի նորմավորում:_**Թեմա 8.** Աշխատանքի կազմակերպում և տարիֆային համակարգ: **Թեմա 9.** Աշխատավարձի ձևերը և համակարգերը: **Թեմա 10.** Աշխատանքի վարձատրության պարզևատրության համակարգը: **Թեմա 11.** Ձեռնարկություններում անձնակազմի ձևավորումը:

12/Բ4 Բնապահպանություն և բնօգտագործման տնտեսագիտություն (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին գիտելիքներ հաղորդել բնական պաշարների հաշվենկատ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության կառավարման բնագավառի վերաբերյալ, իրազեկ դարձնել բնօգտագործման ու բնապահպանական օրենսդրությանը և նրանց մոտ ձևավորել էկոնոմիկո-էկոլոգիական աշխարհայացք:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

բնօգտագործման սկզբունքները, բնապահպանական միջոցառումների սոցիալ-տնտեսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները, բնապահպանական հարկի ու բնօգտագործման վճարների հաշվարկման կարգերը <<-ում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

- հաշվարկել բնապահպանական ծախսերի բացարձակ և հարաբերական տնտեսական արդյունավետության ցուցանիշները:
- հավաքագրել բնապահպանական տվյալներ երկրի, առանձին բնագավառներում ծագած խնդիրների վերաբերյալ, դրանք վերլուծել, և անհրաժեշտության դեպքում, լուծումներ առաջադրել

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- երկրի բնօգտագործման և բնապահպանական իրավիճակին՝ ընդհանուր գծերով, ՀՀ բնական պաշարներին վերաբերող առանձին տեղեկությունների ու թվական տվյալների:
- Սևանա լճի հարթակի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «Կանաչ տնտեսություն» ներկայիս ծրագրերին:

Բովանդակությունը.

Թեմա 1 Բնօգտագործման տնտեսագիտությունը որպես գիտություն: Կենսոլորտ կամ բիոսֆերա և բիոգեոցենոզ հասկացությունները: Մարդկային հասարակություն շրջակա միջավայր փոխներգործությունը: Նոոսֆերա որպես կյանքի ուղեցույց: **Թեմա 2** Բնօգտագործման տնտեսագիտության առարկան, խնդիրները և կապը մյուս գիտությունների հետ: Բնօգտագործման տնտեսագիտությունը որպես գիտություն: Բնօգտագործման տնտեսագիտության հիմնական խնդիրները: Բնօգտագործման տնտեսագիտության կապը մյուս գիտությունների հետ: **Թեմա 3** Բնական պաշարների դերը հասարակական կյանքում և դրանց ընդհանուր բնութագրումը: Բնական պաշարները որպես հասարակության և արտադրության զարգացման գործոն: Բնական պաշարներ և բնական պայմաններ: Բնական պաշարների տեսակները: «Կանաչ տնտեսություն» և շրջակա միջավայրի վնասման նվազեցում: **Թեմա 4** Բնօգտագործման օրինաչափությունները և սկզբունքները: Տեղեկություններ բնակչության աճի տեմպերի և մեկ բնակչի հաշվով բնական պաշարների վերաբերյալ: Բնօգտագործման սկզբունքները: Բնօգտագործման օրինաչափությունները և առաջադեմ պետությունների փորձը: **Թեմա 5** «Հողային պաշարների պահպանման և ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները: «Հողային ֆոնդի դասակարգումը ըստ նպատակային նշանակության: Հողերի պահպանության խնդիրները: Հողային պաշարների կրճատման պատճառները: Հողօգտագործման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում: **Թեմա 6** Ջրային պաշարների պահպանման և ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները ՀՀ-ում: Ջրի տեղը և դերը բնության մեջ և ջրօգտագործող հիմնական ոլորտները: Ջրօգտագործման վիճակը և խմելուջրի հիմնախնդիրները աշխարհում ու ՀՀ-ում: Ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ-ում: **Թեմա 7** Անտառային պաշարների պահպանման և ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները ՀՀ-ում: Տեղեկություններ ՀՀ անտառային տարածքների և

դրանց չափերի փոփոխությունների մասին: Անտառների ներկայիս վիճակը, անտառօգտագործման հիմնախնդիրները ՀՀ-ում: Անտառների տնտեսական նշանակությունը և դրա բարձրացման ուղիները: **Թեմա 8 Օգտակար հանածոների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները ՀՀ-ում:** Ազգային տնտեսության զարգացման գործում հանքահումքային պաշարների դերը: Արդյունահանող արդյունաբերությունը որպես ՀՀ-ում տնտեսության զարգացման գերակա ուղղություն: Անթափոն տեխնոլոգիաների կիրառման և երկրորդային հումքի անմնացորդ օգտագործման անհրաժեշտությունը: **Թեմա 9 Բուսական և կենդանական աշխարհի պահպանման ու ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները ՀՀ-ում:** Կենդանական աշխարհի պահպանության խնդիրները և այն իրականացնելու ձևերը: Սևանա լճի կենդանական աշխարհի օգտագործման ներկա վիճակը և այն բարելավելու հնարավորությունները: Վայրի բուսատեսակների պահպանումը և օգտագործման հնարավոր ուղղությունները

Թեմա 10 Օդային ավազանի պահպանության հիմնախնդիրները ՀՀ-ում: Օդային ավազանի օգտագործման ուղղությունները: Օդային ավազանը աղտոտող աղբյուրների դասակարգումը: Մթնոլորտային օդի աղտոտումը պակասեցնելու հնարավորությունները: **Թեմա 11 Բնապահպանական ծախսերի ընդհանուր տնտեսական արդյունավետությունը:** Բնապահպանական միջոցառումների էկոլոգիական և սոցիալ-տնտեսական արդյունավետությունը: Բնապահպանական ծախսերի բացարձակ տնտեսական արդյունավետությունը: Արտադրանքի որակի բարձրացմանը նպաստող կամ իջեցումը կանխող միջոցառումների ընդհանուր տնտեսական արդյունքը:

Թեմա 12 Բնապահպանական ծախսերի համեմատական տնտեսական արդյունավետությունը Բնապահպանական ծախսերի բերովի ծախսերի հաշվարկը: Լազ-ի հաշվարկումը բնապահպանական կապիտալ ներդրումների արդյունավետության գնահատման ժամանակ

Թեմա 13 ՀՀ-ում բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի իրավական հիմքերը Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր: Բնապահպանական հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման կարգն ու ժամկետները: Օգտակար հանածոների արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարների հաշվարկման կարգը:

12/Բ29 Տնտեսագիտության տեսություն-1 (4 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, սրբուզարք

Դասընթացի մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է՝

Գիտենա

- տնտեսական հարաբերությունների ժամանակակից տեսությունները
- շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունները

- շուկայի հիմնական տարրերի գործողության մեխանիզմը
- տնտեսության մասնավոր և պետական հատվածների փոխադարձաբարձրությունը
- պահանջարկի և առաջարկի տնտեսական օրենքների գործողության առանձնահատկությունները
- սպառողական վարքագծի հիմնական դրույթները
- մրցակցության դերը շուկայական տնտեսության զարգացման գործում

Կարողանա

- կողմնորոշվել տնտեսական հարաբերությունների ժամանակակից տեսական քննարկումներում
- վերլուծել տնտեսության շուկայական մեխանիզմի գործողության արդյունքները
- մեկնաբանել տնտեսության կարգավորման պետական քաղաքականության միջոցառումները
- կատարել հաշվարկներ պահանջարկի և առաջարկի փոփոխությունների արդյունքների հիման վրա
- ներկայացնել շուկայական տնտեսության մոնոպոլացման աստիճանին համապատասխան տնտեսության զարգացման խնդիրները

Տիրապետի

- տնտեսական հետազոտության մեթոդներին
- տնտեսական օրենքների պահանջների գործնական կիրառման մեխանիզմներին
- տնտեսական և իրավական օրենքների զուգակցմանը
- պոզիտիվային և նորմատիվային տնտեսագիտության դրույթներին
- հաշվապահական և տնտեսական ծախսերի հաշվարկման մեխանիզմներին

տնտեսական արդյունավետության ցուցանիշների (շահույթ, շահութաբերություն և այլն) գնահատման մեթոդներին:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1 Տնտեսագիտության տեսության առարկան և ուսումնասիրության մեթոդները: Տնտեսական պատմության պարբերացումը: **Թեմա 2.** Տնտեսագիտության ընդհանուր խնդիրները և ելակետային հասկացությունները: **Թեմա 3.** Տնտեսության պետական հատվածի ընդհանուր բնութագիրը **Թեմա 4.** Շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները, ընդհանուր հասկացություններն ու հիմնական տարրերը **Թեմա 5.** Պահանջարկի և առաջարկի տեսությունը: **Թեմա 6.** Սպառողական վարքագծի տեսությունը **Թեմա 7.** Կատարյալ մրցակցության շուկայի գործողության մեխանիզմը **Թեմա 8.** Ոչ կատարյալ մրցակցության շուկայի գործողության մեխանիզմը:

12/Բ30 Տնտեսագիտության տեսություն-2 (4 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է՝

Գիտենա

- արտադրության կազմակերպման տեսական գործառույթները
- արտադրության գործոնների շուկաների փոխկապվածության օրինաչափությունները
- աշխատանքի շուկայի գործողության մեխանիզմը և դրա առանձնահատկությունները
- կապիտալի շուկայի գործողության մեխանիզմը
- հողային ռեսուրսների շուկայի և հողային ռենտայի տեսական հիմնախնդիրները
- ձեռնարկատիրական գործունեության սկզբունքները և բիզնեսի կազմակերպման խնդիրները
- ՀԱԱ, ՀՆԱ և ազգային տնտեսության մյուս հասկացությունների տնտեսագիտական բովանդակությունը

Կարողանա

- ներկայացնել արտադրության ֆունկցիա հասկացության էությունը և մասշտաբի էֆեկտները
- պարզաբանել արտադրության գործոնների ֆունկցիոնալ կախվածությունը
- վերլուծել ռեսուրսների օգտագործման կանոնները
- ներկայացնել գրաֆիկների տեսքով արտադրության գործոնների պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունները
- կատարել աշխատանքի և աշխատավարձի փոխադարձ կապի վերլուծություն
- քննարկել տարբեր շուկաներում ժամկետային նախապատվությունները
- վերլուծել ձեռնարկատիրական գործունեության ռիսկային իրավիճակները
- տարանջատել փոխկապակցված մակրոտնտեսական ցուցանիշների համակարգի բաղադրիչները

Տիրապետի

- արտադրության մասշտաբի էֆեկտների հաշվարկման մեթոդներին
- գրաֆիկներ և աղյուսակներ կազմելու մեխանիզմներին
- ռեսուրսների փոխադարձ փոխարինելիության գործընթացներին
- ծախսերի նվազեցման և շահույթի մաքսիմալացման հաշվարկման մեթոդներին
- մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածության դրսևորումներին
- ՀԱԱ և ՀՆԱ ցուցանիշների հաշվարկման մեթոդներին
- ազգային հաշիվների ներկայացման պահանջներին:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 9. Արտադրության տեսությունը, արտադրության գործոնների սահմանային արտադրողականությունը **ԹԵՄԱ 10.** Աշխատանքի շուկա և աշխատավարձ **ԹԵՄԱ 11.** Կապիտալի շուկան և տոկոսը **ԹԵՄԱ 12.** Հողային ռեսուրսների շուկան և ռենտան **ԹԵՄԱ 13** Ձեռնարկատիրական գործունեությունը և տնտեսական շահույթ **ԹԵՄԱ 14.** Ազգային տնտեսության գնահատման հիմնական ցուցանիշները:

12/Բ31 Տնտեսագիտության տեսություն- 3 (2 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է՝

Գիտենա

- մակրոտնտեսական հավասարակշռության տեսական ուղղությունները
- ամբողջական առաջարկ և ամբողջական պահանջարկ փոխհարաբերությունը և դրանց վրա ազդող գործոնների համակարգը
- մակրոտնտեսական հավասարակշռության քենսյան տեսության դրույթները
- եկամտի, սպառման, խնայողության և ներդրումների օրգանական կապը
- մակրոտնտեսական անկայունության առաջացման հիմունքները
- պետության տնտեսական քաղաքականության հիմնարար խնդիրները
- համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափությունները

Կարողանա

- ներկայացնել մակրոտնտեսական հավասարակշռության ժամանակակից մոդելները
- մեկնաբանել մակրոտնտեսական հավասարակշռության քենսյան առաջարկի տեսության առանձնահատկությունները
- վերլուծել մակրոտնտեսական անկայունության դրսևորման երևույթները (ճգնաժամ, գործազրկություն, ցիկլայնություն, լրիվ զբաղվածության խախտում և այլն)
- կողմնորոշվել պետության դրամավարկային քաղաքականության տարբեր դրսևորումներում
- պարզաբանել տնտեսության կարգավորման և շուկայական մեխանիզմները
- ներկայացնել մուլտիպլիկատոր - աքսելերատոր կապը
- գնահատել պետության սոցիալական քաղաքականության արդյունքները և կենսամակարդակի փոփոխությունները
- քննարկել և դասակարգել տնտեսական աճի տեսությունները
- ներկայացնել միջազգային տնտեսական ինստիտուտների դերը ազգային տնտեսությունների ինտեգրացման գործընթացում

Տիրապետի

- մակրոտնտեսական հավասարակշռության մոդելների սկզբունքներին
- մակրոտնտեսական հաշվարկներ կատարելու մեխանիզմներին և մեթոդներին
- տնտեսական անկայունություն առաջացնող գործոնների վերացման ուղիներին
- տնտեսական աճի մուլտիպլիկատորի և աքսելերատորի հաշվարկման մեթոդներին
- մակրոտնտեսական զարգացման ժամանակակից օրենքների (Օուքենի, Ֆիլիպսի, Լորենցի, Ջինիի և այլոց) գործողության մեխանիզմներին և դրանց գրաֆիկ պատկերների ներկայացման մեթոդներին
- պետության սոցիալական քաղաքականության իրագործման սկզբունքներին
- տնտեսական աճի ժամանակակից տեսությունների հիմնարար դրույթներին
- միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման ժամանակակից խնդիրներին:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 15. Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի հարաբերակցությունը և ազգային տնտեսության հավասարակշռություն **ԹԵՄԱ 16.** Սպառում, խնայողություն, ներդրում **ԹԵՄԱ 17.** Շուկայական տնտեսության պարբերաշրջանային զարգացումը **ԹԵՄԱ 18.** Փողի շուկան և դրամավարկային քաղաքականությունը **ԹԵՄԱ 19.** Արժեթղթերի շուկա **ԹԵՄԱ 20.** Ֆինանսական համակարգը և հարկաբյուջետային քաղաքականությունը **ԹԵՄԱ**

21. Սղաճային և հակասղաճային քաղաքականություն **ԹԵՄԱ 22.** Եկամուտների բաշխումը և պետության սոցիալական քաղաքականությունը **ԹԵՄԱ 23.** Տնտեսական աճի հիմնախնդիրները **ԹԵՄԱ 24.** Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից դրսևորումները

12/Բ32 Տնտեսագիտության տեսություն՝ Կուրսային աշխատանք (1 կրեդիտ)

1. Սեփականության իրավունքի տնտեսագիտական տեսությունը, սեփականության ձևերը և դրանց զարգացումները, Ռ. Քուուզի տեսությունը
2. Շուկայական մրցակցության էությունը, եղանակները, հակամոնոպոլային քաղաքականություն
3. Կապիտալի բնույթը, կապիտալի շուկայի էությունը և բնորոշ գծերը
4. Աշխատանքի շուկան, աշխատավարձի էությունը և ձևերը, աշխատավարձի մակարդակի հիմնախնդիրը տնտեսագիտության մեջ
5. Հողային ռեսուրսների շուկան, ռենտայի տնտեսագիտական բովանդակությունը և դրսևորման հիմնական ձևերը
6. Ագրարային հարաբերությունները, հողի գնի հիմնախնդիրը տնտեսագիտության մեջ
7. Փոքր գործարարության /բիզնեսի/ առանձնահատկությունները, արտադրական ծախսերի տնտեսական բովանդակությունը և կառուցվածքը
8. Եկամուտների բաշխման հիմնախնդիրը տնտեսագիտության մեջ և դրա մեխանիզմը
9. Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը, եկամուտների անհավասարությունը և աղքատության հիմնախնդիրը
10. Համախառն ազգային /ներքին/ արդյունքը և նրա հաշվարկման եղանակները
11. Ընդհանուր տնտեսական հավասարակշռությունը "Ամբողջական պահանջարկ-առաջարկ" /AD-AS/ մոդելում:
12. Պետական բյուջեի տնտեսագիտական բովանդակությունը
13. 27Համայնքային բյուջեի տնտեսական բովանդակությունը, կառուցվածքը
14. Հարկի տնտեսագիտական բովանդակությունը, տեսակները, հարկաբյուջետային քաղաքականություն
15. Տնտեսական պարբերաշրջանի էությունը և հիմնական տեսությունները
16. Սպառման և խնայողության քեյնսյան մոտեցումը, խնայողություն և ինվեստիցիա
17. Վարկային հարաբերությունները և դրանց դրսևորման ձևերը, բանկերը և դրանց գործառնությունները
18. Փողի շուկայի հավասարակշռությունը
19. Դրամավարկային քաղաքականությունը և նրա հիմնական ուղղություններն ու մեթոդները
20. Տնտեսական աճի էությունը, տնտեսական աճի գործոնները և շարժի ուժերը
21. Գիտատեխնիկական առաջընթացը և նրա դերը տնտեսական աճի գործում
22. Սղաճի էությունը և դրսևորման ձևերը, սղաճի սոցիալ-տնտեսական հետևանքները, հակասղաճային քաղաքականությունը և նրա հիմնական ուղղությունները
23. Զբաղվածության հիմնախնդիրը, գործազրկության էությունը, պատճառները և ձևերը
24. Գործազրկության և սղաճի փոխկապվածության հիմնախնդիրը, զբաղվածության կարգավորումը

Կուրսային աշխատանքի կրթական վերջնարդյունքները

Գիտելիք - Ուսանողը սովորի տնտեսագիտության տեսությունը կապակցել տնտեսավարման պրակտիկայի հետ, ինքնուրույն կերպով ուսումնասիրի տնտեսագիտական գրականությունը, վերլուծի վիճակագրական տվյալները, կարողանա տրամաբանված ձևով գրավոր շարադրել իր մտքերն ու դատողությունները:

Տնտեսագիտության հիմնահարցերից մեկի հիմնավոր ուսումնասիրության իրականացումը նպաստում է ուսանողի կողմից ամբողջ դասընթացի ավելի խորը յուրացմանը և գիտական ուսումնասիրության մեթոդների ու մոտեցումների ձևավորմանը:

Կարողություն - ներկայացնել տվյալ հիմնահարցի շուրջ ձևավորված տարբեր հեղինակների կարծիքներն ու տեսակետները և ցուցաբերել իր սեփական մոտեցումը: Վերլուծել փաստացի նյութերն ու վիճակագրական տվյալները և դրանց արդյունքները տրամաբանորեն կապակցել տեսական դրույթների հետ:

Հմտություն- ձեռք բերի ինքնուրույն հետազոտական աշխատանքի և տնտեսական հարաբերությունների գիտական վերլուծության հմտություն:

Ինքնուրույն կերպով ուսումնասիրի տնտեսագիտական գրականությունը, վերլուծի վիճակագրական տվյալները, կարողանա տրամաբանված ձևով գրավոր շարադրել իր մտքերն ու դատողությունները, որոնց հիման վրա առաջարկի տվյալ հիմնահարցի լուծման օպտիմալ տարբերակ:

12/P24 Միջազգային տնտեսական հարաբերություններ (3 Կրեդիտ)

18 ժամ (14 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Ուսանողներին տրամադրելու խորը և համակողմանի գիտելիքներ համաշխարհային շուկայում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ, ծանոթանում են երկրներում տարվող տարբեր տնտեսական քաղաքականության ձևերին: Նպատակներից է նաև համալիր պատկերացման ստեղծումը միջազգային տնտեսական հարաբերությունների մասին, որպես համաշխարհային տնտեսությունն ընդգրկող փոխազդեցությունների գլոբալ համակարգ: Դասընթացի նպատակն է միջազգային տնտեսական հարաբերությունների տեսական հիմքերի խորը ուսումնասիրումը և դրանց հիմքի վրա պրակտիկ ինֆորմացիայի վերլուծությունն ու կիրառումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտը
2. միջազգային տնտեսական հարաբերություններում բնորոշ տերմինները
3. համաշխարհային տնտեսության բաղկացուցիչ մասերը

4. տնտեսական հրաշք երկրները
5. երկրների հանքահումքային և ինտելեկտուալ ռեսուրսների առկայության և կիրառման առանձնահատկությունները
6. ազատ տնտեսական գոտիները և դրանց դերը

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա
/Կարողություն/.**

1. Մեկնաբանել երկրների տնտեսությունները միջազգային տնտեսական հարաբերությունների տեսանկյունից,
2. Տարբերակել առանձին երկրների վարած տնտեսական քաղաքականության ուղղությունները և դրանցից բխող հնարավոր զարգացումները,
3. Կանխատեսել տարբեր տնտեսական համակարգերի հնարավոր ազդեցությունները մեր երկրի վրա
4. Վերլուծություն իրականացնել արտահանման և ներկրման ազդեցությունների վերաբերյալ ուսումնասիրվող երկրի տնտեսական աճի տեսանկյունից
5. Կանխատեսել երկրներ տնտեսական համագործակցության հնարավոր դրական և բացասական կողմերը
6. Հետազոտել երկրների ներուժը և դրա հնարավոր բացահայտման և կիրառման հետևանքները

**Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.**

1. միջազգային տնտեսական հարաբերություններ առարկայի հիմնական սկզբունքներին,
2. միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտի տերմիններին,
3. արտարժույթերի փոխարժեքների տատանումների կանխատեսման մեթոդներին,
4. միջազգային տնտեսական նորություններին,
5. ապրանքա-հումքային շուկաների գնային տատանումների պատճառահետևանքային ազդեցությանները երկրների համագործակցություններ վրա գնահատելու մեթոդներին,
6. տարբեր երկրների տնտեսական կոնյուկտուրաները համեմատելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Միջազգային տնտեսական հարաբերություններ առարկան, բովանդակությունը և կառուցվածքը: ՄՏՀ սահմանումը և կառուցվածքը: ՄՏՀ հիմնական և ածանցյալ ձևերը: Տնտեսական կյանքի միջազգայնացման և գլոբալիզացման պայմաններում միջազգային հարաբերությունների զարգացումը: Աշխարհի երկրների անցումը բաց տնտեսությանը և նրա էական գծերը: ՄՏՀ տարբեր երկրների խմբերի մասնակցությունը: ՄՏՀ զարգացման հեռանկարները: **Թեմա 2.** Միջազգային առևտրի տեսություններ: Ա.Սմիթի բացարձակ առավելությունների տեսություն: Դ.Ռիկարդոյի հարաբերական առավելությունների տեսություն: Հեքերի Օլինի տեսությունը: Ժամանակակից առևտրի տեսություններ, Մ.Պորտերի տեսություն:

Թեմա 3. Ապրանքների և ծառայությունների համաշխարհային առևտրի հիմնական ուղղությունները: Ապրանքների միջազգային առևտրի ձևերը: Ներմուծում, արտահանում, ռեէքսպորտ և ռեիմպորտ: Ապրանքների համաշխարհային առևտրի ապրանքային և աշխարհագրական կառուցվածք: Համաշխարհային առևտրի դինամիկան և գործոնները: Ծառայությունների միջազգային առևտրի հիմնական գծերը և ձևերը: Ստեղծագործական աշխատանքների միջազգային առևտրի ուղղությունները: Աշխատանքի միջազգային բաժանումը: Աշխատանքի միջազգային մասնագիտացումը: **Թեմա 4.** Մրցակցությունը համաշխարհային շուկայում: Միջազգային մրցունակության հասկացությունը: Համաշխարհային շուկայում երկրի, ճյուղի, ֆիրմայի, ապրանքի մրցունակությունը և դրանց բնութագրող գործոնները: Մրցակցային պայքարի հիմնական ձևերը համաշխարհային շուկայում: Գնային և ոչ գնային մրցակցությունը: Մրցակցության զարգացման ժամանակակից տենդենցները: **Թեմա 5.** ՄՏՀ կարգավորումը ազգային և միջազգային մակարդակում: ՄՏՀ միջազգային կարգավորման հիմնական սկզբունքները: Արտաքին առևտրի պետական քաղաքականության տեսությունները: Ներմուծման սակագնային և ոչ սակագնային սահմանափակումները: Միջազգային կազմակերպությունների և միջազգային պայմանագրերի դերը համաշխարհային առևտրի գործում: Վճարային հաշվեկշռի հասկացությունը, ձևավորման հիմնական սկզբունքները և կառուցվածքը: **Թեմա 6.** Կապիտալի միջազգային շարժը: Համաշխարհային շուկայում կապիտալի էությունը և կառուցվածքը: Կապիտալի միջազգային շարժի տեսությունները: Կապիտալի շարժի միջազգային կարգավորումը: Ազատ տնտեսական տարածքների ստեղծման պատճառները, դասակարգումը, տարբեր երկրներում նրանց գործունեության առանձնահատկությունները: **Թեմա 7.** Աշխատուժի միջազգային միգրացիան: Բնակչության դինամիկան ժամանակակից աշխարհում և գլոբալ դեմոգրաֆիկ կանխատեսումները: Միջազգային աշխատանքային միգրացիայի պոտենցիալը: Օրինական և ոչ օրինական միգրացիան: **Թեմա 8.** Միջազգային արժույթահաշվարկային հարաբերություններ: Արժույթահաշվարկային հարաբերությունների էությունը ու ձևերը: Արժույթահաշվարկային հարաբերությունների դերը համաշխարհային տնտեսությունում և ՄՏՀ-ների համակարգում: Ժամանակակից արժույթների տեսակները: ՄՏՀ-ների համակարգում ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների դերը: Միջազգային արժույթայի հիմնադրամը: **Թեմա 9.** Միջազգային գիտատեխնոլոգիական փոխանակում: Գիտատեխնոլոգիական գիտելիքները որպես ինտելեկտուալ սեփականություն և միջազգային առևտրի օբյեկտ: Պատենտային

համակարգեր: Լիցենզիոն առևտուր: Միջազգային պայմանագրերը մտավոր սեփականության իրավունքների մասին և պատենտային կոնվենցիաները:

Թեմա 10. Տրանսազգային կորպորացիաները ՄՏՀ-ների համակարգում: Տրանսազգային կորպորացիաների էությունը, ձևերը և կազմակերպչական կառուցվածքը: Աշխարհի առաջատար տրանսազգային կորպորացիաների դասակարգումը, նրանց մասշտաբները և աշխարհագրությունը: Տրանսազգային կորպորացիաների էվոլյուցիան և նրա փուլերը: **Թեմա 11.** Հայաստանը ՄՏՀ-ների համակարգում: Հայաստանը մասնակցությունը տնտեսական ինտեգրացիոն խմբավորումներում և տնտեսական կազմակերպություններում: Վճարային հաշվեկշիռը: Հայաստանի արտաքին պարտքը, բնութագրումը և կառավարումը:

12/Բ13 ՀՀ հարկային համակարգ (5 Կրեդիտ)

20 ժամ (16 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

5 -րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալ հարկային օրենսդրությանը, հարկերի տեսակներին, հաշվարկման և վճարման կարգին, հարկային պլանավորման հիմունքներին, հարկային վերահսկողության ու հսկողության, հարկային համակարգի կարգավորման, հարկային իրավախախտումների համար պետական հարկադրանքի միջոցների ու ուղղությունների, հարկային ծառայության ոլորտների և հարկային հարաբերությունների մասնակիցների կարգավիճակի, հարկային գործընթացի, հարկային օրենքի կառուցվածքի ու գործողության շրջանակների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

- հարկերի ծագումը և հարկման գործընթացի ձևավորման ու զարգացման պատմությունը համաշխարհային քաղաքականության մեջ,
- հարկի սահմանումը: Հարկի հատկանիշները և բնորոշ գծերը,
- հարկերի և հարկային համակարգերն ու կառուցակարգերը,
- հարկային քաղաքականության իրականացման ձևերը և տեսակները,
- հարկային գործող օրենսդրության առանձնահատկությունները,
- հարկային պլանավորման տնտեսական և իրավաբանական բովանդակությունը,
- հարկային վերահսկողություն և հարկային հսկողություն հասկացությունները,
- հարկերի և հարկային համակարգերին,
- հարկերի տեսակները և դրանց կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

- դասակարգել հարկերը,
- բնութագրել հարկային համակարգի կառուցակարգը,
- բնութագրել հարկային օրենսդրության նորմերը,
- քննարկել և լուսաբանել հարկային քաղաքականության սուբյեկտներին,
- ներկայացնել հարկային համակարգի կազմակերպչական սկզբունքները,
- ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ հարկերը և վերլուծել դրանց դրսևորման առանձնահատկությունները,
- գնահատել հարկերի՝ որպես տնտեսության կարգավորման կարևոր լծակի, դերն ու նշանակությունը,
- գնահատել հարկերի դերը ՀՀ բյուջետային եկամուտների ձևավորման գործում,
- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները,
- գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը ուղղակի և անուղղակի հարկերի մասով,
- վերլուծել հարկային քաղաքականության դերը տնտեսության պետական կարգավորման համակարգում,
- վերլուծել արդյունավետ հարկային բեռի սահմանման ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- հարկերի հաշվարկման մեթոդաբանությանը,
- հարկային քաղաքականության ձևերին և ուղղություններին,
- հարկային հսկողության իրականացման ձևերին,
- հարկային բեռի հաշվարկման մեթոդաբանությանը,
- ստուգումների անցկացման ընթացակարգին,
- ՀՀ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության առանձնահատկություններին,
- հարկերի՝ որպես տնտեսության կարգավորման կարևոր լծակի, դերին ու նշանակությանը,
- հարկազանձման արդյունավետության բարձրացման հիմնական մոտեցումներին,
- մասնագիտացման ոլորտի վերաբերյալ իրավական ակտերին,
- ՀՀ հարկային օրենսգրքի հիմնական դրույթներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հարկերի ծագումը, հարկման գործընթացի ձևավորման ու զարգացման պատմությունը համաշխարհային քաղաքականության մեջ: Հարկերի ծագման համաշխարհային պատմությունը: Հարկային համակարգի ձևավորումն ու զարգացումը ՀՀ-ում: **Թեմա 2.** Հարկման ընդհանուր եվ մասնավոր տեսությունները: Հարկման ընդհանուր

տեսություններ: Հարկման մասնավոր տեսություններ: **Թեմա 3.** Հարկը որպես տնտեսական կատեգորիա, սահմանումը, գործառույթները: Հարկի սահմանումը: Հարկի տնտեսական բովանդակությունը և գործառույթները: Հարկի տնտեսական սկզբունքների համակարգը: **Թեմա 4.** Հարկերի տեսակները, դասակարգման հիմքերը: Հարկերի դասակարգման հիմքերը: Ուղղակի հարկեր: Անուղղակի հարկեր: **Թեմա 5.** Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը: Հարկային համակարգի հասկացությունը: ՀՀ հարկային համակարգի կառուցվածքը, կազմակերպչական սկզբունքները: **Թեմա 6.** Պետության հարկային քաղաքականությունը: Պետության հարկային քաղաքականության հասկացությունը, նպատակներն ու խնդիրները: Հարկային քաղաքականության սուբյեկտները, մեթոդները: Հարկային քաղաքականության սկզբունքները: **Թեմա 7.** Հարկային բեռի հասկացությունը եվ հաշվարկման մեթոդները: Հարկային բեռի հասկացությունը, տնտեսական նշանակությունը: Հարկային բեռի հաշվարկման մեթոդները: **Թեմա 8.** Հարկերի տեսակները եվ կարգավորումը հայաստանի հանրապետությունում: Պետական հարկեր: Տեղական հարկեր: **Թեմա 9.** Հարկային վերահսկողությունը եվ հսկողությունը: Հարկային վերահսկողության բովանդակությունը, տեսակները: Հարկային հսկողություն հասկացությունը, սկզբունքները և գործառույթները: Հարկային ստուգումների կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: **Թեմա 10.** Պատասխանատվություն հարկային օրենսդրությունը խախտելու համար: Հարկային իրավախախտման հասկացությունը և հիմնական հատկանիշները: Հարկային իրավախախտումների դասակարգումը: Պատասխանատվությունը հարկային օրենսդրության խախտումների համար:

Ֆինանսներ

Դասընթացի նպատակն է՝

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ ֆինանսների էության, ֆինանսական համակարգի, նրա օղակների, գործառույթների վերաբերյալ: Ուսումնասիրել և վեր հանել ՀՀ բյուջետային համակարգի առկա հիմնախնդիրները, քննարկել վարկերի և վարկային հարաբերությունների դրսևորման ու կարգավորման առանձնահատկությունները: Ուսանողները հնարավորություն են ստանում ուսումնասիրելու պետության ֆինանսական գործառույթները և նրա զարգացման հիմնական ուղղությունները, բյուջետային, հարկային և բանկային համակարգերի առանցքային տարրերն ու հասկացությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

- Ֆինանսների էությունը,
- Ֆինանսական համակարգի կառուցվածքը,
- Ֆինանսական քաղաքականության էությունը,
- բյուջետային համակարգի կառուցվածքը և ընդհանուր սկզբունքները,
- բյուջեների եկամուտների և ծախսերի դասակարգումները,
- վարկավորման սկզբունքները, տեսակները և ձևերը,
- բանկային գործունեության առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

- բնութագրել ֆինանսների բովանդակությունը,
- պատկերացում կազմել ֆինանսական համակարգի և դրա օղակների վերաբերյալ,
- սահմանել բյուջեների եկամուտների աղբյուրներն ու ծախսերի ուղղությունները,
- ներկայացնել ֆինանսական վերահսկողության նշանակությունը,
- բնութագրել վարկավորման սկզբունքները և վարկավորման մեխանիզմները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- ֆինանսական քաղաքականության իրականացման սկզբունքներին,
- ֆինանսների էության բնութագրմանը,
- վարկավորման գործընթացին և վարկավորման ռիսկայնության գնահատմանը,
- վարկավորման սկզբունքներին և մեխանիզմներին,
- ՀՀ բանկային օրենսդրությանը,
- ՀՀ բյուջետային օրենսդրությանը,

12/Բ40 Ֆինանսներ-1 (4 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

6 -րդ կիսամյակ, ստրուգարք

Բովանդակությունը

Թեմա 1. Հասկացություն ֆինանսների մասին: **Թեմա 2.** Ֆինանսական կառավարում: **Թեմա3.** Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ: **Թեմա 4.** Բյուջեն և բյուջետային համակարգը: **Թեմա 5.** Բյուջեների դասակարգումը և դեֆիցիտը:

12/Բ40 Ֆինանսներ-2 (4 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)
6 -րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը

Թեմա 6. Կազմակերպությունների ֆինանսների էությունը և կազմակերպման առանձնահատկությունները: **Թեմա 7.** Կազմակերպությունների ֆինանսական կայունություն. բնութագրող գործոնները: **Թեմա 8.** Վարկի էությունը և անհրաժեշտությունը արդի պայմաններում: **Թեմա 9.** Բանկերը և բանկային գործունեությունը: **Թեմա 10.** ՀՀ դրամական և վճարահաշվարկային համակարգը: **Թեմա 11.** Ապահովագրության էությունը և դերը շուկայական տնտեսության պայմաններում:

Ֆինանսական մենեջմենթ

Դասընթացի նպատակն է՝

ծանոթացնել ուսանողներին ֆինանսական կառավարման հիմնարար հասկացություններին և գործիքներին, յուրացնել տնտեսվարող սուբյեկտների ֆինանսների կառավարման տեսական և մեթոդական հիմունքները, կարողանալ գտնել ֆինանսական ռեսուրսների աղբյուրներ, որոշել նրանց արդյունավետ ներդրման ուղղությունները և կազմակերպել ֆինանսների օպերատիվ կառավարումը :

Ուսումնառության արդյունքներ

Գիտենա

- Ֆինանսական մենեջմենթի հասկացությունները, մեթոդները և սկզբունքները
- Ֆինանսական մենեջմենթի տեղեկատվական ապահովման սկզբունքները
- Կապիտալի, ռիսկերի, ներդրումային նախագծերի կառավարման առանձնահատկությունները
- Ձեռնարկությունների ֆինանսական կառավարման առանձնահատկությունները
- Ֆինանսական վերլուծության և պլանավորման մեթոդները

Կարողանա

- Ձևակերպել ֆինանսական մենեջմենթի նպատակները և խնդիրները
- գնահատել ֆինանսական ռիսկերը
- կատարել ֆինանսական մոնիտորինգ
- կատարել ֆինանսական ցուցանիշների հաշվարկներ

- մշակել ձեռնարկության ֆինանսական ծրագրերը և բյուջեն

Տիրապետի

- Ֆինանսների կառավարման մեթոդներին և սկզբունքներին
- Ֆինանսական ռիսկերի նվազեցման մեթոդներին

12/Բ39-1 Ֆինանսական մենեջմենթ-1 (2 Կրեդիտ)

12 ժամ (10ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակություն

ԹԵՄԱ 1 Ֆինանսական մենեջմենթի էությունը, նպատակը և սկզբունքները **ԹԵՄԱ 2** Կազմակերպության ֆինանսական հոսքերի կառավարումը **ԹԵՄԱ 3** Ներդրումային որոշումների ընդունումը և ներդրումների կառավարումը **ԹԵՄԱ 4** Ֆինանսական ռիսկերի կառավարումը:

12/Բ39-2 Ֆինանսական մենեջմենթ-2 (4 Կրեդիտ)

12 ժամ (10ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակություն

Թեմա 5. Արտադրական և ֆինանսական լծակներ /լներ/ **Թեմա 6.** Կազմակերպության շրջանառու ակտիվների կառավարում: **Թեմա 7.** Ֆինանսական պլանավորում և բյուջետավորում: **Թեմա 8.** Տարբեր ոլորտների կազմակերպություններում ֆինանսների կառավարման առանձնահատկությունները:

14/Բ5 Գնումների գործընթացի կազմակերպում (2 Կրեդիտ)

12 ժամ (10ժամ դասախոսություն 2 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

Դասընթացի նպատակն է՝ բացահայտել հանրային հատվածի շրջանակում պետական գնումների իրականացման հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները, ինչպես նաև գնման ընթացակարգերի, մասնավորապես նախաորակավորման ընթացակարգի, իրականացման նկատմամբ պահանջներն ու

պայմանները; գնման հայտարարության, հրավերի, հայտի, գնման առարկայի բնութագրերի կազմման կարգի և գնումների տեսակների ուսումնասիրումը, գնման գործընթացի արդյունքների ամփոփման և հսկման աշխատանքների կատարումը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական ու նորմատիվ ակտերի դրույթներին համապատասխան:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. Տեղյակ կլինի պետական գնումների իրականացման շրջանակին,
2. Կներկայացնի գնումների իրականացման սկզբունքները,
3. Կճանաչի գնումների տեսակները,
4. Կտարբերակի գնման առարկա, գնման հրավեր և հայտ հասկացությունները,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Ներկայացնել և ընդգծել գնման յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունը,
2. Թվարկել գնման առարկայի բնութագրիչները,
3. Նկարագրել գնման ընթացակարգի փուլերը,
4. Բացատրել և բացահայտել նախաորակավորման փուլի անհրաժեշտությունը,
5. Ցույց տալ էլեկտրոնային աճուրդի ներդրման անհրաժեշտությունը:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Ի մի բերելով ուսումնասիրման արդյունքները, եզրահանգումներ կատարելով առաջարկել գնման համապատասխան տեսակը որոշակի դեպքերի համար
2. Հակադրելով կենտրոնացված գնումները ապակենտրոնացվածին, որոշել և ներկայացնել վերջինիս առավելությունները:

Բովանդակություն

Թեմա 1. Պետական գնումների գործընթացը: Պետական գնումների իրականացման օրենսդրությունը, իրավական դաշտը, անհրաժեշտությունը: Գնումների գործընթացի հիմնարար դրույթներ: Պետական գնումների գործընթացի առարկան, սուբեկտները

Թեմա 2. Գնումների գործընթացի պատասխանատուները: Գնումների պլանավորում; Նախապատրաստում: Պատվիրատուի ղեկավար: Գնումները համակարգող: Գնումների պատասխանատու ստորաբաժանում: Գնահատող հանձնաժողով: Պայմանագրի կնքում: Պայմանագրի ապահովում: Պայմանագրի կատարում: **Թեմա 3. Պետական գնումների գործընթացի մասնակիցների իրավունքները:** Գնումների գործընթացին մասնակցելու

իրավունքը. անհրաժեշտ որակավորման չափանիշները: Փաստաթղթեր, դրանց վավերապայմանները էլեկտրոնային գնումները **Թեմա 4. Գնման գործընթացի մասնակիցները:** Գնման գործընթացի մասնակիցների՝ Պատվիրատուի ղեկավարի, Գնումները համակարգողի, Պատասխանատուի, Գնահատող հանձնաժողովի, քարտուղարի իրավունքներն ու պարտականությունները **Թեմա 5. Պայմանագիր կնքելու մասին որոշումը:** Գնումների(նախաորակավորման) հայտարարության տեքստը. Հրավերի տեքստը.Պայմանագրի կնքումը և պայմանները: Գնում կատարելու ընթացակարգերը՝ էլեկտրոնային աճուրդը. մրցույթը. գնանշման հարցումը. մեկ անձից գնումը:Մրցույթի տեսակները՝ բաց և փակ: Գնումն էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացման պայմանները:Գնումների կատարման նախընտրելի ձևը: Անգործության ժամկետը: **Թեմա 6. Գնումների գործընթացի բողոքարկումը:** Բողոքարկելու իրավունքը: Գնումների բողոքարկման խորհուրդը: Բողոքարկման կարգը: Հաշվետվողականություն, հսկողություն, ներքին աուդիտ:

14/Բ13 Հաշվապահական հաշվառման տեսություն (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին ներկայացնել հաշվապահական հաշվառումը, որպես տնտեսական որոշումների կայացման գործիք:
2. Ուսանողներին սովորեցնել վարել հաշվապահական հաշվառում:
3. Ուսանողներին սովորեցնել կազմել հաշվետվություններ՝ օգտագործելով հաշվառման տվյալները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք.

1. Ներկայացնել հաշվապահական հաշվառումը՝ որպես տնտեսական որոշումների կայացման գործիքի:
2. Նկարագրել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման ոլորտները, սահմանել հաշվապահական հաշվառման տարրերը::
3. Թվարկել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվետվությունները և սահմանել հաշվետվությունների հիմնական տարրերը:

4. Դասակարգել հաշվապահական հաշվառման տեղեկատվությունն օգտագործողներին՝ ըստ հաշվետվություններին առնչվող հետաքրքրությունների:
5. Հիմնավորել հաշվապահական հաշիվների պլանի դերը հաշվային աշխատանքների կազմակերպման և տեղեկատվության համակարգման գործընթացում:
6. Նկարագրել հաշվապահական հաշիվների տեսակները, նրանց կառուցվածքը, հաշիվների խմբավորումը և ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Կարողություն.

1. Կատարել կրկնակի գրանցումներ՝ հաշվապահական թղթակցություններ կազմելով:
2. Տարբերակել հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունների տիպերը:
3. Տարբերակել հաշվապահական փաստաթղթերն ու ռեգիստրները:
4. Հաշվառել կազմակերպության ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվները, սեփական կապիտալը և պարտավորությունները, եկամուտները և ծախսերը, ֆինանսական հետևանքները:
5. Կազմել ֆինանսական հաշվետվություններ:
6. Փոխկապակցել ֆինանսական հաշվետվությունները և կատարել ստուգողական համադրումներ:

Հմտություն.

1. Վերլուծել հաշվետվություններ և կատարել հետևություններ:
2. Առաջարկել խնդիրների լուծման արդյունավետ եղանակներ՝ հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակությունը:
3. Օգտվել տեղեկատվական տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, գրադարաններ, հաշվետվություններ):
4. Կիրառել ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում:
5. Վերլուծել հաշվետվություններ և կատարել հետևություններ:
6. Առաջարկել խնդիրների լուծման արդյունավետ եղանակներ՝ հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակությունը:
7. Օգտվել տեղեկատվական տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, գրադարաններ, հաշվետվություններ):

8. Կիրառել ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում:

Բովանդակություն

Թեմա 1 Հաշվապահական հաշվառման նշանակությունը: Հաշվապահական հաշվառումը որպես որոշումների կայացման տեղեկատվական համակարգ: Հաշվապահական հաշվառման նշանակություն: Հաշվապահական հաշվետվությունների օգտագործողներ: Հաշվապահական հաշվառման տեսակները: Հաշվապահական հաշվառման խնդիրները

Թեմա 2 Հաշվապահական հաշվառման մեթոդաբանությունը: Հաշվապահական հաշվառման առարկան: Հաշվապահական հաշվառման մեթոդները: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության էությունը: Հաշվեկշռային փոփոխությունների դասակարգումը: Հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման եղանակի էությունը: Հաշվային թղթակցություններ կազմելու կարգը: Հաշվապահական հաշիվների պլան, միջանկյալ հաշվեկշիռ: Հաշվապահական հաշվեկշռի ֆունկցիաները: Հաշիվների գործառնական ֆունկցիաները և կրկնակի գրանցման եղանակի ֆունկցիաները: Սինթետիկ և անալիտիկ հաշվառում:

Թեմա 3 Ակտիվների հաշվառում: Հիմնական միջոցների հաշվառում: Պաշարների հաշվառում, Իրացման զուտ արժեք: Դեբիտորական պարտքերի հաշվառում: Դեբիտորական պարտքերի պահուստաֆոնդի հաշվառում: Առհաշիվ տրված գումարների հաշվառում: **Թեմա 4** Պարտավորությունների հաշվառում: Փոխառությունների հաշվառում: Շնորհների գծով պարտավորությունների հաշվառում: Աշխատավարձի գծով պարտավորությունների հաշվառում: Հարկային և կենսաթոշակային պարտավորությունների հաշվառում: **Թեմա 5** Կապիտալի հաշվառում: Սեփական կապիտալի բաղադրիչները: Հիմնական միջոցների վերագնահատման արդյունքների հաշվառումը: Զուտ շահույթի ձևավորման և չբաշխված շահույթի հաշվառումը: Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ: Պահուստային կապիտալի հաշվառումը:

14/Բ23 Ֆինանսական հաշվառում- 1 (4 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

սովորեցնել ուսանողներին ֆինանսական հաշվառման կազմակերպմանը, վերջինիս վարմանը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը կանոններին, սկզբունքներին՝ հաշվապահական հաշվառման ստանդարտների միջոցով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա ֆինանսական հաշվառումը, ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, դրանց կառուցվածքը և բովանդակությունը, և դրանց կառուցվածքի վերաբերյալ ընդհանուր նկատառումները, ստանդարտներով պահանջվող բացահայտումները:

2.Կարողանա վարել ֆինանսական հաշվառումը և կազմել ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, Կազմել և ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ.

3.Տիրապետի ֆինանսական հաշվետվություններին, տվյալ և այլ կազմակերպությունների համադրմանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ֆինանսական հաշվետվություններ և դրանց օգտագործողները: **Թեմա 2.** Հեղթությունը, սկզբունքները և շրջանակները, ֆինանսական և կառավարչական հաշվառումներ: **Թեմա 3.** Հաշվապահական տեղեկատվության անհրաժեշտ հատկանիշները: **Թեմա 4.** ՀՀ միջազգային ստանդարտների մշակումը: **Թեմա 5.** Հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: **Թեմա 6.** ՀՀ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը: **Թեմա 7.** ՀՀ 2 Պաշարներ: **Թեմա 8.** Պաշարների հաշվառման ձևակերպումները: **Թեմա 9.** ՀՀ 16 Հիմնական միջոցներ: **Թեմա 10.** Հիմնական միջոցների հաշվառման ձևակերպումները: **Թեմա 11.** ՀՀ 38 Ոչ նյութական ակտիվներ: **Թեմա 12.** Ոչ նյութական ակտիվների հաշվառման հաշվապահական ձևակերպումները: **Թեմա 13.** ՀՀ 7 Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին: **Թեմա 14.** ՀՀ 18 Հասույթ: **Թեմա 15.** Հասույթի արտացոլման հաշվապահական ձևակերպումներ: **Թեմա 16.** ՀՀ 36 Ակտիվների արժեզրկում: **Թեմա 17.** Արժեզրկման հաշվապահական ձևակերպումները: **Թեմա 18.** ՀՀ 4 Մաշվածության հաշվառում: **Թեմա 19.** ՀՀ 17 Վարձակալություն: **Թեմա 20.** Վարձակալության ատացողման հաշվապահական ձևակերպումները:

14/Բ24 Ֆինանսական հաշվառում- 2 (3 Կրեդիտ)
16 ժամ (10 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Դասընթացի նպատակն է սովորեցնել ուսանողներին ֆինանսական հաշվառման կազմակերպմանը, վերջինիս վարմանը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը կանոններին, սկզբունքներին՝ հաշվապահական հաշվառման ստանդարտների միջոցով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա պետական շնորհներ, փոխառության ծախսումները, բազային և նոսրացված շահույթ հասկացություններին, պայմանական ակտիվները և պայմանական

պարտավորությունները, հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների ճանաչումը:

2.Կարողանա հաշվառել պետական շնորհներ, փոխառության ծախսումները, հաշվել և ձևակերպել 1 բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը, ձևաորել պահուստներ, ճանաչել ընթացիկ և հետաձգված հարկերը:

3.Տիրապետի պետական շնորհների հաշվառմանը, զուտ շահույթ կամ վնաս, էական սխալների և փոփոխությունների ճշգրտման եղանակներին, պահուստների չափմանը, գնահատմանը, ռիսկերի և անորոշությունները հաշվի առնելով , ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների ճանաճմանը, արտարժույթի փոփոխության հետևանքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. ՀՀՍ 20 Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում:

Թեմա 2. Պետական շնորհների արտացոլման հաշվապահական ձևակերպումները: **Թեմա**

3. ՀՀՍ 23 Փոխառության ծախսումներ: **Թեմա 4.** Փոխառության ծախսումների

հաշվապահական ձևակերպումները: **Թեմա 5.** ՀՀՍ 8 Հաշվետու ժամանակաշրջանի զուտ

շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման

քաղաքականության մեջ: **Թեմա 6.** էական սխալների ուղղումների և հաշվապահական

հաշվառման քաղաքականության փոփոխությունների արտացոլման հաշվապահական

ձևակերպումները: **Թեմա 7.** ՀՀՍ 33 1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ: **Թեմա 8.**

ՀՀՍ 37 պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ: **Թեմա**

9. Պահուստների հաշվառման հաշվապահական ձևակերպումները: **Թեմա 10.** ՀՀՍ 12

Շահութահարկ: **Թեմա 11.** Շահութահարկի հաշվապահական ձևակերպումները: **Թեմա 12.**

ՀՀՍ 21 Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ:

Տնտեսական գործունեության վերլուծություն

Դասընթացի նպատակն է՝

- ուսանողներին ծանոթացնելով տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության ժամանակակից մեթոդներին:
- **Ֆինանսական ցուցանիշների գնահատում**՝ ուսանողներին սովորեցնել վերլուծել և գնահատել կազմակերպությունների ֆինանսական վիճակը՝ օգտագործելով հաշվապահական հաշվետվություններ և ֆինանսական գործակիցներ:
- **Տնտեսական որոշումների կայացման հմտությունների զարգացում**՝ ուսանողներին տրամադրելով գործիքներ և մեթոդներ, որոնք կօգնեն արդյունավետ որոշումներ կայացնել բիզնեսի և տնտեսության ոլորտներում:
- **Ռիսկերի վերլուծություն և կառավարման կարողությունների զարգացում**՝ ուսանողներին սովորեցնել հայտնաբերել, գնահատել և կառավարել տնտեսական գործունեության հետ կապված ռիսկերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

Գիտելիք

- Գիտենա տնտեսական գործունեության վերլուծության նշանակությունը կազմակերպության կառավարման կառավարման գործընթացում: Տնտեսական գործունեության վերլուծության խնդիրները արդի պայմաններում:
- նկարագրել կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշները
- ներկայացնել տնտեսական գործունեության վերլուծության դերը կազմակերպությունների կառավարման գործընթացում,
- սահմանել տնտեսական գործունեության վերլուծության կիրառման խնդիրները,
- ընտրել համապատասխան վերլուծական եղանակը համապատասխան մասնագիտական խնդրի լուծման համար,
- հիմնավորել ընտրված մեթոդի կիրառման անհրաժեշտությունը,
- դասակարգել տնտեսական գործունեության վերլուծության տեսակները մի շարք հիմնական հատկանիշներով:

/Կարողություն/.

- օգտագործել տնտեսա-մաթեմատիկական մեթոդները
- վերլուծել կազմակերպության գործունեության ցուցանիշների վրա ազդող գործոնները,
- բացահայտել կազմակերպության ներտնտեսական չօգտագործված հնարավորությունները,
- պատրաստել վերլուծական խնդիրների ներկայացման շնորհանդեսներ:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

- օգտագործել առաջարկվող բազմաթիվ մեթոդներից առավել արդյունավետը, վերլուծել միկրո և մակրո մակարդակի վրա բոլոր անալիտիկ և սինթետիկ ցուցանիշները,
- բացահայտել ներքին և արտաքին գործոնները,
- պատրաստել կազմակերպության գործունեությունը բնութագրող ցուցանիշների նկատմամբ ամփոփ տեղեկագիր:

14/Բ20 Տնտեսական գործունեության վերլուծություն-1 (5 Կրեդիտ)

22 ժամ (16 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակություն

Թեմա 1. Տնտեսական վերլուծության տեսական հիմունքները: **Թեմա 2.** Տնտեսական գործունեության վերլուծության առարկան և մեթոդները: **Թեմա 3.** Տնտեսական գործունեության վերլուծության տեսակները: **Թեմա 4.** Տնտեսական գործունեության վերլուծության ավանդական եղանակները: **Թեմա 5.** Հարաբերական և միջին մեծություններ: **Թեմա 6.** Վերլուծության ինդեքսային եղանակ: **Թեմա 7.** Շղթայական տեղադրման մեթոդ: **Թեմա 8.** Տնտեսական գործունեության վերլուծության ինտեգրալային եղանակ: **Թեմա 9.** Հավանական իրավիճակների վերլուծություն: **Թեմա 10.** Արտադրողականության խնդիրը: **Թեմա 11.** Դիֆերենցիալների կիրառումը տնտեսական գործունեության վերլուծություն: **Թեմա 12.** Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն: **Թեմա 13.** Կառավարչական հաշվետվության վերլուծություն: **Թեմա 14.** Ներքին և արտաքին աղբյուրներ: **Թեմա 15.** Գործոնային վերլուծության մեթոդիկան: **Թեմա 16.** Պահուստների վերլուծության մեթոդիկան:

14/Բ21 Տնտեսական գործունեության վերլուծություն-2 (4 Կրեդիտ)

16 ժամ (10 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակություն

Թեմա 1. Ոչ ընթացիկ ակտիվների վերլուծությունը **Թեմա 2.** Պաշարների վերլուծությունը **Թեմա 3.** Ֆինանսական ակտիվների վերլուծությունը **Թեմա 4.** Դեբիտորական պարտքերի վերլուծությունը **Թեմա 5.** Աշխատանքային ռեսուրսների եվ աշխատանքի արտադրողականության վերլուծությունը **Թեմա 6.** Դրամական միջոցների վերլուծությունը **Թեմա 7.** Արտադրանքի արտադրության եվ իրացման վերլուծությունը **Թեմա 8.** Արտադրանքների արտադրության եվ իրացման նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը **Թեմա 9.** Եկամուտների վերլուծությունը **Թեմա 10.** Կանոնադրական կապիտալի վերլուծությունը **Թեմա 11.** Կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վերլուծությունը **Թեմա 12.** Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծությունը **Թեմա 13.** Կազմակերպությունների ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը **Թեմա 14.** Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը:

14/Բ22 Տնտեսական գործունեության վերլուծություն՝ Կուրսային աշխատանք(1 Կրեդիտ) Կուրսային աշխատանքի կրթական վերջնարդյունքները

Գիտենա - տնտեսության տարբեր ճյուղերում տնտեսական գործունեության վերլուծություններ կատարելու սկզբունքները, կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Կարողանա - տնտեսա-մաթեմատիկական մեթոդների միջոցով լուծել խնդիրներ, մեկնաբանել ու գնահատել ստացվող արդյունքները:

Տիրապետի - միկրո և մակրո մակարդակի վրա բոլոր անալիտիկ և սինթետիկ ցուցանիշների վերլուծման, կազմակերպության գործունեությունը բնութագրող ցուցանիշների նկատմամբ ամփոփ տեղեկագրերի պատրաստման, ինչպես նաև հետազոտական աշխատանք կատարելու հմտություններին:

Կուրսային աշխատանքի թեմաներ

1. Աշխատավարձի ֆոնդի օգտագործման և աշխատանքի արտադրողականության վերլուծությունը:
2. Աշխատանքի արտադրողականության և արտադրության արդյունավետության վերլուծությունը:
3. Հիմնական արտադրական միջոցներով ապահովվածության ու օգտագործման վերլուծությունը:
4. Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծություն:
5. Մթերքների արտադրության և շահութաբերության վերլուծություն:
6. Մեքենատրակտորային հավաքակալանի աշխատանքի վերլուծություն:
7. Ֆինանսական ներդրումները և նորամուծությունները մշտապես փոփոխվող միջավայրում
8. Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը
9. Կազմակերպության վճարունակությունը
10. Կազմակերպության կայունության վերլուծությունը
11. Դրամական միջոցների հոսքի վերլուծությունը
12. Դրամական հոսքի կանխատեսման վերլուծություն (աճի մոդելավորում)
13. Ընթացիկ ակտիվների կառուցվածքի վերլուծություն
14. Դեբիտորական պարտավորությունների վերլուծություն
15. Պաշարների կառավարման մոդելները և վերահսկումը
16. Երկարաժամկետ ներդրումների արդյունավետության վերլուծությունը
17. Օպերացիոն լւիրիջ
18. Ռիսկային գործոնների վերլուծություն
19. Ֆիրմայի լւիրիջի վերլուծություն
20. Ռիսկերի կառավարման և գնահատման համակարգը
21. Վերլուծությունը դյուռացիայի մոդելի միջոցով
22. Սիմուլյացիոն ՉվերագնահատմանՃ մոդել
23. Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն
24. Ֆինանսական լծակի էֆեկտ
25. Ֆինանսական լւիրիջի էֆեկտ
26. Ոչ ընթացիկ ակտիվների վերլուծություն
27. Ընթացիկ ակտիվների վերլուծություն
28. Ֆինանսական հաշվետվության վերլուծության խնդիրները, էությունը, գործառույթները

- 29. Հաշվապահական հաշվառման նպատակը, խնդիրները, գործունեության ոլորտը
- 30. Ֆինանսական հաշվետվության տարրերի վերլուծությունը
- 31. Ֆինանսական հաշվետվության վերլուծության գործիքները
- 32. Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրությունների էությունը
- 33. Ֆինանսական վերլուծության իրականացման նախապայմանները
- 34. Ֆինանսական ցուցանիշների ձևավորման համակարգը

Կառավարչական հաշվառում

Դասընթացի նպատակն է՝

Ուսանողին ծանոթացնել կառավարչական հաշվառման էությանը, չափիչներին և տեսակներին, կառավարչական հաշվառման առարկայի հետ, կազմակերպությունների տնտեսական գործունեության տեսակներին, կազմակերպությունների ակտիվներին և դրանց գոյացման աղբյուրներին, կառավարչական հաշվառման մեթոդի և նրա հիմնական տարրերի հետ:

Կրթական արդյունքները.

Գիտելիք.

Գիտենա պաշարների (հումք և նյութեր, արտադրանք, ապրանքներ, անավարտ արտադրություն, սպառվող կենսաբանական ակտիվների) հաշվառման մեթոդներն ու եղանակները, արտադրական ծախսումների ընդհանուր նկարագիրը, հիմնական և օժանդակ արտադրությունների, անուղղակի արտադրական ծախսումների հաշվառման առանձնահատկությունները, պատրաստի արտադրանքի ինքնարժեքի հաշվարկումը և հաշվառումը, անավարտ արտադրության գնահատումը և մնացորդների որոշումը, վերամշակման ծախսումների սահմանումը, ուղղակի, անուղղակի, հաստատուն արտադրական վերադիր և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումների դասակարգումները, ոչ ընթացիկ ակտիվների կառուցման կամ ստեղծման ծախսումների նկարագիրը և հաշվառումը, ոչ նյութական ակտիվների ներստեղծումը և հաշվառման առանձնահատկությունները:

Կարողություն.

Կարողանա հաշվարկել թողարկվող արտադրանքի ինքնարժեքը, կատարի համապատասխան հաշվապահական թղթակցություններ, կատարի փաստաթղթավորում և գույքագրում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, իրականացնի գնահատում և արժեքորոշում (կալկուլյացիա):

Հմտություն.

Տիրապետի արտադրական ծախսումների դասակարգմանը, կազմել կառավարչներին ներկայացման ենթակա հաշվետվություններ, կատարի ինքնարժեքի հաշվարկում ըստ տարբեր մեթոդների, կատարի հաշվառում ՀՀ օրենսդրության

հաշվապահական հաշիվների տեսակներին և դրանց դասակարգմանը, հաշվապահական հաշիվներին կրկնակի գրանցման մեթոդին համապատասխան:

14/Բ7-1 Կառավարչական հաշվառում-1 (5 Կրեդիտ)

20 ժամ (14 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը.

Թեմա 1. Կառավարչական հաշվառման էությունը և կազմակերպումը: Կառավարչական հաշվառման էությունը, բովանդակությունը (կառավարչական և արտադրական) և նշանակությունը կազմակերպության արտադրական գործունեության կառավարման համար: Կառավարչական և ֆինանսական հաշվառման նմանությունների և տարբերությունների վերլուծությունը և փոխադարձ կապը: Կառավարչական հաշվառման նպատակը, տեղեկատվության օգտագործողները, կառավարչական հաշվառման կողմից ներկայացվող տեղեկատվության բովանդակությունը, հաշվետվությունների պարբերականությունը: Կառավարչական հաշվառման տեղը ՀՀ հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների գործընթացում: **Թեմա 2.** Արտադրական ծախսումների դասակարգումը և հաշվառման սկզբունքները: Հասկացություն արտադրական ծախսումների մասին: Ծախսեր և ծախսումներ կատեգորիաների հաշվապահական բովանդակությունը: Արտադրական ծախսումների և տնտեսական ծախսերի էությունը և հաշվառման առանձնահատկությունները: Հաշվետու ժամանակաշրջանին և թողարկվող արտադրատեսակին վերագրվող ծախսերը և ծախսումները: Արտադրական ծախսումների դասակարգումը՝ հիմնական և վերադիր ծախսումների, հաստատուն և փոփոխուն ծախսումների: Արտադրական ինքնարժեքի ձևավորումը և տարրերը: Ուղղակի և անուղղակի արտադրական ծախսումները: **Թեմա 3.** Արտադրական ծախսումների հաշվառումը: Արտադրական ծախսումների սինթետիկ հաշվառման ընդհանուր սխեման: Կառավարչական հաշվառման հաշիվների դասի ֆունկցիոնալ նշանակությունը: Ուղղակի արտադրական ծախսումների հաշվառումն ու բաշխումը: Ուղղակի նյութական ծախսումների հաշվառումը: Ծախսված նյութերի գնահատման մեթոդները: Արտադրական թափոնների հաշվառումը: Աշխատանքի վճարման գծով և սոցիալական ապահովագրության վճարների գծով ուղղակի ծախսումների հաշվառումը: Այլ ուղղակի արտադրական ծախսումների հաշվառումը: Օժանդակ արտադրության ծախսումների հաշվառումը: Օժանդակ արտադրությունների փոխադարձ ծառայությունների ինքնարժեքի որոշման առանձնահատկությունները: Անուղղակի արտադրական ծախսումների հաշվառումն ու բաշխումը: Անուղղակի ծախսումների բաշխման բազաները:

14/Բ7-2 Կառավարչական հաշվառում-2 (4 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

Բովանդակությունը.

Թեմա 4. Արտադրական ծախսումների ամփոփ հաշվառումը և արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան: Արտադրական ծախսումների ամփոփ հաշվառման մեթոդները: Ծախսումների հաշվառման առարկայական, պատվերային և փուլային մեթոդներով թողարկված արտադրանքի ինքնարժեքի հաշվարկումը և կատարված ծախսումների բաշխումը պատրաստի և անավարտ արտադրության միջև: Անավարտ արտադրության գնահատման մեթոդները: Ծախսումների հաշվառման նորմատիվային համակարգը: Ստանդարտ (նորմատիվային) ծախսումներով ինքնարժեքի ձևավորումը: Նորմաների փոփոխության հաշվառումը: Նորմայից շեղումների հաշվառումը: Փաստացի ինքնարժեքի հաշվառումը: Նորմատիվային կալկուլյացիան և շեղումների վերլուծությունը ըստ առաջացման տեղերի և պատասխանատվության կենտրոնների: Արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան: Կալկուլյացիայի տեսակները և տեղեկատվական նշանակությունը գնագոյացման պրոցեսում: **Թեմա 5.** Ծախսումների կառավարման համակարգը: Արտադրական ծախսումների և արտադրանքի ծավալի հարաբերակցությունը: Արտադրանքի ինքնարժեքի հաշվառումը ըստ հաստատուն և փոփոխուն ծախսումների: Փոփոխուն ծախսումների հաշվառման համակարգը: Արտադրական ծախսումների, արտադրության ծավալների և ֆինանսական հետևանքների փոխհարաբերության մարժինալ վերլուծությունը: **Թեմա 6.** Կառավարչական հաշվառումը կազմակերպության կառավարչական որոշումների կայացման գործում: Կառավարչական վերահսկողության էությունը: Կառավարչական վերահսկողության փուլերը: Արտադրության անվնասաբերության վերլուծությունը: Ռելեվանտ մակարդակների վերլուծությունը: Տարբերակված ծախսումների էությունը և կարճաժամկետ որոշումների ընդունումը: Երկարաժամկետ որոշումների ընդունումը: Ծրագրավորում, պլանավորում (բյուջեի կազմում) և նախահաշիվներ:

14/Բ8 Կառավարչական հաշվառում՝ Կուրսային աշխատանք (1 Կրեդիտ)

Կուրսային աշխատանքի նպատակն է կատարել գործնական աշխատանք օգտագործելով հաշվապահական հաշվառման բնագավառում ստացված գիտելիքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա կատարվող աշխատանքի թեմայի կարևորությունը,տվյալ թեմայի տեսական և գործնական զարգացման օրինաչափությունները:

2.Կարողանա կապակցել կառավարչական հաշվառումը ուսումնասիրվող թեմայի հետ, կազմել աշխատանքային պլան, հավաքագրել թեմային վերաբերող տվյալներ, ուսումնասիրել և ընտրել թեմային վերաբերող գրականության ցանկ, կատարել տվյալների վերլուծություն,կատարել ինքնուրույն հետազոտական ու ստեղծագործական աշխատանք,հետազոտական արդյունքների հիման վրա կատարել եզրակացություններ,ստացված արդյունքների օգտագործման գործնական կիրառման վերաբերյալ կատարել առաջարկություններ:

3.Տիրապետի թեմայի հիմնախնդրին վերբերող տարբեր կարծիքների ու տեսակետների շուրջ բանավիճելու կարողությանը,տրամաբանական հաջորդականությամբ սեփական դատողությունները գրավոր:

1. Ինքնարժեքում ներառվող ծախսումների դասակարգումը
2. Հաստատուն, փոփոխուն և կիսափոփոխուն ծախսումներ
3. Վերադիր ծախսերի հաշվառում
4. Ծախսերի նորմատիվային հաշվառումը
5. Արտադրության ծախսումների հաշվառման ընդհանուր մեխանիզմը
6. Ուղղակի արտադրական ծախսումների հաշվառումը
7. Արտադրական ծախսումների հաշվառման մոդելը
8. Անուղղակի արտադրական ծախսումների հաշվառումը
9. Անուղղակի արտադրական ծախսումների բաշխումը, բաշխման գործակից
10. Օժանդակ արտադրության ծախսումների հաշվառումը
11. Թողարկված արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը:
12. Արտադրական ծախսումների ամփոփ հաշվառումը:
13. Լրիվ ծախսերով ինքնարժեքի կալկուլացում
14. Սահմանային ծախսերով ինքնարժեքի կալկուլացում
15. Լրիվ և Սահմանային ծախսերով ինքնարժեքի կալկուլացումը
16. Ինքնարժեքի կալկուլացման պարզ/միափուլային/ մեթոդ
17. Ինքնարժեքի կալկուլացման պատվերային մեթոդ

18. Ինքնարժեքի կալկուլացման փուլային մեթոդ

19. Ինքնարժեքի կալկուլացման նորմատիվային մեթոդ

Աուդիտ

14/Բ2 Աուդիտ- 1 (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգաբար

Դասընթացի նպատակն է՝

Ուսանողին ծանոթացնել աուդիտի բովանդակությանը, էությանը, ռազմավարությանը, տեխնոլոգիային, աուդիտի իրականացմանը և Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրությանը: Հնարավորություն տալ գնահատելու աուդիտի համակարգի կարևորությունը կառավարման գործառույթներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա ինչ է աուդիտը,ինչպես է իրականացվում աուդիտորական գործունեությունը,ինչ վարքագծի կանոններով է աուդիտորն առաջնորդվում,որն է աուդիտի նշանակությունը:

2.Կարողանա պատկերացնել՝ աուդիտի իրականացման ընթացքը,պլանավորումը, փաստաթղթավորումը, աուդիտորական կարծիքի ձևավորումը, գնահատել՝ աուդիտորական ռիսկը, կազմել՝ աուդիտորական նամակ-պարտավորագիր, աուդիտորական եզրակացություն, աուդիտորական հաշվետվություն:

3.Տիրապետի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքին, Աուդիտի ստանդարտներին, աուդիտորի վարքագծի կանոններին, աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Աուդիտի ձևավորման և զարգացման փուլերը: **Թեմա 2.** Աուդիտի բովանդակությունը և էությունը: **Թեմա 3.** Աուդիտի տեսակների դասակարգումը: **Թեմա 4.** Աուդիտորական ծառայությունների մատուցման սկզբնական փուլը: **Թեմա 5.** Աուդիտի ռազմավարությունը և տեխնոլոգիան: **Թեմա 6.** Աուդիտորական պայմանագրի բովանդակությունը: **Թեմա 7.** Աուդիտորական գործընթացի պլանավորումը և փուլերը: **Թեմա 8.** Գործիմացության գնահատումը աուդիտում: **Թեմա 9.** Աուդիտի փաստաթղթավորումը **Թեմա 10.** Աուդիտորական ընտրանքի մեթոդները: **Թեմա 11.** Աուդիտորական ապացույցներ **Թեմա 12.** Աուդիտորական ռիսկի գնահատումը: **Թեմա 13.** Ներքին վերահսկողության համակարգի գնահատման ընթացակարգերը: **Թեմա 14.** Աուդիտի փաստաթղթավորումը Աուդիտորական հաշվետվության կազմումը և դրա բովանդակությունը: **Թեմա 15.** Աուդիտորական եզրակացություն:

14/Բ3 Աուդիտ- 2 (3 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

Ց-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին տրամադրել հիմնարար և գործնական գիտելիքներ աուդիտորական գործընթացների, մեթոդների և տեխնիկաների վերաբերյալ՝ ձևավորելով նրանց կարողությունը ֆինանսական հաշվետվությունների, բիզնես գործառնությունների և ներքին վերահսկողության համակարգերի օբյեկտիվ գնահատման և վերլուծության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1.Գիտենա

1. աուդիտի անցկացման հիմնական սկզբունքներն ու պահանջները
2. աուդիտի օրենսդրական և կարգավորող դրույթները

2.Կարողանա

1. Կազմել աուդիտի պլան և ռազմավարություն
2. Որոշել աուդիտի ծավալը, ռիսկերը և առաջնահերթությունները
3. Վերլուծել աուդիտի իրականացվելիության նախապայմանները

3.Տիրապետի

1. <<Աուդիտորական գործունեության մասին>> ՀՀ օրենքին,
2. Աուդիտորական եզրակացություն կազմելու սկզբունքներին
3. Աուդիտորական հաշվետվություն կազմելու սկզբունքներին

Բովանդակությունը.

Թեմա 1. Հիմնական միջոցների աուդիտ: **Թեմա 2.** Ոչ նյութական ակտիվների աուդիտ: **Թեմա 3.** Ֆինանսական ակտիվների աուդիտ: **Թեմա 4.** Պաշարների աուդիտ: **Թեմա 5.** Դեբիտորական պարտքերի աուդիտ: **Թեմա 6.** Դրամական միջոցների աուդիտ: **Թեմա 7.** Եկամուտների աուդիտ: **Թեմա 8.** Ծախսերի աուդիտ: **Թեմա 9.** Սեփական կապիտալի աուդիտ: **Թեմա 10.** Հիմնադիր փաստաթղթերի աուդիտ: **Թեմա 11.** Ֆինանսական արդյունքների աուդիտ **Թեմա 12.** Կրեդիտորական պարտքերի աուդիտ: **Թեմա 13.** Ֆինանսական պարտավորությունների աուդիտ: **Թեմա 14.** Աշխատանքային օրենսդրության պահպանման աուդիտ: **Թեմա 15.** Ֆինանսական վերլուծությունը աուդիտում:

14/Բ4 Աուդիտ՝ Կուրսային աշխատանք (1 Կրեդիտ)

Կուրսային աշխատանքի թեմաները

1. Աուդիտի տեսակների դասակարգումը:

2. Ներքին աուդիտի ծառայության հիմնական գործառույթները և խնդիրները:
3. Աուդիտորական պայմանագրի բովանդակությունը:
4. Աուդիտորական գործընթացի պլանավորումը և դրա փուլերը:
5. Աուդիտորական ընտրանքի մեթոդները: Աուդիտորական ապացույցներ
6. Աուդիտորական հաշվետվության կազմումը և դրա բովանդակությունը:
7. Աուդիտորական եզրակացություն
8. Հիմնական միջոցների աուդիտ:
9. Պաշարների աուդիտ:
10. Դեբիտորական պարտքերի աուդիտը:
11. Կրեդիտորական պարտքերի աուդիտը:
12. Դրամական միջոցների աուդիտը:
13. Հաշվարկային և Արտարժուպային հաշվով կատարված գործառնությունների աուդիտ:
14. Եկամուտների աուդիտ:
15. Ծախսերի աուդիտ:
16. Հիմնադիր փաստաթղթերի աուդիտը:
17. Սեփական կապիտալի ձևավորման աուդիտը:
18. Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական արդյունքների արտացոլման աուդիտը:
19. Կանոնադրական կապիտալի ձևավորման աուդիտը:

Բարձրագույն մաթեմատիկա

Դասընթացի նպատակն է՝

ուսումնասիրել անալիտիկ երկրաչափության, գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի, ինտեգրալ և դիֆերենցիալ հաշիվների, դիֆերենցիալ հավասարումների տեսության տարրերը, ծանոթացնել տնտեսագիտության մեջ խնդիրներ լուծելիս՝ դրանց կիրառություններին, կիրառել տնտեսագիտական տարբեր մեծություններից կախված ֆունկցիաների հետազոտություններ, կատարել վերլուծություններ իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա, տալ գնահատականներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/.

1. Վեկտորների տեսության տարրերը, ուղիղ գծի և հարթության հավասարումները,
2. Երկրորդ կարգի կորերի և մակերևույթների հավասարումները,
3. Մատրիցների տեսության տարրերը, դետերմինանտները,
4. Թվային հաջորդականությունն ու նրա սահմանը,
5. Ֆունկցիայի սահմանը, հայտնի սահմանները,

6. Ֆունկցիաների տեսությունը, ֆունկցիայի գրաֆիկը՝ ածանցյալի օգնությամբ,
7. Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի տարրերը,
8. դիֆերենցիալ հավասարումների տեսությունը,
9. Թվային և ֆունկցիոնալ շարքերը, նրանց զուգամիտության հայտանիշների դասակարգումը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Կատարել գործողություններ վեկտորների հետ, հաշվել դետերմինանտներ,
2. Լուծել գծային հանրահաշվական հավասարումների համակարգեր, մեկնաբանել դրանց կիրառման և օգտագործման տեսակները,
3. Հետազոտել ֆունկցիան, կատարել եզրահանգումներ, կառուցել գրաֆիկը,
4. Համակարգել անորոշությունները, դրանք բացել Լոպիտալի կանոնով,
5. Գրել տարրական ֆունկցիաների Թեյլորի բանաձևը,
6. Հաշվել անորոշ և որոշյալ ինտեգրալներ,
7. Հաշվել հարթ պատկերի մակերեսը՝ ինտեգրալի միջոցով,
8. Հաշվել կորի աղեղի երկարությունը,
9. Լուծել սովորական դիֆերենցիալ հավասարումներ
10. Հաշվել թվային և ֆունկցիոնալ շարքերի գումարը:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. անալիտիկ երկրաչափության, գծային հանրահաշվի հիմնական մեթոդներին, կարող է հիմնավոր եզրակացություններ անել ուսումնասիրած տեսությունների վերաբերյալ:
2. Մաթ. անալիզի, ինտեգրալ և դիֆերենցիալ հաշիվների հիմնական գաղափարներին, կարող է դատողություններ անել դրանց վերաբերյալ, առաջարկել լուծումների նոր տարբերակներ, հիմնավորել դրանք:

Դասընթացը բաղկացած է 2 մոդուլից:

11/Բ5 Բարձրագույն մաթեմատիկա -1 (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Կրթական արդյունքները.

Մոդուլի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/.

1. Վեկտորների տեսության տարրերը, ուղիղ գծի և հարթության հավասարումները,

2. Երկրորդ կարգի կորերի և մակերևույթների հավասարումները,
3. Մատրիցների տեսության տարրերը, դետերմինանտները,
4. Թվային հաջորդականությունն ու նրա սահմանը,
5. Ֆունկցիայի սահմանը, հայտնի սահմանները,

Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Կատարել գործողություններ վեկտորների հետ, հաշվել դետերմինանտներ,
2. Լուծել գծային հանրահաշվական հավասարումների համակարգեր, մեկնաբանել դրանց կիրառման և օգտագործման տեսակները,
3. Հետազոտել ֆունկցիան, կատարել եզրահանգումներ, կառուցել գրաֆիկը,
4. Համակարգել անորոշությունները, դրանք բացել Լոպիտալի կանոնով,

Մոդուլի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

Մաթեմատիկական անալիզի, ինտեգրալ և դիֆերենցիալ հաշիվների հիմնական գաղափարներին, կարող է դատողություններ անել դրանց վերաբերյալ, առաջարկել լուծումների նոր տարբերակներ, հիմնավորել դրանք:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վեկտորի գաղափարը: Գծային գործողություններ վեկտորների հետ: Համագիծ վեկտորներ: Երկու վեկտորների համագիծ լինելու անհրաժեշտ և բավարար պայմանը: Համահարթ վեկտորներ: Երեք վեկտորների համահարթ լինելու անհրաժեշտ և բավարար պայմանը: Վեկտորի վերլուծումը երեք ոչ համահարթ վեկտորների ուղղությամբ: Վեկտորի կորդինատները: Գործողություններ վեկտորների հետ իրենց կորդինատների միջոցով:

Թեմա 2. Հատվածի բաժանումը տրված հարաբերությամբ: **Թեմա 3.** Սկալյար արտադրյալը և նրա հատկությունները: Սկալյար արտադրյալը կորդինատներով: Վեկտորական արտադրյալը և նրա հատկությունները: Երկու վեկտորների համագիծ լինելու անհրաժեշտ և բավարար պայմանը: Վեկտորական արտադրյալը կորդինատներով:

Թեմա 4. Երեք վեկտորների խառն արտադրյալը և նրա երկրաչափական իմաստը: Երեք վեկտորների համահարթ լինելու անհրաժեշտ և բավարար պայմանը խառն արտադրյալի միջոցով:

Թեմա 5. Հարթության վրա ուղիղ գծի հավասարման տարբեր տեսքերը: Երկու ուղիղներով կազմված անկյունը: Երկու ուղիղների զուգահեռության և ուղղահայացության պայմանները: Կետի հեռավորությունը ուղղից: **Թեմա 6.** Երկրորդ կարգի կորեր՝ շրջանագծի, էլիպսի և հիպերբոլի կանոնական հավասարումը: Էլիպսի և հիպերբոլի դիրեկտրիսաները: **Թեմա 7.** Տրված կետով անցնող և տրված վեկտորին ուղղահայաց հարթության հավասարումը: Հարթության ընդհանուր հավասարումը: Երկու հարթություններով կազմված անկյունը: Հարթությունների զուգահեռության և ուղղահայացության պայմանները: Կետի հեռավորությունը հարթությունից: Ուղիղ գծի ընդհանուր, պարամետրական և կանոնական

հավասարումները տարածության մեջ: **Թեմա 8.** Մատրիցներ: Գործողություններ մատրիցների հետ: Թեորեմ հակադարձ մատրիցի գոյության մասին: Գծային հավասարումների համակարգի լուծումը մատրիցային եղանակով: Կրամերի կանոնը: n անհայտով m գծային հավասարումների համակարգ: Գաուսի մեթոդը: **Թեմա 9.** Մատրիցի ռանգը: Թեորեմ մատրիցի ռանգի մասին: Կրոնեկեր-Կապելիի թեորեմը: n անհայտով n գծային համասեռ հավասարումների համակարգ: Գծային օպերատորի սեփական վեկտորները և սեփական արժեքները: **Թեմա 10.** Գաղափար թվային հաջորդականության մասին: Հաջորդականության սահմանը: Սահմանի միակությունը: e թիվը (առանց ապացույցի): Բնական լոգարիթմներ: Թվային ֆունկցիա: Ֆունկցիայի տրման եղանակները: Ֆունկցիայի սահմանը վերջավոր կետում և անվերջությունում: Սահման ունեցող ֆունկցիայի սահմանափակությունը: Միակողմանի սահմաններ: Անվերջ փոքր և անվերջ մեծ ֆունկցիաներ: Անվերջ փոքր ֆունկցիաների հատկությունները: Անվերջ փոքր ֆունկցիաների համեմատումը: Ֆունկցիայի ներկայացնելը իր սահմանի և անվերջ փոքր ֆունկցիայի գումարի տեսքով: Գումարի, արտադրյալի և քանորդի սահմանները: **Թեմա 11.** Թեորեմ միջանկյալ ֆունկցիայի սահմանի վերաբերյալ: Առաջին նշանավոր սահմանը՝

$$\lim_{x \rightarrow 0} \frac{\sin x}{x} = 1: \text{ Երկրորդ նշանավոր սահմանը՝ } \lim_{x \rightarrow \infty} \left(1 + \frac{1}{x}\right)^x = e \text{ (առանց ապացույցի):}$$

Նշանավոր սահմաններ՝

$$\lim_{x \rightarrow 0} \frac{\log_a(1+x)}{x} = \log_a e; \quad \lim_{x \rightarrow 0} \frac{a^x - 1}{x} = \ln a;$$

$$\lim_{x \rightarrow 0} \frac{(1+x)^a - 1}{x} = a:$$

Թեմա 12. Ֆունկցիայի անընդհատությունը: Թվաբանական գործողություններ անընդհատ ֆունկցիաների հետ: Բարդ ֆունկցիայի անընդհատությունը: Հակադարձ ֆունկցիա: Հակադարձ ֆունկցիայի անընդհատությունը: **Թեմա 13.** Ֆունկցիայի խզման կետերը և նրանց դասակարգումը: Հատվածում անընդհատ ֆունկցիաների հատկությունները (առանց ապացույցի): Ածանցյալի գաղափարին բերվող խնդիրներ: Ֆունկցիայի ածանցյալի սահմանումը և նրա երկրաչափական իմաստը: Կորի տրված կետում տարված շոշափողի և նորմալի հավասարումները: Ֆունկցիայի ածանցելիությունը: Ածանցելի ֆունկցիայի անընդհատությունը: Հակադարձ ֆունկցիայի ածանցյալը: **Թեմա 14.** Հիմնական տարրական ֆունկցիաների ածանցյալները: Գումարի, արտադրյալի և քանորդի ածանցյալները: Բարդ ֆունկցիայի ածանցյալը: Աստիճանացուցչային ֆունկցիայի ածանցյալը: Ածանցյալների բանաձևերի աղյուսակը: Պարամետրական տեսքով տրված ֆունկցիաներ, կորեր: **Թեմա 15.** Պարամետրական տեսքով տրված ֆունկցիայի ածանցյալը:

11/Բ5 Բարձրագույն մաթեմատիկա -2 (3 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Կրթական արդյունքները.

Մոդուլի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. Ֆունկցիաների տեսությունը, ֆունկցիայի գրաֆիկը՝ ածանցյալի օգնությամբ,
2. Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի տարրերը, դիֆերենցիալ հավասարումների տեսությունը,
3. Թվային և ֆունկցիոնալ շարքերը, նրանց զուգամիտության հայտանիշների դասակարգումը:

Մոդուլի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. հետազոտել ֆունկցիան, կատարել եզրահանգումներ, կառուցել գրաֆիկը,
2. համակարգել անորոշությունները, դրանք բացել Լոպիտալի կանոնով,
3. գրել տարրական ֆունկցիաների Թեյլորի բանաձևը,
4. հաշվել անորոշ և որոշյալ ինտեգրալներ,
5. հաշվել հարթ պատկերի մակերեսը՝ ինտեգրալի միջոցով,
6. հաշվել կորի աղեղի երկարությունը,
7. հաշվել թվային և ֆունկցիոնալ շարքերի գումարը:

Մոդուլի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

Մաթ. անալիզի, ինտեգրալ և դիֆերենցիալ հաշիվների հիմնական գաղափարներին, կարող է դատողություններ անել դրանց վերաբերյալ, առաջարկել լուծումների նոր տարբերակներ, հիմնավորել դրանք:

Բովանդակությունը.

Թեմա 16. Բարձր կարգի ածանցյալներ: Ֆունկցիայի դիֆերենցիալը և նրա երկրաչափական իմաստը: Գումարի, արտադրյալի և քանորդի դիֆերենցիալները: Անորոշությունների բացումը Լոպիտալի կանոնով: Ֆերմայի, Ռոլլի, Լագրանժի և Կոշիի թեորեմները: Դրանց երկրաչափական իմաստները: Ֆունկցիայի աճման և նվազման պայմանները: Էքստրեմումի կետեր: Ֆունկցիայի էքստրեմումի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը: Էքստրեմումի գոյության բավարար պայմանը երկրորդ կարգի ածանցյալի միջոցով: Ֆունկցիայի գրաֆիկի գոգավորությունը և ուռուցիկությունը: Շրջման կետեր: Ֆունկցիայի գրաֆիկի ասիմպտոտներ:**Թեմա 17.** Մի քանի փոփոխականի ֆունկցիայի սահմանում: Երկու փոփոխականի ֆունկցիայի սահմանը, անընդհատությունը և մասնակի ածանցյալները: Մասնակի ածանցյալների երկրաչափական իմաստը: Երկու փոփոխականի ֆունկցիայի

դիֆերենցելիությունը, լրիվ դիֆերենցիալը և նրա կապը մասնակի ածանցյալների հետ: Դիֆերենցելիության բավարար պայմանը (առանց ապացույցի): **Թեմա 18.** Գաղափար նախնական ֆունկցիայի և անորոշ ինտեգրալի մասին: Անորոշ ինտեգրալի հիմնական հատկությունները: Հիմնական ինտեգրալների աղյուսակ: Փոփոխականի փոխարինումը անորոշ ինտեգրալում: Մասերով ինտեգրման մեթոդը: Պարզագույն ռացիոնալ կոտորակների ինտեգրումը: Իռացիոնալ ֆունկցիաների ինտեգրումը: Եռանկյունաչափական ֆունկցիաների ինտեգրումը: Խնդիրներ, որոնք հանգեցնում են որոշյալ ինտեգրալի գաղափարին: Որոշյալ ինտեգրալի գոյության թեորեմը (առանց ապացույցի): Որոշյալ ինտեգրալի հատկությունները: Միջին արժեքի թեորեմը: **Թեմա 19.** Որոշյալ ինտեգրալը որպես վերին փոփոխական սահմանի ֆունկցիա: Նյուտոն-Լայբնիցի բանաձևը: Փոփոխականի փոխարինումը որոշյալ ինտեգրալում: Զույգ և կենտ ֆունկցիաների ինտեգրումը: Մասերով ինտեգրում: Առաջին և երկրորդ սեռի անհսկական ինտեգրալներ: Դրանց զուգամիտության հայտանիշները (առանց ապացույցի): Հարթ պատկերի մակերեսի հաշվումը ուղղանկյուն կոորդինատներով: Հարթ կորի աղեղի երկարությունը և նրա հաշվումը: Պտտման մարմնի ծավալը:

12/Բ11 Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն (3Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Այն օինաչափությունների սահմանումները, որոնց ենթարկվում են զանգվածային պատահական երևույթները, հիմնված են վիճակագրական տվյալների և հավանականությունների տեսության մեթոդի հիման վրա: Մաթեմատիկական վիճակագրության խնդիրն է ցույց տալ վիճակագրական տվյալների, հետազոտության կամ փորձերի արդյունքների ընտրանքի և խմբավորման եղանակներ: Մաթեմատիկական վիճակագրության նպատակն է՝ կախված հետազոտության նպատակներից մշակել վերլուծության մեթոդներ, որոնց վերաբերվում են՝ պատահարի տեղի ունենալու անհայտ հավանականության գնահատումը, ֆունկցիայի բաշխման ձևի գնահատումը, բաշխման պարամետրերի գնահատումը, կախյալ փոփոխականի և մեկ կամ մի քանի պատահական մեծությունների միջև կախվածության գնահատումը, վիճակագրական հիպոթեզների ստուգումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կհմանա

/Գիտելիք/.

1. առարկայի էությունը, առարկայի բովանդակությունը,
2. առարկայի և տնտեսագիտական երևույթների միջև եղած կապը, պատահական մեծությունների քանակական հայտանիշները,

3. պատահական մեծությունների որակական հայտանիշները,
4. պատահական մեծությունների արդյունքային և գործոնային հայտանիշները:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա
/Կարողություն/.**

1. բնութագրել պատահական մեծությունները և նրանց բաշխման ձևերը,
2. գնահատել բաշխման պարամետրերը,
3. իրականացնել վիճակագրական հիպոթեզների ստուգում,
4. կատարել կոռելյացիոն ռեգրեսիոն վերլուծություն:

**Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.**

1. առարկայի հաշվարկային ձևերին և մեթոդներին, պատահական երևույթների վիճակագրական վերլուծություններին:

Բովանդակությունը.

ԲԱԺԻՆ 1 ԹԵՄԱ 1. Հավանականության սահմանումը: Միացության տեսության տարրերը, պատահույթներ և գործողություններ դրանց հետ: Հավանականությունների դասական և վիճակագրական սահմանումը: Երկրաչափական հավանականություններ: **ԹԵՄԱ 2.** Հիմնական թեորեմներ: Հավանականությունների գումարման և բազմապատկման թեորեմները: Լրիվ հավանականության և Բայեսի բանաձևերը: Փորձերի կրկնություն: Բեռնուլիի և Պուասոնի բանաձևերը, ամենահավանական թիվը: Լապլասի լրկալ և ինտեգրալ մոտավոր բանաձևերը: Անկախ փորձերում հարաբերական հաճախության շեղումը հաստատուն հավանականությունից: **ԹԵՄԱ 3.** Պատահական մեծություններ: Դիսկրետ պատահական մեծություններ, բաշխման օրենք, թվային բնութագրիչներ: Պատահույթների պարզագույն հոսք: Անընդհատ պատահական մեծություններ և թվային բնութագրիչները: Բաշխումների մի քանի կարևոր տեսական օրինակներ: Երկչափ պատահական մեծություններ: Մեծ թվերի օրենքը:

ԲԱԺԻՆ 2

ԹԵՄԱ 4. Մաթեմատիկական վիճակագրության մեթոդը և խնդիրները: Մաթեմատիկական վիճակագրության մեթոդը և խնդիրները: Մաթեմատիկական վիճակագրության կապը մյուս գիտությունների հետ: Մաթեմատիկական վիճակագրության կապը մյուս հասարակական գիտությունների հետ: **ԹԵՄԱ 5.** Մաթեմատիկական վիճակագրության տարրերը: Դիտարկման տեղեկատվության ինֆորմացիայի հավաքագրում: Հասկացություն ինֆորմացիայի մասին: Դիտարկման ձևերը, եղանակները, տեսակները: Դիտարկման ծրագրամեթոդաբանական հարցերը: Նյութերի ամփոփումը և նրա բնութագրիչները: **ԹԵՄԱ 6.** Վիճակագրական բաշխումներ և դրանց հիմնական բնութագրիչները: Բաշխման շարքեր և դրանց կառուցման հնարքները: Միջին մեծություններ: Բաշխման կենտրոնի ցուցանիշներ:

Կարգային բնութագրիչներ: Հատկանիշի վարիացիայի ցուցանիշները և դրանց հաշվարկման եղանակները: Ուսումնասիրվող հատկանիշի դիսպերսիայի գումարումը: Ալտերնատիվ հատկանիշի դիսպերսիա: Բաշխման ձևի ցուցանիշներ: Բաշխման կորեր: Էմպիրիկ տվյալներով նորմալ բաշխման կառուցում: Համաձայնության հայտանիշներ: **Թեմա 7. Ընտրանքային մեթոդ:** Հասկացություն ընտրանքային մեթոդի մասին: Գլխավոր և ընտրանքային համակցություններ: Կրկնվող և չկրկնվող ընտրանքներ: Ներկայացուցչական ընտրանք: Ընտրանքային եղանակներ: Ընտրանքի վիճակագրական բաշխումը: **Թեմա 8. Ընտրանքի բնութագրիչների ամփոփ հաշվարկման մեթոդները:** Պայմանական տարբերակներ: Սովորական, սկզբնական և կենտրոնական էմպիրիկ մոմենտներ: Պայմանական կենտրոնական մոմենտներ, պայմանականների միջոցով կենտրոնական մոմենտների հաշվարկումը: Ընտրանքային միջինի և դիսպերսիայի հաշվարկման արտադրյալների մեթոդը: Էմպիրիկ և հարթեցված (տեսական) հաճախություններ: Դիսկրետ բաշխում: Փաստացի տվյալների հիման վրա նորմալ կորի կառուցում: Փաստացի և տեսական նորմալ կորերի շեղումների գնահատականը: Ասիմետրիայի և էքսցեսի ցուցանիշները: **Թեմա 9. Վիճակագրական վարկածների (հիպոթեզների) վիճակագրական ստուգում:** Վիճակագրական վարկածներ: Առաջնային երկրորդական տիպի սխալներ: Կրիտիկական տիրույթներ: Հիպոթեզների ընդունման տիրույթ: Կրիտիկական կետեր: Աջակողմյան կրիտիկական տիրույթի որոնում: Ձախակողմյան, երկողմանի կրիտիկական տիրույթների որոնում: Նորմալ բաշխված գլխավոր համակցությունների երկու դիսպերսիաների համեմատումը: **Թեմա 10. Դիսպերսիոն վերլուծություն:** Միագործոն դիսպերսիոն վերլուծություն՝ նույն թվով փորձեր բոլոր մակարդակներում: Միագործոն դիսպերսիոն վերլուծություն՝ տարբեր թվով փորձեր բոլոր մակարդակներում: Երկգործոն դիսպերսիոն վերլուծություն:

Հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Դասընթացի նպատակն է՝

Ուսումնասիրել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները և կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք.

Ուսանողը պետք է գիտենա հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների սահմանումը, նպատակները, գործողության ոլորտները, ճանաչումը և չափումը, բացահայտումը ֆինանսական հաշվետվություններում:

Կարողություն.

Ուսանողը պետք է կարողանա վարել հաշվապահական հաշվառումը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և կազմել ֆինանսական հաշվետվությունները

Հմտություն.

Ուսանողը պետք է տիրապետի միջազգային ստանդարտների կիրառման սկզբունքներին և առանձնահատկություններին:

14/Բ12-1 Հաշվապահական հաշվառման ստանդարտներ-1 (4 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն 2 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, ստուգարք

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում: **Թեմա 2.** ՀՀՄՍ 2 Պաշարներ: **Թեմա 3.** ՀՀՄՍ 7 Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին: **Թեմա 4.** ՀՀՄՍ 8 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ: **Թեմա 5.** ՀՀՄՍ 12 Շահութահարկեր: **Թեմա 6.** ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ: **Թեմա 7.** ՀՀՄՍ 17 Վարձակալություն:

14/Բ12-2 Հաշվապահական հաշվառման ստանդարտներ-2 (5 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն 2 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, քննություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 8. ՀՀՄՍ 18 Հասույթ: **Թեմա 9.** ՀՀՄՍ 19 Աշխատակիցների հատուցումներ:**Թեմա 10.** ՀՀՄՍ 23 Փոխառության ծախսումներ: **Թեմա 11.** ՀՀՄՍ 32 Ֆինանսական գործիքներ, ներկայացումը: **Թեմա 12.** ՀՀՄՍ 33 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ: **Թեմա 13.** ՀՀՄՍ 38 Ոչ նյութական ակտիվներ: **Թեմա 14.** ՀՀՄՍ 40 Ներդրումային գույք: **Թեմա 15.** ՀՀՄՍ 41 Գյուղատնտեսություն:

Հարկային հաշվառում

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող օրենսդրական ու նորմատիվ ակտերին համապատասխան բացահայտել հարկային հաշվառման կարգը, տարբերակել հարկման ընդհանուր և հատուկ համակարգերը, պետական և տեղական հարկերը, հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները, մասնավորապես՝ յուրաքանչյուր հարկատեսակի գծով դասակարգել հարկ վճարողների շրջանակը, հարկվող օբյեկտը, դրույքաչափերը, հարկերի հաշվարկման ու վճարման կարգը, արտոնությունները՝ յուրաքանչյուր հարկատեսակի գծով և այլն:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. ճանաչել հարկատեսակները, դասակարգել և ներկայացնել նրանց տեսակները,
2. տարբերակել և սահմանել տեղական և պետական հարկերի հարկման բազան,
3. ճանաչել և շարադրել հարկ վճարողների շրջանակը, հարկման կարգը, ժամկետները,
4. ձևակերպել և պարզաբանել հարկային արտոնությունները, կիրառման կարգը,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

7. Ներկայացնել և մեկնաբանել յուրաքանչյուր հարկատեսակի դրույքաչափերը,
8. Կատարել հարկի ճիշտ հաշվառում, պարզաբանելով և հաշվի առնելով յուրաքանչյուր հարկատեսակի նվազեցումները,
9. Մեկնաբանել և պարզաբանել համախառն և նվազեցվող եկամուտները,
10. Բնութագրել և ամփոփել հարկային լրիվ պարտավորության հաշվառումը և վերլուծել

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Գործնականում կիրառել տարբեր հարկերի հաշվարկման եղանակները և լուծել հարկային հաշվառման իրավիճակային խնդիրներ,
2. Ընտրել, պատկերավոր ներկայացնել և առաջարկել տնտեսավարող սուբեկտի գործունեության համար համապատասխան հարկատեսակը,
3. Ցույց տալ, վերլուծել, մեկնաբանել հարկատեսակի կիրառման անհրաժեշտությունն ըստ ոլորտի.

14/Բ15-1 Հարկային հաշվառում-1 (3 Կրեդիտ)

12 ժամ (6 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, սպուգարք

Բովանդակություն

Թեմա 1. Եկամտային հարկի հաշվառում: Եկամտային հարկ վճարողները՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ, հարկվող եկամուտը, համախառն եկամուտը: Համախառն եկամտի տարրերը: Հարկի հաշվառման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտները: Եկամտային հարկի դրույքաչափերը: Գյուղատնտեսական և այլ գործունեության իրականացումից ստացված եկամտի հարկման կարգը: Հարկային գործակալի կողմից պահված հարկը պետական բյուջե վճարման ենթակա գումարի չափը, ժամկետը: Հայտարարագրում: **Թեմա 2.** Շահութահարկի հաշվառումը Շահութահարկ վճարողները: Եկամուտների ստացման աղբյուրները: Եկամուտ չհամարվող տարրերը: Կանխավճար կատարող հարկատուները: Համախառն եկամտի տարրերը: Հարկի հաշվառման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ: Հարկման օբեկտը, հարկման բազան, հարկի դրույքաչափերը՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հարկատուների համար: Հարկային արտոնությունները: Բարեգործական հատկացումների համախառն եկամտից նվազեցման չափը: Ամորտիզացիոն մասհանումների կատարման կարգը ձեռք բերված հիմնական միջոցների համար: Հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը: Հարկային պարտավորության առաջացման պահը; հարկի գանձման ու վճարման կարգը, ժամկետները: **Թեմա 3.** Ավելացված արժեքի հարկի հաշվառումը Ավելացված արժեքի հարկ վճարողները: ԱԱՀ-ով հարկման օբեկտը, հարկման բազան, հաշվառման առանձնահատկությունները: ԱԱՀ-ից ազատված գործարքները, զրոյական դրույքաչափով հարկվող գործարքները: Հարկային հաշիվների դուրսգրումը: Պետական բյուջե վճարման ենթական ԱԱՀ-ի գումարի հաշվարկման չափը: ԱԱՀ-ի հաշվանցումների իրականացման կարգը: ԱԱՀ-ի գումարի վճարումը: ԱԱՀ հաշվետվություն ներկայացնողները:

14/Ք15-2 Հարկային հաշվառում-2 (4 Կրեդիտ)

16 ժամ (8 ժամ դասախոսություն 8 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակություն

4.Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը Գույքահարկ վճարողները, անշարժ գույքի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունները, հարկի վճարումից ազատվածները: Գույքի կադաստրային արժեքը: Հարկման օբեկտը, բազան, հարկի դրույքաչափերը: Հարկային պարտավորության առաջացման և դադարելու պահը; Գույքահարկի գանձման ու վճարման կարգը, ժամկետները ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Հողի հարկ վճարողները, հարկի վճարումից ազատվածները: Հողի կադաստրային արժեքը: Հարկման բազան, հարկի դրույքաչափերը: Հարկային պարտավորության առաջացման պահը; Հողի հարկի գանձման ու վճարման կարգը, ժամկետները: **Թեմա 5.** Ակցիզային հարկի հաշվառումը Ակցիզային հարկ

վճարողները: Ակցիզային հարկով հարկման օբեկտը, հարկման բազան, հաշվառման առանձնահատկությունները: Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները: Հարկի դրույքաչափերը: Ակցիզային հարկից ազատված գործարքները: Հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը: **Թեմա 6. Շրջանառության հարկ, Միկրոձեռնարկատիրություն**

Շրջանառության հարկ վճարողները: Շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելը: Հարկի դրույքաչափերը: Շրջանառության հարկով հարկման օբեկտը, հարկման բազան, հաշվառման առանձնահատկությունները: Հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը: Միկրոձեռնարկատիրության շրջանակում հարկ վճարողները: Հարկի դրույքաչափերը, հարկման օբեկտը, հարկման բազան, հաշվառման առանձնահատկությունները: Հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը: **Թեմա 7. Ճանապարհային հարկ, բնապահպանական հարկ** Ճանապարհային հարկ վճարողները: Հարկի դրույքաչափերը: Ճանապարհային հարկով հարկման օբեկտը, հարկման բազան, արտոնությունները, հաշվառման առանձնահատկությունները: Հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը: Բնապահպանական հարկ վճարողները: Վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը: Արտանետման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկը: Ջրային ռեսուրս անմիջապես կամ կենտրոնացված ջրահեռացման ցանցեր և այլ ջրային համակարգեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկ: Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկը: Բնապահպանական հարկով հարկման օբեկտը, հարկման բազան, հարկման բազայի չափաքանակները, արտոնությունները, հաշվառման առանձնահատկությունները: Հարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգը:

13/Բ44 Տնտեսական աշխարհագրություն (2 Կրեդիտ)

10 ժամ (8 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ հասարակական աշխարհագրության հիմնական դրույթների, մեթոդաբանության մեթոդների վերաբերյալ սովորեցնել կարողություններ տարածաշրջանի հասարակական ողջ կառուցվածքը տեսնելու մեկ ընդհանրության մեջ: Ցույց տալ աշխարհագրության դերն ու նշանակությունը տնտեսության առանձին ճյուղերի և ռեգիոնների տնտեսության համալիրային զարգացման պլանավորման գործընթացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա /Գիտելիք/.

- հասարակական աշխարհագրության խնդիրները, մեթոդաբանությունը, կառուցվածքը, կապը այլ գիտությունների հետ,
- տեղը և դերը աշխարհագրական գիտությունների համակարգում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա /Կարողություն/.

- տեսնելու արդի հասարակության մեջ ծառայած խնդիրների լուծման ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի /Հմտություն/.

- գտնելու մարդ-բնություն- հասարակություն փոխհարաբերությունների գաղտնիքները
- այդ հարաբերությունները կապել տարածքի բնառեսուրսային ներուժի հետ:

Բովանդակությունը.

Բաժին 1. Աշխարհագրական գիտությունների համակարգը: Գիտության հասկացությունը, գիտության հասարակական դերը, գիտությունների դասակարգումը: Աշխարհագրությունը գիտությունների համակարգում, աշխարհագրության կառուցվածքը: Բնական և հասարակական աշխարհագրությունների կապը: **Բաժին 2.** Հասարակական աշխարհագրություն: Հասարակական աշխարհագրության ձևավորման նախադրյալները, հասարակության մասին գիտելիքների անդրադարձը աշխարհագրության մեջ: Հասարակական աշխարհագրության զարգացման փուլերը՝ ա/ անտիկ ժամանակաշրջան, բ/ միջին դարեր, գ/ վերածննդի և աշխարհագրական մեծ հայտնագործությունների, դ/ նոր ժամանակաշրջան: **Բաժին 3.** Հասարակական աշխարհագրության հիմնական հասկացությունները: Աշխարհագրական դիրքի հասկացությունները: Աշխատանքի աշխարհագրական բաժանում: Հասարակության տարածքային կազմակերպում, տարածքային կառուցվածք: Շրջանացում, շրջան, շրջանագոյացում: Աշխարհագրական համակարգ, աշխարհագրական մոտեցում: **Բաժին 4.** Հասարակական աշխարհագրության գիտությունների համակարգը: Բնակչության աշխարհագրության, տնտեսական աշխարհագրության, բնական ռեսուրսների աշխարհագրության, մշակույթի աշխարհագրության, ռեգիոնալ աշխարհագրության տնտեսական-հասարակական աշխարհագրություն: Հասարակական աշխարհագրության թվարկված յուրաքանչյուր բաղադրիչների վերլուծություն; **Բաժին 5.** Հասարակական աշխարհագրության մեթոդները: Գիտական հետազոտության մեթոդների դասակարգումը: Աշխարհագրական հետազոտությունների հիմնական մեթոդները: **Բաժին 6.** Հասարակական աշխարհագրության զարգացման հեռանկարները:

14/Բ6 Գործավարությունը հաշվապահությունում (3 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակաուղղված է պարզաբանել ու ներկայացնել հաշվապահական հաշվառման հիմնական սկզբունքները, վարման կարգն ու կանոնները, հաշվապահական հաշվառման մեջ գործավարությունն իրականացնելու նպատակով պահանջվող փաստաթղթերի օրինակելի ձևերն ու կիրառման կարգը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական ու նորմատիվ ակտերին համապատասխան:

Դասընթացը ներկայացնում է այն հիմնական գործառույթները և սկզբունքները, որոնք պետք է կատարվեն, այն հիմնական փաստաթղթերն ու հաշվետվությունները, որոնք պետք է լրացվեն, կազմվեն ու ներկայացվեն համապատասխան մարմիններին հաշվապահական հաշվառումն իրականացնող ստորաբաժանման կողմից սահմանված կարգով գործավարությունն իրականացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պետական գրանցում ստանալու և գործունեություն ծավալելու պահից մինչև գործընթացի ավարտը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

/Գիտելիք/.

1. Իմանա, ճանաչի փաստաթղթերի ձևերն ու տեսակները, դասակարգի դրանք՝ ըստ բովանդակության,
2. տարբերակի և պարզաբանի սկզբնական հաշվառման փաստաթղթերը,
3. ներկայացնի ծախսը հիմնավորող փաստաթղթերը,
4. իրականացնի գործառույթին համապատասխան փաստաթղթի լրացում անհրաժեշտ վավերապայմաններով,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Բացատրել յուրաքանչյուր գործառույթից բխող հաշվապահական հաշվառման փաստաթղթի կառուցվածքը, ներկայացնի տվյալների ցույց տա լրացման կարգը,
2. Խմբավորել և տեսակավորել գործունեության արդյունքում առաջացած փաստաթղթերն ըստ բովանդակության և ամփոփել համապատասխան թղթապանակներում,
3. Վերլուծել հաշվապահական հաշվառման տեսանկյունից պայմանագրային պարտավորությունների հաշվառման կարգը և ամփոփ տեղեկատվության արտացոլումը հաշվետվություններում,
4. Բացահայտել արխիվացման փաստաթղթերում առկա տեղեկատվության համաձայն նրանց պահպանության ժամկետները, ոչնչացման կարգը:

Դասընթացիավարտինուսանողըկտիրապետի

/Հմտություն/.

1. Ինքնուրույն լրացնել ծախսերը հիմնավորող փաստաթղթերը և լուսաբանել անհրաժեշտ վավերապայմանները,
2. Մեկնաբանել փաստաթղթավորման և էլեկտրոնային տեղեկատվության զուգահեռ գոյակցումը:

Բովանդակություն

Թեմա 1. Պայմանագրեր, պայմանագրային պարտավորություններ: Պայմանագրային պարտավորությունների ստանձնման օրենսդրորեն հիմնավորումը: Աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան կնքվող աշխատանքային պայմանագրերը հաշվապահությունում, հաշվառման կարգը, հարկումը: Քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան կնքվող քաղաքացիաիրավական պայմանագրերը հաշվապահությունում, հաշվառման կարգը, հարկումը: Նյութական լրիվ պատասխանատվության պայմանագրերը, նրանց անհրաժեշտությունը հաշվապահությունում: **Թեմա 2.** Գործավարությունն ապահովող փաստաթղթերի օրինակելի ձևերը: Փաստաթղթերի՝ ըստ նրանց բովանդակության տեսակավորումը, ստուգումը, տվյալների ամփոփումը և հավաքումն ու պահպանումը համապատասխան թղթապանակներում: Սահմանված դեպքում որոշակի խումբ փաստաթղթերի գրանցումը գրանցամատյաններում, գրանցման կարգը, ժամկետները:

Ծախսը հիմնավորող փաստաթղթերի՝ ընդհանուր սկզբնական հաշվառման փաստաթղթերից տարբերակելու կարգը, կառուցվածքը՝ տիտղոսային և հիմնական աղյուսակային մասերի տեղեկատվության անհրաժեշտ տարրերը, պարտադիր վավերապայմանները, լրացման կարգը: **Թեմա 3.** Դրամարկղային գրքի վարման կարգը, խնդիրները, կառուցվածքը: Դրամարկղային գրքի ձեռքբերումը, թելակարումը, էջերի համարակալումը: Դրամարկղային գրքի կառուցվածքը, կանխիկ դրամով գործառնությունների գրանցումների կատարման կարգը, ժամկետները, պահպանման կարգը: Դրամարկղի մուտքի, ելքի օրդերի ձևաթղթի կառուցվածքը, լրացման կարգը, ժամկետները: Կանխիկ դրամով միանվագ գործարքի չափաքանակը: Կանխիկ դրամի պահպանման կարգը: Դրամարկղի մուտքի և ելքի օրդերներին կցվող հնարավոր փաստաթղթերի ներկայացում, լրացման կարգ: Պահեստի մուտքի և ելքի օրդերների կառուցվածքը, լրացման կարգը և ժամկետները: Պահպանման կարգը, հաշվապահական հաշվառման բաժին ներկայացման կարգը: **Թեմա 4.** Աշխատաժամանակի հաշվառման տեղեկագիր: Լրացման կարգը, ներկայացման ժամկետը: Աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրի կառուցվածքը, անհրաժեշտությունը և պարտադիր լինելը տնտեսավարող բոլոր սուբեկտների համար, վարման կարգը, պատասխանատուն, լրացման կարգը, հաշվետու ժամանակահատվածը, հաշվապահական հաշվառման բաժին ներկայացնելու կարգը: **Թեմա**

5. Գործուղման և ծառայողական շրջագայության մեկնողների անհրաժեշտ փաստաթղթերը, ծախսերը հիմնավորող փաստաթղթերը: Գործուղման և ծառայողական շրջագայության նպատակը, անհրաժեշտությունը, մեկնումը և գործուղման նպատակի իրականացումը հավաստող տեղեկատվությունը և դրա վավերականությունը: Գործուղման մեկնողին դրամական միջոցների տրամադրման հիմքը, չափը և ժամկետը: Գործուղումից վերադառնալուց հետո ծախսը հիմնավորող փաստաթղթերի՝ հաշվապահական հաշվառման բաժին ներկայացնելու ժամկետը, անհրաժեշտության դեպքում գումարի ետ վերադարձ, կամ պակաս վճարված գումարի ստացում: **Թեմա 6.** Արխիվի նպատակը, խնդիրները: Փաստաթղթերի՝ ըստ տեսակների ցանկի կառուցվածքը, պահպանության ժամկետները: Արխիվի անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրները: Արխիվացման հանձնվող փաստաթղթերի՝ ըստ տեսակների խմբավորման ցանկի կառուցվածքը, պահպանության ժամկետները: Ոչնչացման ենթակա փաստաթղթեր: Արխիվացման գործընթացի իրականացման պարբերականությունը: **Թեմա 7.** Գլխավոր գիրք կամ մատյան: Շրջանառության տեղեկագիր: Հիշարար /մեմորիա/ օրդեր: Կառուցվածքը, լրացման կարգը: Գլխավոր գրքի կառուցվածքը, նպատակը, նրանում գրանցումների կատարման պարբերականությունը, լրացման կարգը: Շրջանառության տեղեկագրերի և Հիշարար /մեմորիա/ օրդերների կիրառման նպատակը, կառուցվածքը, լրացման կարգը: **Թեմա 8.** Ծառայողական ավտոմեքենայի ուղեթերթիկ: Կառուցվածքը, լրացման կարգը: Ծառայողական մարդատար ավտոմեքենայի ուղեթերթիկները վարորդներին տրամադրելու կարգը: Ուղեթերթիկի կառուցվածքը, լրացման կարգը, պահպանությունը:

Հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրերով

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել կայուն և պրակտիկ գիտելիքներ գոյություն ունեցող հաշվապահական ծրագրերի, on-line փոխանցման համակարգերի, ծրագրային փաթեթների և համակարգերի զարգացման միտումների վերաբերյալ: Արմատավորվում է համակարգված պատկերացում այն մասին, թե ինչպես է վարվում հաշվապահական հաշվառումը համակարգիչների միջոցով: Դասընթացը բացահայտում և օգնում է ուսանողին հստակ պատկերացում կազմելու թե ինչպես է սկսվում և ավարտվում հաշվապահական հաշվառման ավտոմատացման գործընթացը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

1. Գիտենա

Նկարագրել հաշվապահական հաշվառման ավտոմատացման գործընթացը, Թվարկել ավտոմատացման դրական և բացասական կողմերը, տարբերակել հաշվապահական հաշվառման վարման համար նախատեսված ծրագրերը:

2.Կարողանա

համադրել համակարգչային և հաշվապահական հմտությունները, ընտրել ավտոմատացման լավագույն տարբերակը, շուկայում առաջարկվող տարբեր փաթեթներից ընտրել կազմակերպությանը համապատասխան ծրագրային փաթեթկազմակերպության սինթետիկ և անալիտիկ հաշվապահական հաշվառումը վարել համակարգիչների միջոցով

3.Տիրապետի

Շահագործել դասընթացի ընթացքում ուսումնասիրած հաշվապահական ծրագրերը, Կազմակերպության առանձնահատկություններից ելնելով ընտրել առավել օպտիմալ տարբերակը, on-line փոխանցման համակարգերի աշխատանքային սկզբունքներին

14/Բ10-1 Հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրերով-1 (4 Կրեդիտ)

16 ժամ (8 ժամ դասախոսություն 8 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը.

Թեմա 1. Տեղեկատվության հասկացությունը, տեսակները և առանձնահատկությունները, **Թեմա 2.** Ձեռնարկության կազմակերպչատնտեսական կառավարման ավտոմատացումը, **Թեմա 3.** Հաշվողական համակարգեր և ցանցեր, **Թեմա 4.** Տնտեսական խնդիրների ծրագրավորման լեզուները, **Թեմա 5.** EXCEL ծրագրի օգտագործումը հաշվապահական հաշվառման մեջ:

14/Բ10-2 Հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրերով-2 (4 Կրեդիտ)

18 ժամ (6 ժամ դասախոսություն 12 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը.

Թեմա 6. Հայկական ծրագրերի փաթեթը. **Թեմա 7.** 'ՀԾ-Հաշվապահ 6/7' ծրագրի տեղադրումը համակարգչի մեջ և առաջին մուտքը համակարգ, **Թեմա 8** Համակարգի շահագործումը, **Թեմա 9** ON-LINE համակարգեր, **Թեմա 10.** Համակարգչային տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները:

**Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում
Դասընթացի նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ բացահայտել հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման կարգը, հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական ու նորմատիվ ակտերին համապատասխան: Հատուկ ուշադրություն է տրամադրվելու Հայաստանի Հանրապետությունում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ընթացիկ փոփոխություններին, հաշվային պլանի ուսումնասիրմանը, ինչպես նաև հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին ծանոթանալով բացահայտել նրա համապատասխանեցումը ՀՀՄՍ և ՖՀՄՍ-երին, հարկման կարգին և առանձնահատկություններին:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. Հստակ իմանա, ճանաչի բյուջետային ծախսերի դասակարգումները,
2. պարզաբանի և տարբերակի ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվները,
3. ներկայացնի բյուջետային հատկացումների կատարման կարգը,
4. իրականացնի անհրաժեշտ հաշվապահական գրանցումներ,

/Կարողություն/.

1. Բացատրել հանրային հատվածի կազմակերպությունների գործառույթներից բխող հաշվապահական հաշվառման փաստաթղթերի տեղեկատվությունը,
2. Ամփոփել բյուջետային հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և արտացոլել հաշվապահական հաշվառման փաստաթղթերում,
3. Վերլուծել հաշվապահական հաշվառման ամփոփ տեղեկատվությունը
4. Բացահայտել բյուջեի կատարման մասին հաշվետվություններում առկա տեղեկատվության շեղումները և դրանց պատճառները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Ինքնուրույն լրացնել բյուջետային ծախսերի նախահաշիվը և լուսաբանել բյուջետավորումը,
2. Հանրային հատվածում իրականացվող գործառնությունների սահմանված կարգով և ժամկետներում ձևակերպումները,
3. Ընտրել ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի ձևը, հաշվարկել և մեկնաբանել:

14/Բ9-1 Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում-1 (3 Կրեդիտ)

12 ժամ (8 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը

Թեմա 1 Հանրային հատվածում հաշվապահական հաշվառման կազմակերպման հիմքերը

Տնտեսության հանրային հատված կատեգորիայի տնտեսագիտական բովանդակությունը: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը, նրա էությունը և ընդհանուր հատկանիշները: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման առարկան և օբյեկտները: Բյուջետային հիմնարկ, բյուջետային համակարգ: Բյուջետային համակարգի և նրա սկզբունքների սահմանումը: Բյուջետային գործընթաց. Բյուջետային գործընթացի սուբեկտները. Բյուջետային ծախսերի դասակարգում

Թեմա 2 Ֆինանսահաշվարկային գործառնությունների հաշվառում Բյուջետային ծախսերի կարգադրիչները, դրանց կառուցվածքը և գործառնությունները: Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներ: Բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչներ. Բյուջետային հատկացումների իրականացման եղանակը. Բյուջետում իրականացվող փոփոխությունների տեսակները, կատարման կարգը: Գանձապետական համակարգի ստեղծման նպատակն ու անհրաժեշտությունը Գանձապետական համակարգի կառուցվածքը: Գանձապետական հաշիվներ: Հաշվառման ձևերը, հիշարար (մեմորիալ) օրդերների նշանակությունը: Փաստաթղթերի օրինակելի ձևերը և փաստաթղթավորումը հանրային ոլորտում: Գրանցումների տեխնոլոգիան և ձևերը հաշվապահական հաշվառման հանրային հատվածում: Հանրային ոլորտում հաշվապահական հաշվառման *հաշիվների պլան*

Թեմա 3 Ոչ ընթացիկ ակտիվների հաշվառումը Հանրային հատվածի կազմակերպությունների և հիմնարկների ոչ ընթացիկ ակտիվներ. հիմնական միջոցներ, փոքրարժեք արագամաշ առարկաների հաշվառումը: Հանրային հատվածի կազմակերպությունների հիմնական միջոցների բնութագիրը, դասակարգումը և գնահատումը: փոքրարժեք արագամաշ առարկաների բնութագիրը, դասակարգումը և գնահատումը: Հիմնական միջոցների մաշվածքի հաշվարկման կարգը և վերանորոգման հաշվառումը: Հիմնական միջոցների գնման կամ ձեռքբերման և օտարման կարգը:

14/Բ9-2 Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում և հարկում-2 (3 Կրեդիտ)

20 ժամ (14 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը

Թեմա 4. Աշխատանքի վարձատրության, դրամական օգնության, նպաստների գծով ծախսերի հաշվառում Աշխատանքի վարձատրության հաշվառումը հանրային հատվածի կազմակերպություններում: Բյուջետային հիմնարկներում աշխատանքի վարձատրության տեսակները: Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները: Աշխատանքի

վարձատրության հաշվարկման ու վճարման կարգը: Միջին ամսական աշխատավարձի հաշվարկման անհրաժեշտությունը: Պետական պաշտոն զբաղեցնողների, այդ թվում քաղաքացիական ծառայողների վարձատրության կարգն ու առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում: Դրամական օգնության, անաշխատունակության նպաստների գծով ծախսերի հաշվառումը: **Թեմա 5. Ծախսերի հաշվառումը** Հանրային հատվածում բյուջետավորման գաղափարը: Եկամուտների և ծախսերի բյուջետային հայտի կազմման սկզբունքները: Եկամուտների և ծախսերի նախահաշիվը, նրա բովանդակությունը և ձևավորման փուլերը: Նախահաշվի կառուցվածքն՝ ըստ ծախսային հոդվածների: Ֆինանսական պարտավորությունների ստանձնում և կատարում: Քաղվածք պայմանագրից: Ֆինանսական և տնտեսական գործընթացները հանրային հատվածում: Ֆինանսական և բյուջետային պարտավորությունների հաշվառումը: Ծախսերի հաշվառման կազմակերպումը: Եկամտային և ծախսային հաշիվների փակումը: Բյուջետային հիմնարկի արտաբյուջետային միջոցների հաշվառումը: Համայնքների բյուջեների հաշվառումը Արդիականացման գործընթացը հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգում: **Թեմա 6. Նյութերի և պաշարների հաշվառումը** Բյուջետային հիմնարկների նյութերի և պաշարների դասակարգումը, գնահատումը: Նյութերի և պաշարների հաշվառումը: Նյութերի և պաշարների պահեստի մուտքի ու ելքի ձևակերպումը:

Թեմա 7. Բյուջետային ծախսերի նախահաշվի կատարման արդյունքների հաշվառումը Հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվետվությունների կազմն ու կառուցվածքը ըստ հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտների: Հաշվարկային գործառնությունների և եկամուտների ստանդարտների հիմնական դրույթների բնութագրերը: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառումը Ֆինանսական արդյունքների ամփոփումն և հաշվետվություններում արտացոլումը

3.2.Կամընտրական դասընթացներ

Ֆինանսական հաշվետվություններ

Դասընթացի նպատակը.

Դասընթացը նպատակաուղղված է ներկայացնել ու մեկնաբանել հաշվապահական հաշվառման հիմնական սկզբունքներով պայմանավորված այն գլխավոր կանոնները, որոնց հիման վրա հաշվապահական հաշվառման մեջ իրականացված գործառնությունները արտացոլվում են ֆինանսական հաշվետվություններում լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի ձևերով ու կիրառման կարգով՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական ու նորմատիվ ակտերին համապատասխան:

Դասընթացը ներկայացնում է այն հիմնական գործառնությունները և սկզբունքները, որոնք պետք է կատարվեն, այն հիմնական փաստաթղթերն ու հաշվետվությունները, որոնց հիման վրա հաշվապահական հաշվառման մեջ իրականացված գործառնությունները պետք է

արտացոլվեն ֆինանսական հաշվետվություններում լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի ձևերով ու կիրառման կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պետական գրանցում ստանալու և գործունեություն ծավալելու պահից մինչև գործընթացի ավարտը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

/Գիտելիք/.

1. Իմանա, ճանաչի հաշվետվությունների ձևերն ու տեսակները, դրանց կառուցվածքն ու բովանդակությունը,
2. տարբերակի և պարզաբանի հաշվետվություններն՝ ըստ կառուցվածքի, ներկայացման պարբերականության և ժամկետների,
3. ներկայացնի հաշվետվություններում արտացոլվող տվյալների աղբյուրները,
4. իրականացնի համապատասխան պարբերականության հաշվետվությունում տվյալների լրացում անհրաժեշտ ժամկետներով,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. Խմբավորել և տեսակավորել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններն ըստ բովանդակության,
2. Բացատրել յուրաքանչյուր գործառույթից բխող հաշվապահական հաշվառման տվյալների հաշվետվությունում արտացոլման և լրացման կարգը,
3. Վերլուծել հաշվառման կարգը հաշվապահական հաշվառման տարբեր պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ և ամփոփ տեղեկատվության արտացոլումը հաշվետվություններում,
4. Բացահայտել հաշվետվություններում առկա տեղեկատվության այն հատվածը, որը հաշվետվությունների վերլուծական մասում ենթակա է պարզաբանման:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. Ինքնուրույն լրացնել ֆինանսական հաշվետվությունները և լուսաբանել նրանում ամփոփված տեղեկատվությունը,
2. Մեկնաբանել ֆինանսական հաշվետվությունների, մասնավորապես տարեկան փաթեթի տեղեկատվության վերլուծական մասի անհրաժեշտությունը և համապատասխան տվյալների մեկնաբանման կարգը,
3. Վերլուծել և ստուգել հաշվետվությունների հավաստիությունը,

4. Ներկայացնել հաշվետվությունների այն տվյալները, որոնց շնորհիվ հնարավոր է վերհանել կազմակերպության գործունեության մեջ առկա բացթողումների և թերությունների պատճառահետևանքային կապերի բացահայտումը՝ հետագայում դրանցից խուսափելու նպատակով:

14/Բ25-1 Ֆինանսական հաշվետվություններ-1 (4 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, սիրուզարք

Բովանդակություն

Թեմա 1. Հաշվետվություն, տեսակները Հաշվետվությունների ընդհանուր նկարագիրը, նպատակը, խնդիրները: Ֆինանսական հաշվետվությունների պարբերականությունը, օրինակելի ձևերը, ներկայացման կարգը, ժամկետները: **Թեմա 2 .** Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվետվություններ Հիմնարկի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների կառուցվածքը, լրացման կարգը, ժամկետները: **Թեմա 3.** Ֆինանսական հաշվետվություններ Ֆինանսական հաշվետվությունների կազմը, կառուցվածքը: Հաշվետվություն հիմնարկի բյուջետային մուտքերի վերաբերյալ(օրինակելի ձև 1): Հաշվետվության կառուցվածքը, լրացման կարգը **Թեմա 4.** Հաշվետվություն կազմակերպությունների ծախսերի և պարտքերի մասին (օրինակելի ձև 2) : Հաշվետվության կառուցվածքը, լրացման կարգը:

14/Բ25-2 Ֆինանսական հաշվետվություններ-2 (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակություն

Թեմա 5. Հաշվետվություն դեբիտորական, կրեդիտորական պարտքերի, պահեստավորված միջոցների մասին (օրինակելի ձև 4): **Թեմա 6.** Ծախսերի նախահաշվի կատարման հաշվեկշիռ (օրինակելի ձև 7): Հաշվետվություն հիմնարկի հիմնական միջոցների և նյութական արժեքների շարժի մասին (օրինակելի ձև 5 և 6): **Թեմա 7.** Հաշվետվություն կազմակերպությունների արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին (օրինակելի ձև 3): **Թեմա 8.** Հաշվետվություն կազմակերպությունների արդյունքային ցուցանիշների վերաբերյալ (օրինակելի ձև 8): **Թեմա 9.** Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն:

Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ

Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին ներկայացնել միջազգային ֆինանսական շուկաներում ձևավորվող և շրջանառվող ֆինանսական գործիքներ: Դասընթացի նպատակն է ուսուցանել ուսանողներին: հաշվապահական հաշվառումը բանկերում, որպես տնտեսական որոշումների կայացմանն օժանդակող և վերահսկողական գործիքի:
2. Ուսանողներին սովորեցնել ածանցյալ ֆինանսական գործիքներից միքանիսին, բացահայտել դրանց կիրառման նպատակները, ընձեռնած հնարավորությունները:
3. Ուսանողներին սովորեցնել ֆինանսական գործիքների օգնությամբ կառավարել ֆինանսական պորտֆելների ֆինանսական ռիսկերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Գիտելիք.

1. Ներկայացնել ֆինանսական շուկաները և շուկաների մասնակիցներին:
2. Ներկայացնել և թվարկել ֆինանսական գործիքները:
3. Ներկայացնել, թվարկել և դասակարգել ֆինանսական ակտիվները, ֆինանսական պարտավորությունները, սեփական կապիտալի գործիքները

Կարողություն.

1. Տարբերակել պարզ և բարդ տոկոսները, կարողանալ հաշվարկել դրանք և փոխարկումներ կատարել
2. Տարբերակել ֆինանսական գործիքները, ըստ տեսակների:
3. Տարբերակել արդյունավետ տոկոսադրույքը անվանականից, կատարել ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի հաշվարկ:
4. Դասակարգել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ըստ դրանց նպատակների, նշանակության:
5. Տարբերակել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ըստ դրանց շուկայթ-վնասի ձևավորման եղանակների:

Հմտություն.

1. Վերլուծել ֆինանսական համակարգում առկա գործիքներ ըստ դրանց առնաձնհատկությունների և կատարել հետևություններ:
2. Օգտվել տեղեկատվական տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, գրադարաններ, հաշվետվություններ):
3. Կիրառել ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում:

12/Բ38-1 Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ-1 (4 Կրեդիտ)

16 ժամ (12 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, ստուգարք

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1 Ժամկետային շուկաներ: Ժամկետային շուկայի նկարագիրը: Ժամկետային շուկայի մասնակիցները: Ֆինանսական ածանցյալ գործիքներ: Ֆինանսական ակտիվներ, պարտավորություններ, սեփական կապիտալի գործիքներ: Բարդ տոկոսի հաշվարկ: Պարտքային գործիքներ:

12/Բ38-2 Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ-2 (4 Կրեդիտ)

14 ժամ (10 ժամ դասախոսություն 4 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակություն

Թեմա 2 Ֆորվարդային պայմանագրեր: Ֆորվարդային պայմանագրերի ընդհանուր բնութագիրը: Մատակարարման գին, ֆորվարդային գին: Ֆորվարդային պայմանագրի գին: Երկրորդային շուկայում գտնվող պայմանագրի գնի հաշվարկ: Ֆորվարդային գին, ֆորվարդային պայմանագրի գին հայտնի դիվիդենդի դրույքով արժեթղթերի համար: Ֆորվարդային գին և ֆորվարդային պայմանագրի գին արտարժույթի համար: Աշխարհագրական արբերած, կրոս կուրսի վրա հիմնված արբիտրաժ: Ֆորվարդային պայմանագիր ապրանքների համար: **Թեմա 3** Ֆյուչերսային պայմանագրեր և սվոպներ: Ֆյուչերսային պայմանագրերի ընդհանուր բնութագիրը: Գների տատանման սահմանափակում: Ֆյուչերսային գին, բազիս, ապագա սպոտ գին: Ֆյուչերսային գնի որոշում, ֆյուչերսային պայմանագրերի գնանշում: Կարճաժամկետ տոկոսային ֆյուչերսներ: ԱՄՆ գանձապետական վեկսելի պայմանագիր: Երկարաժամկետ տոկոսային ֆյուչերսներ: Սվոպներ:

Հաշվապահական հաշվառումը և հարկումը բանկերում

Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին ներկայացնել հաշվապահական հաշվառումը բանկերում, որպես տնտեսական որոշումների կայացման օժանդակող և վերահսկողական գործիք:

2. Ուսանողներին սովորեցնել վարել հաշվապահական հաշվառումը բանկերում:
3. Ուսանողների սովորեցնել բանկային համակարգի հարկման առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Գիտելիք.

1. Ներկայացնել բանկերում հաշվապահական հաշվառումը, վերջինիս դերը և նշանակությունը տնտեսական որոշումների կայացման և վերահսկողության տեսանկյունից:
2. Ներկայացնել և թվարկել ակտիվային գործառնությունները ի հաշվառումը:
3. Ներկայացնել, թվարկել և դասակարգել կանխիկ դրամական միջոցները, վճարային փաստաթղթերը, թղթակցային հաշիվները, բանկային հաշիվները, ֆինանսական ակտիվները, ֆինանսական պարտավորությունները, ավանդային, և վարկային հաշիվները
4. Ներկայացնել բանկային համակարգում գործող տնտեսական նորմատիվները

Կարողություն.

1. Տարբերակել ակտիվային և պասիվային գործարքները:
2. Կատարել կանխիկ դրամական միջոցների, վճարային փաստաթղթերի, թղթակցային, բանկային հաշիվների հաշվառում:
3. Տարբերակել ֆինանսական ակտիվները՝ շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվողները, վաչառքի համար մատչելիները, մինչև մարման ժամկետը պահվողները, վարկեր և դեբիտորական պարտքերը, կատարել վերջիններիս հաշվառումը:
4. Տարբերակել ֆինանսական պարտավորությունները՝ շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվողները և մինչև մարման ժամկետը պահվողները, կատարել վերջիններիս հաշվառումը
5. Տարբերակել և հաշվառել ռեպո, հակադարձ ռեպո գործարքներ:
6. Տարբերակել հարկերի հաշվառում բանկերում, փոխկախակցելով այլ կազմակերպություններում կիրառվող հարկերի հաշվառման հետ:

Հմտություն.

1. Վերլուծել ֆինանսական համակարգում առկա հաշվառման առնաձնահատկությունները և կատարել հետևություններ:
2. Օգտվել տեղեկատվական տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, գրադարաններ, հաշվետվություններ):
3. Կիրառել ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում:

14/Բ11-1 Հաշվապահական հաշվառումը և հարկումը բանկերում-1 (2 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն 2 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Բովանդակություն

Թեմա 1 Ակտիվակին գործառնությունների հաշվառում: Կանխիկ դրամական միջոցների, վճարային փաստաթղթերի, թղթակցային, բանկային և ավանդային հաշիվների, թանկարժեք մետաղների և առարկայազուրկ մետաղական հաշիվների հաշվառում: Ֆինանսական գործիքների՝ Ֆինանսական ակտիվների հաշվառում, ճանաչում: ՀՀՄՍ 32/ ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքների ներակայցում և բացահայտում: Վարկերի և վարկային գծերի հաշվառում : ՀՀՄՍ 36: ՀՀՄՍ 21

14/Բ11-2 Հաշվապահական հաշվառումը և հարկումը բանկերում-2 (5 Կրեդիտ)

16 ժամ (10 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, քննություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 2 Պասիվային գործառնությունների հաշվառում: Ավանդների հաշվառում: Բանկերում կիրառվող հարկատեսակները:

Գործնական աշխատանքի թեմաներ

Թեմա 1 Կանխիկ դրամական միջոցների, վճարային փաստաթղթերի, թղթակցային, բանկային և ավանդային հաշիվների, թանկարժեք մետաղների և առարկայազուրկ մետաղական հաշիվների հաշվառում: **Թեմա 2** Ֆինանսական գործիքների Ֆինանսական ակտիվների հաշվառում, ճանաչում: **Թեմա 3** ՀՀՄՍ 32/ ՖՀՄՍ 7 : **Թեմա 4** Վարկերի հաշվառումը բանկերում, հաշվառման տարբերությունները այլ ոչ ֆինանսական կազմակերպություններում : **Թեմա 5** ՀՀՄՍ 36: **Թեմա 6** ՀՀՄՍ 21: **Թեմա 7** ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2 : **Թեմա 8** ՀՀ ԿԲ մասին ՀՀ օրենքը և ՀՀ օրենքը բանկերի և բանկային գործունեության մասին: **Թեմա 9** ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օտագործման կարգ: **Թեմա 10** ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ջնաձևավորման կարգ: **Թեմա 11** Ավանդների հաշվառումը բանկերում, հաշվառման տարբերությունները այլ ոչ ֆինանսական կազմակերպություններում: **Թեմա 12** ՀՀ օրենքը ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին: **Թեմա 13** ՀՀ օրենքը ֆինանսական համակարգի հաշտարարի մասին: **Թեմա 14** Բանկերում կիրառվող հարկատեսակները, ԱԱՀ-ի հաշվառումը և առանձնացված հաշվառման անհրաժեշտությունը:

Վճարահաշվարկային համակարգեր

Դասընթացի նպատակն է՝

Դասընթացի նպատակն է՝ áðëանողներին գիտելիքներ հաղորդել վճարահաշվարկային համակարգերի տեսակների, վճարահաշվարկային համակարգի գործունեության իրավական կարգավորման, քարտային վճարային համակարգերի, ու վճարահաշվարկային ծառայությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

վճարահաշվարկային համակարգի հասկացությունը, տեսակները, ՀՀ-ում գործող վճարահաշվարկային համակարգերը, դրանց գործիքներն ու միջոցները, քարտային վճարային համակարգեր, չեկերի տեսակները և դրանց օգտագործման եղանակները,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

պատկերացնել վճարումները և հաշվարկները, հասկանալ վճարումների և հաշվարկների միջև տարբերությունները, հասկանալ բանկերի և կենտրոնական բանկի կողմից վճարումների իրականացվող գործընթացները, տարբերակել վճարման եղանակները և ձևերը, բնութագրել միջազգային վճարային համակարգերի դերը և նրանց անդամակցելու եղանակները, ներկայացնել վճարահաշվարկային բնագավառը կարգավորող իրավական դաշտը:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

դրամավարկային քաղաքականությանը, վճարահաշվարկային համակարգի կառուցվածքի, վճարահաշվարկային համակարգի ձևերին, օգտագործման եղանակներին և կիրառման ոլորտներին, հաշվեհամարների կոդավորման սկզբունքներին, հաշվեհամարների, բանկային հաշիվների բացման կարգին, վճարման եղանակներին և ձևերին, վճարային գործիքների կիրառման սկզբունքներին,

14/Բ11-1_Վճարահաշվարկային համակարգեր-1_(2 Կրեդիտ)

12 ժամ (10 ժամ դասախոսություն 2 ժամ գործնական)

Ց-րդ կիսամյակ, սրուգարք

Բովանդակություն

Թեմա 1. Վճարահաշվարկային համակարգերի դերը տնտեսության մեջ և պատմական զարգացումը: Վճարահաշվարկային համակարգերի դերը տնտեսության մեջ, Պատմական զարգացման փուլերը: Վճարահաշվարկային համակարգի զարգացման պատմությունը:

Հայաստանի Հանրապետությունում Վճարահաշվարկային համակարգը և հիմնական հասկացությունները, զարգացման փուլերը և առանձնահատկությունները: **Թեմա 2.** Վճարահաշվարկային համակարգերի կառուցվածքը և Կենտրոնական Բանկի դերը վճարահաշվարկային համակարգում: Վճարահաշվարկային համակարգերի կառուցվածքը և կենտրոնական Բանկի դերը վճարահաշվարկային համակարգում: Վճարումների կատարման ժամկետները և դրանց հնարավոր կրճատման ուղղությունները: Վճարահաշվարկային համակարգի ծառայություններ իրականացնող կազմակերպությունները և նրանց օրենսդրական դաշտի կարգավորումները:

14/Բ11-2_Վճարահաշվարկային համակարգեր-2_(5 Կրեդիտ)

16 ժամ (10 ժամ դասախոսություն 6 ժամ գործնական)

9-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակություն

Թեմա 3. Վճարման եղանակները: Առևտրային գործարքներում կիրառվող վճարման ձևերը: Վճարման հանձնարարական: Հաշվարկներ Չեկերով: Մուրհակներ: Ինկաստներ: Ակրեդիտիվներ: Պլասիկ քարտեր: Այլ վճարային գործիքներ: **Թեմա 4.** Միջազգային վճարահաշվարկային համակարգեր: Միջազգային վճարահաշվարկային համակարգեր: S.W.I.F.T վճարահաշվարկային համակարգի գործունեությունը և կառուցվածքային առանձնահատկությունները: Միջազգային վճարահաշվարկային համակարգերի զարգացման հեռանկարները: Վճարահաշվարկային համակարգերի ցանցային տեխնոլոգիաների անվտանգության ապահովման գործընթացը:

4.Այլ կրթական մոդուլներ

4.1. Արտադրական պրակտիկա (12 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Արտադրական պրակտիկայի նպատակը

Արտադրական պրակտիկան ուսանողների մասնագիտական պատրաստվածության կարևոր բաղադրիչներից է, որը նրանց հնարավորություն է տալիս՝

1. Կիրառել տեսական գիտելիքները իրական գործնական միջավայրում, ուսումնասիրելով հաշվապահական հաշվառման բոլոր հիմնական գործընթացները:

2. Խորացնել հմտությունները հաշվապահական փաստաթղթերի ձևավորման, գրանցման և պահպանման մեջ՝ իրական կազմակերպություններում:
3. Ծանոթանալ հաշվապահական հաշվառման գործառույթներին կոնկրետ ոլորտներում (արտադրություն, առևտուր, ֆինանսական հաստատություններ և այլն):
4. Աշխատել հաշվապահական ծրագրերով՝ իրական տվյալների հետ:
5. Հասկանալ հարկային հաշվառման գործընթացները և դրանց կիրառությունը գործնականում՝ հարկային հաշվետվությունների պատրաստում և ներկայացում:
6. Կատարել ֆինանսական վերլուծություն և վերահսկողություն՝ հիմնվելով հաշվապահական հաշվետվությունների վրա:
7. Մասնակցել աուդիտի գործընթացին, ուսումնասիրել ֆինանսական հաշվետվությունների ստուգման մեթոդները:
8. Ապահովել մասնագիտական էթիկայի պահպանումը՝ աշխատելով իրական հաշվապահական թիմերի հետ:

Վերջնաարդյունքները

Արտադրական պրակտիկայի ավարտին ուսանողը պետք է կարողանա՝

- **Կազմել և վարել հաշվապահական փաստաթղթեր՝** համաձայն հաշվապահական ստանդարտների և իրավական պահանջների:
- **Գործարկել հաշվապահական ծրագրեր և ավտոմատացված համակարգեր,** տվյալներ մուտքագրել, մշակել և վերլուծել:
- **Վերլուծել ֆինանսական հաշվետվությունները** և ներկայացնել հիմնավորված առաջարկություններ կազմակերպության ֆինանսական կայունության վերաբերյալ:
- **Ծանոթանալ հարկային հաշվառման գործիքներին** և կիրառել հարկային օրենսդրության դրույթները հաշվետվությունների կազմման ժամանակ:
- **Մասնակցել ներքին աուդիտին,** ստուգել հաշվապահական գրանցումների ճշգրտությունը և համապատասխանությունը ստանդարտներին:
- **Իրականացնել տնտեսական հաշվարկներ,** գնահատել ծախսերի և եկամուտների դինամիկան, առաջարկել օպտիմալացման տարբերակներ:
- **Աշխատել հաշվապահական թիմի հետ,** կատարել գործնական հանձնարարություններ և պահպանել մասնագիտական էթիկան:

4.2. Ամփոփիչ ատեստավորում՝ ավարտական աշխատանքի պաշտպանություն (12 Կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Ամփոփիչ ատեստավորումը նպատակ ունի գնահատել ուսանողի՝ մասնագիտական գիտելիքները, հմտությունները և կարողությունները՝ հաշվապահական հաշվառման ոլորտում

Ավարտական աշխատանքի պաշտպանությունից հետո ուսանողը պետք է.

Գիտենա - ավարտական աշխատանքի հիմնական նպատակը և խնդիրները, կատարած աշխատանքը ներկայացնելու հմտությունները, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտությունները:

Կարողանա - շարունակել աշխատանքը ավարտական աշխատանքի թեմատիկայով:

Տիրապետի - ավարտական աշխատանքի հետ առնչվող այլ բնագավառների գիտելիքներին:

21	Գործարարության բարոյագիտություն և հոգեբանություն	3																v						
22	Վիճակագրություն	6		v					v														v	
23	Տնտեսամաթեմատիկական մոդելավորում	4		v					v														v	
24	Կոմերցիա և լոգիստիկա	3		v	v																		v	
25	Միկրոտնտեսագիտություն	4		v	v					v													v	
26	Կուրսային աշխատանք Միկրոտնտեսագիտություն	1		v	v					v													v	
27	Մակրոտնտեսագիտություն	4		v	v					v													v	
28	Սոցիոլոգիա	3																					v	
29	Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառումում	3											v					v						
30	Մենեջմենթ	4		v														v				v		
31	Մարքեթինգ	5		v																			v	
32	Աշխատանքի տնտեսագիտություն	2		v																			v	
33	Բնապահպանություն և բնօգտագործման տնտեսագիտություն	4		v																			v	
34	Տնտեսագիտության տեսություն 1	4		v	v																		v	

60	Գործավարությունը հաշվապահությունում	2	v															v						
61	Հաշվապահական հաշվառու-մը համակարգչային ծրագրերով	5												v					v					
62	Հանրային հատվածի կազմակերպություններ ի հաշվապահական հաշվառում և հարկում	5	v								v	v	v											
63	Ֆինանսական հաշվետվություններ	3	v											v										
	Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ	3			v															v				
	Հաշվապահական հաշվա-ռումը և հարկումը բանկերում	3									v	v												
64	Վճարահաշվարկային համակարգեր	3			v																			
65	Ուսումնական պրակտիկա	6									v	v	v	v						v	v			
66	Արտադրական պրակտիկա	24									v	v	v	v						v	v			
67	Ամփոփիչ ատեստավորում	8																				v		v

